

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

(Աստվածաբանական համալսարան)

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳՐՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԱՄԱՏԵՔՍԱԸ

ԾԵՐՈՒՆ ՍՐԿ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գիտական ղեկավար՝

պ. գ. թ. ԱՐՄԵՆ ԲՈԲՈՒՅԱՆ

Սբ. Էջմիածին 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	1
ԱՌԱՋԱԲԱՆ	2
ԳԼՈՒԽ Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	8
Տեղը կանոնում և տեքստաբանական առանձնահատկությունները	9
Ժամանակը	10
Հեղինակի հարցը	11
Կառուցվածքային առանձնահատկությունները.....	16
Գաղափարական յուրահատկությունները	22
Արձագանքներ և աղերսներ.....	25
ԳԼՈՒԽ Բ. ԴԱՏԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳՐՔԻՆ.....	27
Աշխարհաբաղաբանական իրավիճակը	27
Կլիմայական պայմանները.....	28
Տեղանունների հիշատակությունները.....	29
Իսրայելի ցեղերի բնակվայրերն ըստ Դատավորաց գրքի.....	30
Հարևան տարածաշրջաններ	56
Որոշ պարզաբանումներ	65
Էթնիկ խմբերի հիշատակությունները.....	67
Աստվածությունների հիշատակությունները	71
Ամփոփում	93
ԳԼՈՒԽ Գ. ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔԸ ԵՎ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ.....	94
ՎԵՐՋԱԲԱՆ.....	100
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	101
Հավելված Ա. Դատավորաց գրքում հիշատակվող քաղաքներն ու երկրները.....	101
Հավելված Բ. Դատավորաց գրքում հիշատակվող գետերը, լեռները և աշխարհագրական այլ վայրերը	104
Հավելված Գ. Դատավորաց գրքում հիշատակվող էթնիկ խմբերը.....	106
Հավելված Դ. Դատավորաց գրքում հիշատակվող աստվածությունները.....	108
Հավելված Ե. Դատավորաց գրքում հիշատակվող Իսրայելի ցեղերը	109
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	110

ԱՌԱՋԱԲԱՆ

Աստվածաշնչյան համատեքստում պատմությունը ներկայացվում է դրանում Աստծո ցուցաբերած մասնակցության տեսանկյունից: Աստվածաշնչյան պատմության և համատեքստի լավ իմացությունը աստվածաշնչյան հավատքի էության գիտակցման անհրաժեշտ պայմանն է, որտեղ անուրանալի է աստվածաշնչագիտական-հնագիտական հետազոտությունների կարևորությունը: Նախորդ երկու դարերին հնագիտական մի շարք գտածոներ լայն դուռ են բացում Աստվածաշնչի առավել հաստակ ընկալման համար:

1887թ. մի գյուղացի կին պարարտանյութ գտնելու նպատակով հողը փորելիս գտնում է **Թել-էլ-Ամառնայի** ավերակների նշանավոր «Նամականին», որը իր մեջ պարունակում էր եգիպտական թագավորական դիվանի 350 նամակ (կավե աղյուսների վրա): Այս նամակներից մոտ 150-ը ուղղված էին Պաղեստինում գտնվող հասցեատերերի կամ գրվել էին այնտեղ ու պարունակում են շատ կարևոր տեղեկություններ Ք. ա. 1400–1360 թթ. Պաղեստինի և Սիրիայի մասին:

1929 և 1960 թթ. միջև **Բաս-Շամրայի** (հնագույն Ուգարիթ) մոտ **Կ. Ֆ. Ա. Շեֆֆերի** գլխավորած պեղումների ընթացքում հայտնաբերվել են Ք. Ա. 14-րդ հարյուրամյակի պալատներ, տաճարներ (մեկը նվիրված Բաալին), ինչպես նաև **ուգարիթյան** թվով 350 տեքստեր, որոնք մեծ լույս են սփռել Հին Կտակարանի ուսումնասիրության ոլորտում:

1937-1949 թթ. **Կ. Լ. Բուլին** հետազոտել է **Հին Ալալախի** տարածքը հյուսիսային Սիրիայում, որի ընթացքում հայտնաբերվել են Ծննդոց գրքի ուսումնասիրության համար հույժ կարևոր և նահապետների ժամանակաշրջանով թվագրվող 456 աղյուսներ:

Այս և մի շարք այլ բացահայտումները կազմում են անհրաժեշտ տեղեկությունների ընդամենը մի փոքր մասը: Օրինակ՝ նույն Պաղեստինում պեղումների ենթակա 5000 հուշարձաններից պեղվել են ավելի քան 150-ը, իսկ մոտ 500 000 սեպագիր սալիկներից հրատարակվել մոտ 10%-ը¹, մինչդեռ հնագիտական հայտնաբերումները շատ կարևոր են աստվածաշնչյան պատմության բացատրման և իրադարձությունները վերանայելու համար, ինչը և մենք փորձել ենք անել Դատավորաց գրքի պարագային, հիմնվելով հնագիտական և պատմական բացահայտումների վրա:

¹ Sté u **У. Джексон**, *Изучение Библии в свете археологии*, https://azbyka.ru/izuchenie-biblii-v-svete-archeologii#obem_svidetelstv (22.06.2018, 22:41):

Թեմայի արդիականություն և գիտական նորույթ: Աստվածաշնչագիտությունը, հատկապես այժմ, ամենակարևոր ոլորտներից մեկն է աստվածաբանության մեջ, որը մեծ թափով առաջ է գնում և զարգանում: Բնական է, որ այս զարգացման ընթացքին լինեն տարբեր իրարամերժ կարծիքներ Սուրբ Գրքի այս կամ այն դրվագի ընդունման, մեկնության, հարազատության կամ ճշգրտության հարցում: Հնագիտական բացահայտումները, որոնք շարունակվում են մինչև այժմ, նորանոր տեղեկություններ են տալիս սուրբգրային իրադարձությունների վերաբերյալ: Ելնելով այս հանգամանքից մենք անդրադառնում ենք Դատավորաց ժամանակաշրջանին՝ հնագիտական հարուստ տեղեկատվական շտեմարանից ընտրելով Դատավորաց ժամանակաշրջանին վերաբերող տեղեկություններ: Նմանատիպ աշխատանքը հնարավորություն կտա մեր ընթերցողին Դատավորաց գիրքն ընթերցելիս առավել լավ պատկերացնել իրադարձությունները: Մեր կատարած աշխատանքը կարող է նաև պատմամշակութային հիմք ստեղծել տեքստի մեկնության համար:

Ուսումնասիրության մեթոդաբանություն: Մեր ընդհանուր աշխատանքը գրելիս կիրառել ենք մեթոդաբանական տարբեր մոտեցումներ՝ ելնելով յուրաքանչյուր գլխի առանձնահատկություններից և բովանդակային ուղվածությունից:

Առաջին գլխում կատարել ենք սուրբգրային և հնագիտական տվյալների, ինչպես նաև աստվածաշնչագետների շրջանում հայտնի կարծիքների համադրում, համեմատություն և ըստ անհրաժեշտության վերլուծություն:

Երկրորդ գլխում ներկայացնելով Դատավորաց շրջանի տեղանունները, էթնիկ խմբերը և այլ հիշատակություններ՝ կիրառել ենք հանրագիտարաններին բնորոշ կառուցվածք ու մեթոդաբանություն: Այս գլխում մեր պարզաբանումները հաճախ ուղեկցվում են Սուրբգրային տեղիներին հղելով, որով հնագիտական տվյալները փորձել ենք կապել Աստվածաշնչի հետ:

Իսկ ինչ վերաբերում է Իսրայելի կրոնական ընկալումների ներկայացմանը, դրանք համադրել և համեմատել ենք Մերձավոր Արևելյան ընկալումների հետ, ներկայացրելով նմանություններն ու տարբերությունները:

Երրորդ գլխում դարձյալ առաջնորդվել ենք կարծիքների համադրմամբ՝ փորձելով դրանք վերլուծել և կապել Դատավորաց գրքի իրադարձություններին:

Ընդհանուր առմամբ մեր կողմից կիրառված մեթոդաբանությունը կարող ենք անվանել միջմասնագիտական, քանի որ փորձել ենք համադրել մի քանի գիտությունների ընձեռած հնարավորությունները:

Գրականության տեսություն: Հին և Նոր Կտակարանների թեմաներով պատմական և հնագիտական ուղղվածությամբ բազում ուսումնասիրություններ են գրվել և դեռ կգրվեն: Սակայն մեր աշխատանքի յուրահատկությունն այն է, որ մենք այդ ուսումնասիրված հսկայական, սակայն քառասյին սփռվածությամբ նյութերից առանձնացրել և մեկտեղել ենք Ք. ա. 12-10-րդ դդ. միջակայքին վերաբերող տեղեկությունները և փորձել ենք դրանք ներկայացնել Դատավորաց գրքի լույսի ներքո: Սա մեզ թույլ է տալիս վերակառուցելու Դատավորաց ժամանակաշրջանի պատկերը, իհարկե այնքանով, որքանով որ պատմահնագիտական տեղեկությունները հնարավորություն են ընձեռում: Նմանատիպ տեղեկատվական հիմքեր հատկապես հանդիսանում են մեր կողմից կիրառված բառարաններն ու հանրագիտարանները, որոնք ավելի շուտ հողվածների ժողովածուներ են դասակարգված բառարանային սկզբունքով: Պատմահնագիտական պարզաբանման առումով, մեծապես օգտակար է եղել նաև «**Walton J. H., Matthews V. H. and Chavalas M. W., The IVP Bible Background Commentary, Old Testament**, InterVarsity Press, Downers Grove, Illinois, 2000» գիրքը, որը պատմամշակութային ուղղվածությամբ մեկնություն է:

Հայ իրականության մեջ աստվածաշնչագիտական թեմաներով ուսումնասիրություններից առավել հայտնի են Արշակ Տեր-Միքելյանի 1900 թ. Թիֆլիսում տպված «Ուսումն Սուրբ Գրոց» երկը, որը 2016 թ. ծանոթագրություններով վերահրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բյուզանդ Եղիայանի «Քննական Պատմութիւն Սուրբգրային Ժամանակներու» հինգ գրքով երկը տպագրված Անթիլիասում (Լիբանան) 1972-1976 թթ. ընթացքում և Զարեհ արք. Ազնավորյանի «Աստվածաշունչին վերաբերեալ ուսումնասիրութիւններ» աշխատությունը լույս տեսած 2007 թ. Անթիլիասում: Հնագիտությանն է առնչվում Գրիգոր Դարբինյանի աշխատասիրությամբ թարգմանված և 2014 թ. Մբ. Էջմիածնում տպագրված Նիկոլայ Վասիլիադիսի «Աստվածաշունչ և Հնագիտություն» 1996 թ. երկը: Դրանք, սակայն, ավելի ընդհանուր բնույթի ուսումնասիրություններ են և մասամբ էլ ներածական բնույթի: Մեր աշխատանքը գլխավորաբար այլ խնդիրներ է շոշափում և առանձնանում է վերոնշյալներից Դատավորաց գրքին հատկացված մասնավոր ուշադրությամբ: Հին Կտակարանի

վերաբերյալ ներածության գրքեր ունեն Ահարոն Կայայանը, որի գրքի բնօրինակը նախ գրվել է ֆրանսերենով, ապա թարգմանվել հայերենի ու տպագրվել 2004 թ. Գյումրիում և Գրիգոր Դարբինյանը, որի կազմած ներածությունը տպագրվել է 2000 թ.: Մեր աշխատանքը գրելիս չենք օգտվել վերջին երեք գրքերից, որովհետև մեր կողմից օգտագործված գրքերը քանիցս գերազանցում են վերոնշյալները:

Ուսումնասիրության համար օգտագործել ենք եբրայական (*Biblia Hebraica Stuttgartensia*, Elliger K. et Rudolph W. (ed.), Deutsche Biblestiftung Stuttgart, 1996. կրճատ՝ MT), հունական Յոթանասնից (*Septuaginta*, Rahlfs A. (ed.), Id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes, Editio minor, Duo volumina in uno, Deutche Bibelgesellschaft Stuttgart, 1979, կրճատ՝ LXX A (Ալեքսանդրյանի համար), LXX B (Վատիկանյանի համար) և լատինական Վուլգաթայի տպագրությունները (*Nova Vulgata*, Biblorum sacrorum editio, Libreria Editrice Vaticana, Vaticano, 1998 կրճատ՝ V): Հայկական սուրբգրային տեքստի ուսումնասիրման համար օգտագործել ենք Հովհաննես վրդ. Ջոհրապյանի կողմից 1805 թ. Վենետիկում, Արսեն վրդ. Բագրատունու կողմից 1860 թ. Վենետիկում, Ամերիկյան Սուրբգրային Ընկերության կողմից 1895 թ. Կ. Պոլսում տպված Աստվածաշնչի 1997 թ. վերահրատարակությունից, ինչպես նաև 1896 թ. արևելահայերեն «Արարատ» հրատարակության 2016 թ. վերատպումից և Էջմիածնի 2017 թ. արևելահայերեն նոր խմբագրությունից:

Կառուցվածքը: Մեր աշխատանքը բաղկացած է Բովանդակությունից, Առաջաբանից, երեք գլուխներից, Վերջաբանից, Հավելվածից և Օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը կրում է «Ներածական գիտելիքներ Դատավորաց գրքի վերաբերյալ» խորագիրը: Այստեղ փորձել են առանց մանրամասնությունների մեջ խորանալու անդրադառնալ գրեթե բոլոր ներածական հարցերին: Մեր նպատակն է նախքան համատեքստային վերլուծությանը անցնելը, ընթերցողին ծանոթացնել Դատավորաց գրքի հետ: Ընդ որում մեր կողմից կիրառած հեղինակների մոտ գրեթե բացակայում է թեմաների այն ընդգրկունությունը ինչն առկա է մեր աշխատանքում: Պետք է նշել, որ այս գլուխ կարող է ծառայել որպես դասագիրքը Հին Կտակարանի Ներածության շրջանակում:

Երկրորդ գլխուխը վերնագրել ենք «Պատմահնագիտական մոտեցում Դատավորաց գրքին»: Այս գլխում ուշ բրոնզի ավարտի և վաղ երկաթի (Ք. ա. 13-10-րդ դդ.) Հին Արևելքի աշխարհաքաղաքական և կլիմայական համառոտ ակնարկներից հետո, անդրադարձել

ենք Դատավորաց գրքում հանդիպող տեղանունների (երկրներ, քաղաքներ, լեռներ, գետեր և այլն), էթնիկ խմբերի և աստվածությունների բոլոր անունների պատմահնագիտական վերլուծությանը: Մեր աշխատանքը ընթերցելիս, պետք է հաշվի առնել, որ անունների պարզաբանման ժամանակ, նախապես նշել ենք դրանց արևելահայերեն տարբերակները, իսկ փակագծում եբրայերենից տառադարձությունը՝ հետագա շարադրանքի ընթացքում նախապատվությունը տալով այդ տառադարձումներին: Այդպես ենք վարվել, քանի որ մասնագիտական օտարալեզու գրականության մեջ այդ վայրերը նույնպես ներկայացվում են հիմք ընդունելով մասորական տեքստը: Ճիշտ է Կ. Պոլսի 1895 թ. և Արարատի 1896 թ. հրատարակությունները հիմնված են եբրայերեն և հունարեն բնագրերի վրա և դրանցում նույնպես առաջարկված են հայերեն մյուս հրատարակություններից տարբերվող և եբրայերենի վրա հիմնված տառադարձումներ, սակայն այդ երկու հրատարակությունները հին են: Բերենք որոշ օրինակներ: Վերոնշյալ երկու հրատարակություններում Հարես, Եմաթ, Այեղոն, Հորմա, Մասփա անունների փոխարեն առաջարկում ենք Խեռես, Խամատ, Այալոն, Խոռմա, Միցպա տառադարձումները: Չենք ցանկանում նսեմացնել այդ հրատարակությունների մեծ արժեքը, սակայն 20-րդ դ. կեսերին հայտնաբերված Սուրբ Գրքի եբրայերեն նոր տեքստերից և քննական նոր հրատարակություններից հետո հարկ է դրանք վերանայել: Մեր մոտեցման շրջանակներում բացառություն ենք արել մի քանի տարածված անունների համար (Երուսաղեմ, Երիքով, Հորդանան, փղշտացիներ և այլն), որոնք փոխելը նույնիսկ անհնար է, քանի որ դրանք վաղուց արդեն կիրառվում են նաև Աստվածաշնչից դուրս և արմատացել են հայ իրականության մեջ: Այս գլխի համար հարկ է իմանալ, որ Իսրայելին վերաբերող տեղանունները ներկայացրել ենք ըստ ցեղային բաժանումների՝ սկսելով Հուդայի ցեղից և ավարտելով Դանի ցեղով (այսինքն հարավից հյուսիս): Վերջում անդրադարձել ենք Հորդանանի արլ կողմում մնացած ցեղերից Գադին և Ռուբենին. Մանասեի ցեղի երկու բաժինները հարկ զգացվեց ներկայացնել միասին: Հարևան երկրները և դրանց առնչվող միավորները դասակարգել ենք վարընթաց շարժմամբ (Միջագետքից Եգիպտոս)՝ յուրաքանչյուր պետությունից հետո նշելով դրան առնչվող վայրը: Վերոնշյալ դասակարգումների համար հիմք ծառայել է մեր կողմից տարված ուսումնասիրությունը:

Երկրորդ գլխում բավականին արժեքավոր է նաև «Որոշ պարզաբանումներ» խորագրով ենթագլուխը, որտեղ մի քանի «անունների» հետ կապված բնագրային համեմատությունը և

վերլուծությունները հետաքրքիր բացահայտումներ են անում: Աստվածությունների թեման ներկայացնելուց հետո Բ գլուխը ավարտել ենք համառոտ Ամփոփմամբ:

Երրորդ գլխում Դատավորաց գիրքը ներկայացրել ենք Ք. ա. 12-րդ դ. նկատվող հինարևելյան ճգնաժամի համատեքստում և այն վերնագրել «Դատավորաց գիրքը և հինարևելյան ճգնաժամը»: Երկրորդ գլխում մեր ուսումնասիրությամբ Դատավորաց գրքի համար ստացած պատկերը փորձել ենք մեկնաբանել Հին Արևելքում ընթացող լայնամասշտաբ գործընթացների համատեքստում:

Եզրակացության մեջ ամփոփել ենք աշխատանքի արդյունքները և որոշ առաջարկություններ արել՝ ելնելով քննարկվող հարցադրումների վերլուծությունից:

Հավելված բաժնում ամփոփված են Դատավորաց գրքում հիշատակվող տեղանունների, էթնիկ խմբերի, աստվածությունների, Իսրայելի ցեղերի և նրանց «երկրների» (իմա՝ տարածքների) բոլոր կիրառությունները՝ ըստ գլուխների և համարների:

ԳԼՈՒԽ Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԴԱՏԱՎՈՐԱՅ ԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դատավորաց գիրքն իր անվանումը վերցնում է այն ազատարար կառավարիչ-դատավորներից (եբր.՝ **שֹׁפְטִים** šōpəṭîm), ովքեր Իսրայելը կառավորում էին սկսած Հեսու Նավեից մինչև Սամուել մարգարեն, երբ երկրում հաստատվեցին միապետական կարգեր: Հենց այս նույն անվանումն էլ կիրառված ենք տեսնում այլ հնագույն թարգմանություններում²: Սակայն «դատավոր» բառն իր իմաստով ժամանակակից պատկերացումներին չի համապատասխանում: Այն ոչ թե քաղաքացիական պաշտոնյա էր՝ վեճեր հարթող և կամ օրինազանցներին պատժող, այլ առաջին հերթին՝ ազատարար (Դատ. Գ 9, բառացի՝ փրկիչ, եբր.՝ **מֹשִׁיָּה** mōšîa'), Աստծու Հոգով լցված և կոչված ժողովրդին թշնամիների լծից ազատելու: Թերևս միայն դատավոր Դեբորան էր «դատական» գործունեություն ծավալում (Դատ. Դ 4-5): Հետաքրքրական է՝ դատավորներից ոչ մեկի համար չի կիրառվում «դատավոր» բառը, այլ միայն՝ դրա բայական ձևը: Այն վերապահվում է Տեր Աստծուն, ինչը կարելի է տեսնել Հեփթայեի խոսքի մեջ (ԺԱ 27): Արդյոք սա չի՞ խոսում այն գաղափարի մասին, որ Աստված է միակ ճշմարիտ Տերը, և Նա է կառավարում Իր ժողովրդին Իր «ներկայացուցիչների» միջոցով:

Միավված կլինենք, եթե ասենք, որ դատավորը լոկ մեկն էր, որը մեծ հեղինակություն էր վայելում: Սամսոնը բավականին անհրապույր անձ էր, դա երևում է սեփական հարսանիքի ժամանակ, երբ երեսուն մարդ են կարգում նրան հսկելու համար (ԺԴ 10-11): Եվ եթե օտարազգիների նման վերաբերմունքը սպասելի է, ապա յուրայիններինը՝ ոչ, երբ փորձում են Սամսոնին թշնամիների ձեռքը հանձնել՝ փոխարեն նրա շուրջը համախմբվելու (Դատ. ԺԵ 10-13): Սամսոնը մարդամոտ չէր և հակառակ այս բանին, Տերը նրան ընտրել ու առաջնորդում էր: Տիրոջ կողմից ընտրվելն ու առաջնորդվելն արդեն, բնորոշիչ գիծ է դատավորների համար³: Ընդարձակ պատմություններ են ներկայացվում Սամսոնի և Գեդեոնի կանչը նկարագրելու համար (Դատ. Զ 11-27, ԺԳ 2-25): Բացի այս, երբեմն կիրառվում են «Տիրոջ Հոգու» իջնելն արտահայտող արտահայտություններ (Դատ. Գ 10, Զ

² Յոթանասնիցում այն կոչվում է Κριταί (դատավորներ), Վուլգատայում՝ Iudicum (դատավորներ): Ըստ այսմ նաև հետագա թարգմանություններն են այս գրքի համար կիրառում «Դատավորներ» անվանումը:

³ Ի բաց առեալ Աբիմելեքին. նա ինքը իրեն մղեց իշխանության:

34, ԺԱ 29, ԺԳ 25 և այլն): Ընդհանուր առմամբ Տերն է «մեջտեղ հանում» (Դատ. Գ 15) այս մարդկանց, որ դատեն Իսրայելը: Միայն անհատակ է մի քանի դատավորների պարագան, որոնց մասին շատ բան չի ասվում: Կարծիք է հայտնվել, թե այս անձինք «խորը մտքի և բարոյական բարձր որակների» տեր մարդիկ են և իրենց դրսևորել են առանձին մանր խնդիրներ լուծելիս⁴: Մյուս առանձնահատկությունն այն է, որ Տիրոջից իշխանություն ստանալով, այն ժառանգաբար չէին փոխանցում, ըստ այդմ դա թագավորական իշխանություն չէր համարվում և սեփականություն չէր դիտարկվում (Դատ. Է 22-23):

Հանրագումարի բերելով վերը ասվածը՝ դատավորը անձ է՝ տղամարդ կամ կին, ընտրված Աստծու կողմից, թշնամիներին վտարելու և երկիրը «հանգստացնելու» համար: Նա թագավոր չէր և չէր հաստատում սեփական դինաստիան: Լցված էր Աստծու Հոգով, որը հնարավորություն էր տալիս որոշակի բարդ իրավիճակներ հաղթահարելու:

Տեղը կանոնում և տեքստաբանական առանձնահատկությունները

Քրիստոնեական աշխարհում Դատավորաց գիրքը մաս է կազմում Հին Կտակարանի պատմական գրքերի՝ տեղադրվելով Նավեի որդի Հետուի և Հուրի գրքերի մեջ: Հրեական կանոնում այն դասվում է Մարգարեական գրքերի Նախկին մարգարեներ բաժնում՝ Հետու և Ա Սամուել գրքերի միջև:

Եբրայերեն տեքստի 21 գլուխները պարունակում են 616 համար, իսկ Հունարենը՝ 621 համար:

Եբրայական տեքստը հիմնականում լավ է պահպանվել: Ինչ վերաբերում է Յոթանասնիցին, ապա առնչվում ենք Ալեքսանդրյան (A) ու Վատիկանյան (B) ձեռագրերի և, համապատասխանաբար, երկու ձեռագրային ընտանիքների հետ: Դատավորաց գրքի պարագային առավել նախընտրելի է Ալեքսանդրյան ձեռագիրը: Հետաքրքրական բացահայտում էր քուրմանյան (4QJudg^a) տեքստը, որտեղ, օրինակի համար, բացակայում է Դատ. Զ 7-10 անանուն մարգարեի հիշատակումը, հնարավոր է սա գրքի տեքստի մի առավել վաղ վիճակն է մատնանշում⁵:

⁴ St 'u **М. Мангано**, *Введение в Ветхий Завет*, Москва, 2007, стр. 161.

⁵ St 'u **Э. Ценгер**, *Введение в Ветхий Завет*, Москва, 2008, стр. 284, հսմտ. **Jr. M. Abegg, P. Flint, E. Ulrich**, *The Dead Sea Scrolls Bible, The Oldest Known Bible Translated for the First Time into English*, New York, 1999, pg. 208-209.

Ժամանակը

Գրքում ծավալվող դեպքերի ժամանակը պարզելը կախված է նրանից, թե ինչ թվագրում կտրվի Ելքին և Երկրի Նվաճմանը: Երկու թվագրում կա՝ վաղ և ուշ, կախված այն բանից, թե որ սուրբգրային տեղիի վրա ենք հիմնվում⁶: Եթե հաշվարկը սկսենք Գ Թագ. Զ 1-ից՝ Սողոմոնի մոտ մ.թ.ա. 970 թ. գահ բարձրանալուց, ապա Ելքի համար ստանում ենք մոտ մ.թ.ա. 1446 թ. («վաղ թվագրում»), իսկ Նվաճման համար մոտ մ.թ.ա. 1406թ., ըստ այսմ՝ Դատվորաց գրիքը տեղադրվում է ուշ բրոնզ և վաղ երկաթ I լայն շրջանում՝ մոտավորապես մ.թ.ա. 1400-1050 թթ. մեջ⁷: Բայց եթե հաշվի առնենք Ելք Ա 11-ը, որտեղ նկարագրված է Ռամզես փարավոնի (մոտ մ.թ.ա. 1279-1213 թթ.) քաղաքների շինարարությունը, ապա երկրի նվաճումը պետք է որ եղած լինի մ.թ.ա. 13-րդ դարում («ուշ թվագրում»), ուստի Դատվորացի համար մ.թ.ա. 1220-1050 թթ. է ստացվում⁸: Երկու թվագրություններն էլ ունեն իրենց առավել և թերի կողմերը, ուստի հավասարապես երկուսն էլ առաջ են քաշվում⁹: Մենք նախապատվությունը տալիս ենք ուշ թվագրմանը և դատվորաց ժամանակաշրջանը տեղադրում ուշ բրոնզի ավարտին և վաղ երկաթի I շրջանում: Այս տեսակետի օգտին է խոսում Հին Մերձավոր Արևելքում հնագիտական և պատմական տվյալների միջոցով վերականգնվող Ժամանակի ոգին, որին բնորոշ է հասարակությունների գերազանցականացում, քաղաքական անկայունություն, կլիմայական փոփոխություններ, էթնիկ տեղաշարժեր են¹⁰, որոնք առավելապես համապատասխանում են Դատվորաց գրքում նկարագրվող իրադարձությունների ընդհանուր տրամաբանությանը:

⁶ Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 150:

⁷ Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 150, 162: Հայ իրականության մեջ իրենց ուսումնասիրություններում վաղ թվագրումը պաշտպանել են Արշակ Տեր-Միքելյանը և Զարեհ արք. Ազնավորյանը, Դատվորաց ժամանակաշրջանը սահմանափակելով համապատասխանաբար 300 և 350 տարիներով, տե՛ս **Ա. Տեր-Միքելյան, Ուսումն Սուրբ Գրոց**, Էջմիածին, 2016, էջ 242, **Զարեհ արք. Ազնավորյան, Աստվածոշունչին վերաբերեալ ուսումնասիրություններ**, Անթիլիաս, 2007 թ. , էջ 178:

⁸ Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 150: Մեզանում Բուզանդ Եղիայանն է պաշտպանել այս մոտեցումը, տե՛ս **Բ. Եղիայան, Քննական Պատմություն Սուրբգրական Ժամանակներու**, Գիրք Ա, Անթիլիաս, Լիբանան, 1972, էջ 229;

⁹ Թվագրության խնդիրների մասին առավել մանրամասն տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 150-155:

¹⁰ Մարամանների համար հմմտ. **Drews R., The End of the Bronze Age: Changes in Warfare and the Catastrophe ca. 1200 B. C.**, New Jersey, 1995.

Հեղինակի հարցը

Գրքի հեղինակության հարցը բավականին բարդ է: Այդ մասին գրքում ոչինչ չի ասվում: Հրեական ավանդությունը գիրքը կապում է Սամուել մարգարեի անվան հետ¹¹: Վաստահեղի¹² է արդյոք այս ավանդությունը: Ցավոք բավականաչափ վկայություններ չկան: Սամուելի հեղինակությունը ինչո՞ւ չէ, հավանական է. այս մասին որոշ աստվածաշնչագետներ նույնիսկ բարձրաձայնում են¹²: Սակայն խնդիր է հարուցում այն փաստը, որ Սամուելը Թագավորաց գրքում հանդես է գալիս միապետության դեմ, պնդելով միայն Աստծո թագավոր լինելը, հակառակ այն բանին, որ ինքը թագավոր է օծում Սավուդին (Ա Թագ. Ժ), ապա նաև Դավթին (Ա Թագ. ԺԶ): Մի բան հստակ է. գիրքը պարունակում է մի շարք տեղիներ, որոնք վկայում են նրա վաղ շրջանում կազմված լինելու մասին, դրանց վերաբերյալ անդրադարձումներ տեսնում ենք մի քանի ուսումնասիրողների մոտ¹³: Այսպես՝ համաձայն Դատ. Ա 21 համարի, գրքի գրության ժամանակ հեբուսացիները դեռևս ապրում էին Երուսաղեմում, այսինքն սա գրվել է նախքան Դավթի կողմից քաղաքի գրավումը՝ նկարագրված Բ Թագ. Ե 6-10 համարներում: Դատ. Ա 29-ում խոսվում է այն մասին, որ Գազերում քանանացիներ են ապրում: Սա մեզ հուշում է, որ խոսքը մի ժամանակի մասին է, երբ դեռևս Փարավոնը Գազերը չէր նվիրել Սողոմոնին (Գ Թագ. Թ 16), իսկ դա մոտ մ.թ.ա. 970-ական թթ. է տեղի ունեցել¹⁴: Դատ. Գ 3-ի հիման վրա կարելի է ենթադրություն անել, որ Տյուրոսի փոխարեն Սիդոնն է փյունիկեցիների գլխավոր քաղաքը, ըստ այսմ, դեպքերը ծավալվում են նախքան մ.թ.ա. 12-11-րդ դդ.՝ նախքան Տյուրոսի գլխավոր քաղաք դառնալը¹⁵: ԺԷ 6, ԺԷ 13 և ԻԱ 25 համարները նույնպես ակնարկում են վաղ թագավորության ժամանակները, երբ «հիշողության մեջ դեռևս թարմ էին այդ ժամանակների օրհնությունները»¹⁶:

Խնդրահարույց է ԺԸ 30 համարը, որտեղ խոսվում է երկրի գերության մասին: Ո՞ր գերության մասին է խոսքը: Մ.թ.ա. 732թ. Թիզլաթպալասար Գ-ի կողմից տարածաշրջանը

¹¹ Տե՛ս *u* *Baba Bathra* 14b, հղումն ըստ՝ **B. G. Webb**, *Book of the Judges: An integrated reading*, Sheffield, 1987, pg. 17.

¹² Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 150, **G. L Archer-ը** պնդում է, որ գրքի կազմության աշխատանքները կա՛մ Սամուելին է կատարել, կամ էլ նրա աշակերտներից մեկը, *A Survey of Old Testament Introduction*, 3rd ed., Chicago, Moody, 1994, pg. 303, հղումն ըստ՝ **E. H. Merrill, M. F. Rooker, M. A. Grisanti**, *The World and the Word: An Introduction to the Old Testament*, Nashville, Tennessee, 2011, pg. 392.

¹³ Տե՛ս **M. F. Rooker**, նշվ. աշխ., էջ 380-381, **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 162-163, **Э. Янг**, *Введение в Ветхий Завет*, 1998, стр. 101.

¹⁴ Տե՛ս **M. F. Rooker**, նշվ. աշխ., էջ 380-381:

¹⁵ Տե՛ս **Н. В. Александрова, И. А. Ладынин, А. А. Немировский, В. М. Яковлев**, *Древний Восток*, Москва, 2008, էջ, 390, հմմտ. **В. И. Кузищин (ред.)**, *История Древнего Востока*, Москва, 2003, стр. 224-225.

¹⁶ Տե՛ս **Э. Янг**, նշվ. աշխ., էջ 101:

սարսափելի հարվածներ է ստանում, անգամ Դամասկոսի թագավորության հետ դաշինքը իրավիճակը չի փրկում. մեծ թվով հրեաներ գերության են տարվում¹⁷ (այս իրադարձությունները նկարագրված են Դ Թագ. ԺԵ 29-ում): Կամ միգուցե այստեղ խոսվում է մ.թ.ա. 722 թ. Սամարիայի գրավման, Հյուսիսային կամ Իսրայելի թագավորության անկման և բազմաքանակ ժողովրդի գերեվարման մասին¹⁸ (նկարագրությունը տե՛ս Դ Թագ. ԺԷ 13-24): Կամ էլ Դ Թագ. ԻԵ 18-22-ում պատկերված Երուսաղեմի 587թ. գրավումն ու գերությունն է ակնարկվում¹⁹: Պետք է խոստովանել, որ այս տեղեկությունների լույսի ներքո Դատ. ԺԸ 30-ի «մինչև երկրի գերության օրը» արտահայտությունը մշուշոտ է հնչում: Ուսումնասիրողներից ոմանք այս խնդիրն առաջարկում են լուծել ԺԸ 31-ից քայլ կատարելով: Այստեղ, կարծես թե, խոսվում է նույն դեպքի մասին, իսկ ժամանակային սահմանը Աստծու տան Սելովում գտնվելն է նշվում: Ա Թագ. Դ 1-11-ում ներկայացված է Աստծու Ուխտի տապանակի Սելովից պատերազմ տարվելը և գերեվարվելը: Ուստի փորձ է կատարվում նույնացնել «մինչև երկրի գերության օրը» (Դատ. ԺԸ 30բ) և «այնքան ժամանակ, որքան որ Աստծու տունը Սելովի մեջ էր» (Դատ. ԺԸ 31) արտահայտությունները²⁰: Նույնիսկ առաջարկվում է «երկիր» բառը փոխարինել «տապանակ»-ով²¹: Ըստ այսմ, հավանական է, որ գրքի տեքստը կազմվել է միապետության հաստատումից անմիջապես հետո, քանի որ Սելովը շուրջ մ.թ.ա. 1050 թ. է ավերվել²²:

Ինչպես տեսանք՝ վերը բերված պարզաբանումները, Դատավորաց մի քանի համարների վերաբերյալ, համոզիչ կերպով վկայում են գրքի վաղ թագավորության շրջանում կազմված լինելու մասին: Այս ամենից հետո Սամուել մարգարեի հեղինակությունը բավականին հավանական է թվում, գոնե ժամանակային առումով: Հավանական է, սակայն չենք կարող պնդել, թե գիրքն իր այսօրվա տեսքով Սամուելի գրչից է ծնվել: Դժվար է հերքել, որ խմբագրություններ և վերաձևակերպման միջոցով տեքստի վերաարժևորում չի եղել: Ուստի հեղինակության խնդիրը կներկայացնենք նաև հակառակ բևեռից:

¹⁷ Տե՛ս **В. И. Кузицин (ред.)**, նշվ. աշխ., էջ 229:

¹⁸ Տե՛ս **А. А. Немировский**, նշվ. աշխ., էջ 400, **В. И. Кузицин (ред.)**, նշվ. աշխ., էջ 229:

¹⁹ Տե՛ս **В. И. Кузицин**, նշվ. աշխ., էջ 229-230, **А. А. Немировский**, նշվ. աշխ., էջ 401:

²⁰ Տե՛ս **М. F. Rooker**, նշվ. աշխ., էջ 381:

²¹ Տե՛ս **Э. Янг**, նշվ. աշխ., էջ 101:

²² Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 163:

Գրական քննադատության արմատական ներկայացուցիցները գիրքը մեկ միասնական և ամբողջական գրական երկ չեն համարում, այլ հակված են կարծելու, թե այն ծագում է մի քանի սկզբնաղբյուրներից և հիմնական սկզբնաղբյուրը, որը մատնանշվում է այստեղ, երկրորդօրինականն է (Ք. ա. մոտ 550թ.)²³: Ուոլտեր Բրյուզմանը Դատավորաց պատմությունը հսկայական աստվածաբանական մեկնաբանության՝ երկրորդօրինական պատմության մասն է համարում²⁴: Բացի այդ քննարկվել է Յահվիստական (J) և Էլոհիստական (E) սկզբնաղբյուրներից ծագած լինելու հարցը²⁵, ընդ որում, ըստ Յանգի, սրանք ոչ թե կապվում են Հնգամատյանի J ու E սկզբնաղբյուրների հետ, այլ Սամուելի գրքի աղբյուրների հետ, և մոտավորապես մ. թ. ա. 650-600 թթ. դրանք միավորվել են մեկ երկում (JE)՝ անշուշտ խմբագրի (R^je) կողմից համաձայնեցման ենթարկվելուց հետո²⁶:

Մեկ այլ տեսակետի համաձայն, նախքան վերջնական տեսքն ընդունելը, Դատավորաց գիրքը նախապես ունեցել է պատմությունների բանավոր փոխանցման շրջան (Ք. ա. մոտ 12-10-րդ դդ.), ապա հետևել է մի շրջան, երբ դրանցից որոշները կամ էլ բոլորը գրի են առնվել (Ք. ա. 10-9-րդ դդ.), իսկ մինչ 6-րդ դ. տարվել են խմբագրական աշխատանքներ²⁷: Մի շարք աստվածաշնչագետներ փորձել են Դատավորաց գրքում մատնանշել ձևավորման վերոնշյալ շերտերը: Նրանք նույնիսկ առանձնացնում են նախաերկրորդօրինական, երկրորդօրինական և հետերկրորդօրինակ տեքստեր: Նշանակում է, որ միայն ասել, թե Դատավորաց գիրքը երկրորդօրինական խմբագրության արդյունք է, նշանակում է ոչինչ չասել:

Այսպես փոքր դատավորների (Դատ. Ժ 1-5, ԺԲ 8-15) և առանձին ցեղերից դուրս եկած ազատարարների պատմությունները երկրորդօրինական խմբագրության շրջանում համարվում են արդեն իսկ գոյություն ունցող պատումներ²⁸: Այն, որ Դեբորայի երգը Դատավորաց գրքի ամենահին հատվածներից է, բազում ուսումնասիրողներ են վկայում²⁹:

²³ Տե՛ս 'ու Յ. Янр, նշվ. աշխ., էջ 101:

²⁴ Տե՛ս 'ու W. Brueggemann, T. Linafelt, *An Introduction to the Old Testament*, 2nd edition, Kentucky, 2012, pg. 152.

²⁵ Դատավորաց գրքում վերոնշյալ սկզբնաղբյուրների հետ կապված առավել մանրամասն քննություն տե՛ս 'ու Rev. G. F. Moore, D.D., *A Critical and Exegetical Commentary on Judges*, 2nd edition, Edinburgh, 1908, pg. xxv- xxviii.

²⁶ Տե՛ս 'ու Յ. Янр, նշվ. աշխ., էջ 101, հմմտ. M. Манрано, նշվ. աշխ., էջ 165:

²⁷ Տե՛ս 'ու W. S. LaSor, D. A. Hubbard, F. W. Bush, *Old Testament Survey. The Message, Form and Background of the Old Testament*, Wm. B. Eerdmans Publishing Co., 2nd edition, 1996, pg. 131.

²⁸ Տե՛ս 'ու Յ. Ценреп, նշվ. աշխ., էջ 290, հմմտ. M. F. Rooker, նշվ. աշխ., էջ 381:

²⁹ Այն պարունակում է Եբրայերենի հին տարրեր, նաև օգտագործված են անվանումներ, որոնք Իսրայելի ցեղերի մասին խոսելիս, սովորաբար, չեն կիրառվում, ինչպես Մարոզ քաղաքը և Մաքիրը, վերջինս կապված է Մանասեի ցեղի հետ (հմմտ. Թվ. ԻԶ 33), տե՛ս 'ու D. M. Carr, *An introduction to the Old Testament: Sacred Texts and Imperial Contexts of the Hebrew Bible*, 2010, pg. 48, W. Brueggemann, նշվ. աշխ. էջ 154, W. S. LaSor, նշվ. աշխ.,

Կարծիք կա, որ Գ 12-Թ 55 համարներում պարունակվող պատմությունները քաղված են ազատարարների մասին հյուսիսսարայեյան գրքից, որը հավանաբար ստեղծվել է Ք. ա. 9-րդ դարում և երկու անգամ խմբագրության ենթարկվել (առաջինը Հոսիա թագավորի օրոք)³⁰: Այս ամենից հետո միայն 587թ. հաջորդած գերության շրջանում երկրորդօրինական խմբագրությունը հավելել է այլ պատումներ՝ այդ թվում Սամսոնի և Հեփթայեի պատմությունները: Նման մոտեցումը, իհարկե միանշանակ չէ և նախքան երկրորդօրինական խմբագրությունը ազատարարների մասին պատումների ժողովածուի գոյությունը նաև մերժվում է³¹: Սակայն այս դեպքում անգամ, ենթադրվում է, որ խմբագրման ժամանակ արդեն իսկ գոյություն ունեին Ավողի պատմության հիմնական մասը (Գ 16-26), Դեբորայի երգի հիմնական մասը (Ե), հատվածներ Գեդեոնի պատմությունից (Ձ 11ա, 18-24ա, Է 11բ, 13, 14ա, 15, 16-22, Ը 5-21), բռնակալ Աբիմելեքի պատմությունների շարքը (Ը 25-41, 50-54), Հեփթայեի պատմության համառոտ տարբերակը (ԺԱ 1-11ա), Սամսոնի պատմությունից նշխարներ և «փոքր» համարվող դատավորներին թվարկող մի պատառիկ (Ժ 1-5, ԺԲ 8-15)³²: Ուշադրության արժանի է նաև այն, որ այս «նախապես գոյություն ունենալու» բնորոշումը կարելի է հասկանալ նաև բանավոր հյուսվածքի համատեքստում: Մի շարք սուրբգրային տեղիների, այդ թվում և Դատ. Գ-ԺՁ գլուխների վերաբերյալ հավանական մոտեցում կա, ըստ որի, դրանք նախապես ունեցել են իրենց բանավոր «նախապատմություններ», որոնք հետագայում ներկայիս աստվածաշնչյան տեքստերի մաս են կազմել³³:

Ոսումնասիրողները գրքի երկրորդօրինական խմբագրությունը հատկապես ընդգծում են այն կառուցվածքի մեջ, որը նկատելի է դատավոր-ազատարարների պատմություններին նախորդող դրվագում (Դատ. Բ 11-23)³⁴: Այդ կառուցվածքը հստակաբար երևում է առաջին դատավորին ներկայացնող պատումում (Դատ. Գ 7-11) և փոքր-ինչ շեղումներով կրկնվում հաջորդ «մեծ» դատավորներին ներկայացնող դրվագներում (մինչև ԺՁ գլուխը): Այն պարունակում է հետևյալ տարրերը՝

Էջ 131, հմմտ **Յ. Ըենք**, նշվ. աշխ. 290-291: Նույնիսկ կարծիք կա, որ տեքստի գրության ժամանակը մոտ է դրանում նկարագրված դեպքերին, տե՛ս **Barry L. Bandstra**, *Reading the Old Testament. Introduction to the Hebrew Bible*, 4th edition, Wadsworth, Belmont, USA, 2009, pg. 231.

³⁰ Տե՛ս **Յ. Ըենք**, նշվ. աշխ., 290-291:

³¹ Տե՛ս **Յ. Ըենք**, նշվ. աշխ., էջ 291:

³² Տե՛ս **Յ. Ըենք**, նշվ. աշխ., նույն էջում:

³³ Տե՛ս **J. C. Paget and J. Schaper (ed.)**, *The New Cambridge History of The Bible, Vol. 1, From the Beginings to 600*, New York, 2013, pg. 117.

³⁴ Տե՛ս **Յ. Ըենք**, նշվ. աշխ., էջ 291:

խարայելացիների մեղքը (Դատ. Գ 7, 12, Դ 1, Զ 1ա, Ժ 6, ԺԳ 1ա), թշնամիների լծի տակ հայտնվելը (Դատ. Գ 8, 12բ-14, Դ 2, Զ 1բ, Ժ 7-9, ԺԳ 1բ), Աստծուն ապավինելը (Դատ. Գ 9ա, 15ա, Դ 3, Զ 6-7, Ժ 10), ազատարարի ասպարեզ «մեջտեղ հանվելը» (Դատ. Գ 9բ, 15բ³⁵), թշնամիներին ընկճելը (Դատ. Գ 10, 30ա, Դ 23-24, Ը 28ա, ԺԱ 33) և երկրի հանգստանալը (Դատ. Գ 11, 30բ, Ե 31բ, Ը 28բ): Հենց այս կառուցվածքն էլ Դատավորաց գրքին հաղորդում է իր գլխավոր յուրահատկությունները: Դրանք մեղանշման, պատժի և փրկության կրկնվող շրջափուլեր են: Դատավորաց պատմությունը չի ձգտում վերջնական կործանման, ինչը կարելի է տեսնել Թագավորաց գրքերում: Երկրորդօրինական խմբագիրը հերթական անկման առաջ հերթական փրկությունն է դնում: Բացի այդ, մեղքն այստեղ ժողովրդի ուսերին է ընկած, այնինչ Թագավորաց գրքերում ցցուն կերպով մատնանշվում է թագավորի մեղքը (Գ Թագ. ԺԲ 9-14, Գ Թագ. ԺԱ 1-13, Գ Թագ. ԺԵ 3, Դ Թագ. Գ 2 և այլն): Միայն ուշ երկրորդօրինական շերտում կարելի է նման տարրեր գտնել (Գ Թագ. Թ 6-9, ԺԴ 22-24, Դ Թագ. ԺԵ 7-23), արդյունքում մի շարք ուսումնասիրողներ Դատավորաց գրքի երկրորդօրինական այս խմբագրությունը համարում են բավականին ուշ կատարված³⁶: Հավելենք, որ երկրորդօրինական խմբագրության հետքեր ընդգծվում են նաև այն դրվագներում, որտեղ այլ ազգերի հետ շփումը պատճառ է հանդիսանում կուռքերի պաշտամունքին տրվելու (Դատ. Բ 1-5, Բ 20-Գ 6)³⁷:

Դատավորաց գրքի վերջին գլուխները (Դատ. ԺԵ-ԻԱ) գաղափարական առումով բավականին տարբերվում են Զ-Թ գլուխներից, որոնք աչքի են ընկնում հակամիապետական տրամադրություններով: Այստեղ քանիցս կրկնվում է՝ «Այդ օրերին Իսրայելում թագավոր չկար, և ամեն ոք անում էր այն, ինչ հաճելի էր իր աչքին» արտահայտությունը (Դատ. ԺԵ 6, հմմտ. ԺԵ 13բ³⁸, ԺԹ 1ա, ԻԱ 25բ): Այս ձևակերպումը իրար է միացնում երկու միմյանցից տարբեր պատմություններ: Հենց այստեղ էլ աստվածաշնչագետները ցույց են տալիս, այսպես կոչված, հետերկրորդօրինական խմբագրության հետքերը: Դանի ցեղի մասին պատմող հատվածում (Դատ. ԺԵ 1-ԺԸ 31)

³⁵ Որոշ կետեր, ձևակերպման առումով, բոլոր պատումներում չէ, որ հանդիպում են, սակայն սա չի նշանակում, թե դրանք բնավ չկան: Նման բովանդակությամբ տարրեր նկատելի են նաև այլ հատվածներում (Դատ. Զ 14, 34, ԺԱ 10, 11, 29, ԺԵ 15, ԺԶ 30), պարզապես ձևակերպումներն են տարբեր: Վերը (տեքստում) բերված համարները նման են թե՛ բովանդակային, թե՛ ձևակերպման առումով:

³⁶ Տե՛ս Զ. Ը. Ը. Ը. Ը., նշվ. աշխ., նույն էջում:

³⁷ Տե՛ս Զ. Ը. Ը. Ը. Ը., նշվ. աշխ., էջ 292:

³⁸ Մբ. Գրքի մատրական բնագիրը ԺԵ 13բ համարի միտքը, ԺԸ 1 համարում է տեղադրում, ինչը բովանդակության տեսանկյունից առավել ճիշտ է, հմմտ. MT ԺԸ 1: Այնուամենայնիվ տեքստում մենք թողեցինք մեր կողմից կիրառվող արևելահայերեն հրատարակության մեջ տեղ դրած տարբերակը:

Միքիայի կողմից կառուցված սրբարանի նկատմամբ կարելի է բացասական վերաբերմունք նկատել. Դատ. ԺԷ 6-ի լույսի ներքո նախորդ ԺԷ 2-5 համարները առավել բացասական երանգ են ստանում: Իսկ վերջին երկու գլուխներում Գաբաայի մասին նախատերկրորդորինական համարվող պատմության մեջ էլ հենց ուսումնասիրողները փնտրում են հետերկրորդորինական խմբագրություն³⁹: Դրանք հիմնականում նոտաներ են Սավուղի թագավորության դեմ. նախ Գաբաան Սավուղի քաղաքն էր (Ա. Թագ. Ժ 26, ԺԳ 1-3, 15, 16), Գադաադի Հաբիս բնակավայրը, որի վրա հիմնավորված հարձակում է կատարվում (Դատ. ԻԱ 8-14), սերտ կապերի մեջ էր գտնվում Սավուղի հետ (Ա. Թագ. ԺԱ 1-11, ԼԱ 11-13): Սրան հակառակ բեթղեհեմացի մարդու հյուրնկալությունը հակադրվում է Գաբաայի բնակիչների արարքին, որով Դավիթը հակադրվում է Սավուղին⁴⁰: Ռ. Օ'Քոննելը այն մոտեցումն է հայտնում, որ Դատավորաց գիրքը, Դավթի հետ առնչվող քաղաքները դրականորեն ներկայացնելով, դրական է բնորոշում հենց Դավթին, նույնը հակառակ ուղղությամբ գործում է Սավուղի և նրա հետ առնչվող շրջանակների պարագային⁴¹:

Կառուցվածքային առանձնահատկությունները

Անդրադառնանք այժմ գրքի կառուցվածքին: Ուսումնասիրողների կողմից Դատավորաց գիրքը գլխավորապես բաժանվում է երեք մասի⁴²: Մենք էլ կկատարենք գրքի նման կառուցվածքային վերլուծություն: Բայց նախ հարկ է բովանդակային առումով ուրվագծել Գիրքը⁴³:

1. Իսրայելը ձախողում է սրբազան պատերազմը (Ա 1-Գ 6)
 - Քանանացիներին չեն վերացվում (Ա 1-Բ 5)
 - Նախապատրաստություն դատավորների պատմության (Բ 6-Գ 6)
2. Դատավորների գործունեությունները (Գ 7-ԺԶ 31)
 - Գողոնիել (Գ 7-11)
 - Ավոդ (Գ 12-31)

³⁹ Տե՛ս Ս. Ը. Ըեքեր, նշվ. աշխ., նույն էջում:

⁴⁰ Հմմտ. M. F. Rooker, նշվ. աշխ., էջ 393:

⁴¹ Տե՛ս Robert H. O'Connell, *The Rhetoric of the Book of Judges*, Leiden, New York, Köln, 1996, pg. 312.

⁴² Տե՛ս T. Longman III, R. B. Dillard, *An Introduction to the Old Testament*, Michigan, 2009, pg. 138, W. Brueggemann, նշվ. աշխ. էջ 152, հմմտ. M. F. Rooker, նշվ. աշխ., էջ 383-384, հմմտ. Ս. Կր, նշվ. աշխ., էջ 102-106:

⁴³ Մեզ հանդիպած ուսումնասիրություններում բոլորն էլ գրքի գրեթե միանման բաժանում են առաջարկում, բնականաբար տարբեր վերլուծություններով, տե՛ս նախորդ տողատակը: Մենք նախապատվությունը տվեցինք M. F. Rooker, նշվ. աշխ., էջ 383-384-ում առաջարկված ուրվագծին, որի հիման վրա էլ վերը բաժանումներ ենք տվել:

- Դեբորա (Դ-Ե)
- Գեդեոն (Զ-Ը)
- Աբիմելեք (Թ)
- Թողա և Հայիր (Ժ 1-5)
- Հեփթայե (Ժ 6-ԺԳ 7)
- Եսեբոն (ԺԲ 8-10)
- Ելոն (ԺԲ 11-12)
- Աբդոն (ԺԲ 13-15)
- Սամսոն (ԺԳ-ԺԶ)
- 3. Իսրայելի ձախողման խորացումը (ԺԹ-ԻԱ)
- Քառս կրոնական կյանքում (ԺԷ-ԺԸ)
- Քառս հասարակական կյանքում (ԺԹ-ԻԱ)

Առաջին մասը՝ Դատ. Ա 1- Գ 6 համարները, կարելի է նաև նախաբան անվանել, քանի որ սա կարծես մուտքի խոսք լինի ողջ գրքի համար և ընթերցողին ներածում է դատավորաց պատմության մեջ: Առաջին հայացքից Դատ. Ա 1-Բ 23 համարները կրկնում կամ լավագույն դեպքում զուգահեռ են ընթանում Հեսուի գրքի հետ: Ըստ այսմ այս տեքստը խմբագրական հավելում են համարում, ինչը բավականին սուբյեկտիվ մոտեցում է համարում Էդուարդ Յանգը⁴⁴: Եվ իրոք, գիրքը սկսվում է Հեսուի մահը շեշտելով, ինչպես որ Հեսուի գիրքը սկսում է Մովսեսի մահվամբ: Ըստ այսմ երկու գրքերում խոսվում է նրանց մահվանը հաջորդող իրադարձությունների մասին, ուստի Դատավորաց գրքի վերոնշյալ համարները պետք է ընկալել որպես մի առանձին պատմություն, որը հաղորդում է, թե ինչ եղավ Հեսուի մահվանից հետո: Դատ. Ա 2-36 համարները համառոտ ներկայացնում են տիրող քաղաքական կացությունը, միաժամանակ ցույց են տալիս, որ ցեղերը շարունակում են Հեսուի սկսած նվաճումը: Դատ. Ա 2 համարը վկայում է, որ Հեսուի փոխարեն, առաջնությունը ստանում է Հուդայի ցեղը, որը մյուս ցեղերի համեմատությամբ, հիմնականում հաստատվում է իրեն հատկացված բաժնում (Ա 16-20): Մյուսներն, ընդհակառակը, ձախողվում են Երկրի նվաճման գործում⁴⁵: Տեսակետ կա, համաձայն որի,

⁴⁴ Տե՛ս Ե. Յանգ, նշվ. աշխ., էջ 102:

⁴⁵ Չնչին բացառությամբ միայն. Հովսեփի որդիները միասին գրավում են Լուգա քաղաքը: Բացի դրանից այն հատվածներում, որտեղ ասվում է, թե «քանանացիները բնակվեցին նրանց մեջ» (Ա 29-30) նշանակում է, որ ուժը Իսրայելի տվյալ ցեղի կողմն է պարզապես դեմ են գնում Աստծու հրամանին և չեն ոչնչանում նրանց:

այս ձախումները նկարագրված են այն բանի համար, որպեսզի ցրեն երկրի կայծակնային նվաճման տպավորությունները, որոնք ծնվում են Հեսուի գրքից⁴⁶:

Նախաբանի առաջին ենթամասը, ներկայացնելով Իսրայելի ռազմական անհաջողությունները, պատմությունը մատուցում է ժողովրդի տեսանկյունից⁴⁷: Հետաքրքրական է, որ կարելի է գուգահեռ տեսնել Դատ. Ա 16-36 համարներում ցեղերի հերթականության⁴⁸ և «մեծ» դատավորների, ըստ ցեղերի, ասպարեզ մտնելու մեջ: Գողոնիելը Հուդայի ցեղից էր, Ավողը՝ Բենիամինի, Դեբորան՝ Եփրեմի, Գեդեոնը՝ Մանասեի, Հեփթայեն՝ Գադաաղից (Մանասեի վիճակից), իսկ Սամսոնը՝ Դանից: Նախաբանում նշված մյուս ցեղերը՝ Զաբուդոնը, Նեփթաղիմը և Ասերը, պատերազմում էին Բարակի և Գեդեոնի հետ միասին:

Երկրորդ ենթամասը ներկայացնում է ժողովրդի բարոյական անկումը Աստծու տեսանկյունից⁴⁹: Այստեղ նույնպես հղում է կատարվում Հեսուի մահվանը (Բ 6-10), ընդ որում հակադրություն է ստեղծվում մի կողմից «Տիրոջ ծառա» Հեսուի ու նրան ժամանակակից սերնդի և մյուս կողմից հետագայի անհավատարիմ սերնդի միջև: Իսրայելացիները քանանացիներին չոչնչացրին, ընդհակառակը ընտրեցին նրանց հետ համակեցության ձևը (Բ 2, հմմտ. Գ 5-6), որով հրաժարվեցին կատարել Տիրոջ ծրագիրը. արդյունքում Աստված երես է թեքում նրանցից (Բ 3): Բ 11-19 համարները իրենց մեջ խտացնում են դատավորների պատմության (գրքի մեծագույն մասի) հիմնական գծերը: Դրանց մասին արդեն խոսել ենք, երբ ներկայացնում էինք ուսումնասիրողների կողմից առաջ քաշվող երկրորդօրինական խմբագրության տեսակետը. դրանք են՝ մեղք (Բ 11-13), Տիրոջ ցասումը (Բ 14-15), օտար կողոպտիչները և շրջակա թշնամիները (Գ 14), Տիրոջ ողորմությունը (Բ 18բ), փրկություն (Բ 16,18ա) և վերադարձ մեղքին (2.Բ): Բ 20-Գ 4-ը ընթացողին ներկայացնում են Տիրոջ ծրագիրը ստուգելու իսրայելացիների հավատարմությունը և սովորեցնելու պատերազմել: Իսրայելը կարիք ուներ սովորելու, որ իր հաջողությունները, այդ թվում և ռազմականը կախված են Տիրոջ կամքը կատարելուց⁵⁰: Գ 5-6-ն էլ կարծես պատասխան լինի այդ ծրագրին, ուստի նաև այս ամենի պատճառով են կատարվում հետագա իրադարձությունները:

⁴⁶ Տե՛ս **W. Brueggemann**, նշվ. աշխ., էջ 152:

⁴⁷ Տե՛ս **M. F. Rooker**, նշվ. աշխ., էջ 385:

⁴⁸ Հուդա, Բենիամին, Մանասե, Եփրեմ, Զաբուդոն, Ասեր, Նեփթաղիմ, Դան:

⁴⁹ Տե՛ս **M. F. Rooker**, նշվ. աշխ., էջ 385:

⁵⁰ Տե՛ս **Յ. Янн**, նշվ. աշխ., էջ 103:

Երկրորդ մասը գրքի ամենից ծավալուն հատվածն է և ընդգրկում է դատավորների գործունեությանն առնչվող բուն պատումները (Գ 7-ԺԶ 31): Այստեղ դատավորները բավականին տարբեր կերպ են ներկայացված: Առանձնապես վառ գույներով է պատկերված Իսրայելը օտար տիրապետությունից պատերազմով ազատող «Հոգով լցված» առաջնորդների խումբը (Գողոնիել, Ավոդ, Դեբորա և Բարակ, Գեդեոն, Հեփթայե): Սամսոնը, կարծես թե, ինքնուրույն պայքար է մղում թշնամիների դեմ: Աբիմելեքն էլ ձգտում է թագավորական իշխանության: Համեմատաբար քիչ է պատմվում «փոքր դատավորների» մասին: Նրանք այսպես են կոչվում, քանի որ նրանցից յուրաքանչյուրի մասին շատ քիչ է խոսվում: Հիմնականում տեղեկություն է հաղորդվում նրանց ծագման, սերունդների, գործունեության ժամանակի, մահվան և թաղման մասին: Պատումների ընդհանուր ետնապատկերի վրա առանձնանում է նաև Սամեզարի պատումը (Դատ. Գ 31): Կարծիք կա, որը հնարավոր է համարում նրա իսրայելացի չլինելը. հիմնավորումը ոչ սեմիթական ծագման անուն ունենալն է⁵¹: Մեկ այլ տեսակետ Գ 31 համարն ընդհանրապես հավելում է համարում: Քանի որ Դատ. Դ 1-ում «Ավոդը մահացավ» արտահայտությունն ավելի շատ է հանդիպում քան «Շամեզարը մահացավ» տարբերակը⁵², ուստի ենթադրվում է, որ նախապես Դ 1 համարը անմիջապես հաջորդել է Ավոդի պատումի վերջին համարին (Գ 30): Իսկ Դատ. Գ 31 համարը այստեղ հավելվել է անհրաժեշտաբար, քանի որ Ե 6 համարում խոսվում է Սամեզարի մասին, ուստի կարիք կար մինչ այս համարը ցույց տալու նրա գործունեությունը⁵³: Սակայն, ըստ մեզ, տեքստաբանական խնդիրը դեռևս բավարար հիմք չէ այս տեսակետը միանշանակ ընդունելու համար: Չի բացառվում, որ նա թշնամիների դեմ հանդես է եկել Ավոդի դատավորության շրջանում և ավելի շուտ «գործում էր ներքին խորը համոզմունքներից դրդված, վերցնելով առաջինը, ինչ հայտնվել էր ձեռքի տակ»⁵⁴: Բացի այդ եզրափակող «նա էլ փրկեց Իսրայելը» տողը, նրան Ավոդի հետ հավասար հարթության վրա է տեղադրում⁵⁵:

⁵¹ Տե՛ս **B. G. Webb**, նշվ. աշխ., էջ 133, հմմտ. **M. Z. Brettler**, *The Book of Judges*, London, New York, 2005, pg. 24.

⁵² Սբ. Գրքի եբրայերեն քննական բնագրում «Ավոդը մահացավ» արտահայտության համար անգամ տարբերություն չկա, տե՛ս MT Դ 1, Rahlfs-ի կազմած բնագրի LXX B Դ 1-ում նույնպես «Ավոդը մահացավ» արտահայտությունն է կիրառված, իսկ ահա LXX A Դ 1-ում տողատակում այն որպես հավելում է դրված: Մենք հակված ենք կարծելու, որ Դ 1- պետք է լինի՝ «Ավոդը մահացավ»:

⁵³ Տե՛ս **M. Z. Brettler**, նշվ. աշխ., էջ 23-25:

⁵⁴ **Չ. Янр**, նշվ. աշխ., էջ 104:

⁵⁵ Տե՛ս **B. G. Webb**, նշվ. աշխ., էջ 132-133:

Վերջին հաշվով դատավորների մասին պատմող պատումներից ամեն մեկն իր հերթին ներկայացնում է մի նոր «ռազմավարություն», որով իսրայելացիները պատասխանում են օտար ժողովուրդների կողմից նետված մարտահրավերներին, սպառնալիքներին և գայթակղություններին⁵⁶: Երկորդօրինական խմբագրության արդյունք համարվող մեղանչման, պատժի և մաքրման շրջափուլը, որը նախորդ ենթաբաժնում արդեն ներկայացրել ենք, գլխաորապես բնորոշ է այս երկրորդ մասին (Գ 7-ԺԶ 31): Այստեղ դատավորների պատմությունները առանձին-առանձին չենք քննի՝ նյութը չերկարելու համար:

Միայն կրավարարվենք ստորև ներկայացնելով դատավորների գործունեությանն առնչվող մի աղյուսակ:

Գ 8	Իսրայելը Քուսարսաթեմի (Քուշան-Ռիշատայմ) տիրապետության տակ	8 տարի
Գ 9-11	Ազատագրումը Գողոնիելի (Օթնիել) միջոցով և երկրի հանգստանալը	40 տարի
Գ 14	Եգդոմի (Էգլոմ) տիրապետությունը	18 տարի
Գ 20, 30	Ազատագրումը Ավողի (Եհուդ) միջոցով և երկրի հանգստանալը	80 տարի
Դ 2-3	Յաբինի (Յավին) տիրապետությունը	20 տարի
Ե 31	Ազատագրումը Դեբորայի (Դեվորա) ու Բարակի (Վառակ) միջոցով և երկրի հանգստանալը	40 տարի
Զ 1	Մադիամացիների տիրապետությունը	7 տարի
Ը 28	Ազատագրումը Գեդեոնի (Գիդրոն) միջոցով և երկրի հանգստանալը	40 տարի
Թ 22	Աբիմելեքի (Ավիմելեխ) կառավարումը	3 տարի
Ժ 2	Թողան (Տոլա) դատավորություն է անում Իսրայելում	23 տարի
Ժ 3	Հայիրը (Յաիր) դատավորություն է անում Իսրայելում	22 տարի
Ժ 8	Ամմոնացիների տիրապետությունը	18 տարի
ԺԲ 7	Հեփթայեն (Յիֆտախ) դատավորություն է անում Իսրայելում	6 տարի
ԺԲ 9	Եսեբոնը (Իվցան) դատավորություն է անում Իսրայելում	7 տարի
ԺԲ 11	Ելոնը (Էլոն) դատավորություն է անում Իսրայելում	10 տարի
ԺԲ 14	Աբդոնը (Ավդոն) դատավորություն է անում Իսրայելում	8 տարի
ԺԳ 1	«Այլագգիների» տիրապետությունը	40 տարի
Ե20, ԺԶ 31	Սամսոնը դատավորություն է անում Իսրայելում	20 տարի

Գրքի երրորդ մասում (ԺԷ-ԻԱ) ներկայացված են Իսրայելի կրոնահասարակական կյանքում տիրող անօրենությունները: ԺԷ-ԺԸ գլուխները, որպես առանձին ենթաբաժին, ներկայացնում են Միքայի կողմից եփուդ պատրաստելը և Դանի ցեղի բնակության վայր փնտրելը: ԺԹ-ԻԱ գլուխները պատմում են դևտացու ու իր հարձի նկատմամբ անբարոյական վերաբերմունքը և Բենիամինի ցեղի գրեթե ամբողջությամբ ոչնչացումը: Եթե երկրորդ մասը կարելի է բնորոշել որպես «թեոկրատիա», երբ Տերն Իր ընտրյալ դատավորների միջոցով առաջնորդում էր Իր ժողովրդին, ապա երրորդ մասում կանգնած

⁵⁶ Տե՛ս W. Brueggemann, նշվ. աշխ., էջ 156:

ենք անմիաբանության խնդրի առջև⁵⁷: Ընդհանուր առմամբ, այս մասում մի շարք դրվագներ ցույց են տալիս, որ Իսրայելը հեռացել էր Մովսիսական օրենքից: ԺԷ 1-2 համարներում ներկայացված է գողության օրինակ, ԺԷ 4-ում՝ ստախտության, ԺԷ 5 համարում՝ կռապաշտության, ԺԹ 22-ում՝ համասեռամոլության, ԺԹ 25-ում՝ անբարոյականության, ԻԱ 23-ում՝ առևանգման: Այս տեսարանների կողքին, տողերը, որոնք ընդգծում են այդ ժամանակաշրջանում թագավորի բացակայությունը (ԺԷ 6, ԺԷ 13, ԺԹ 1, ԻԱ 24), կարծես հաստատում են թագավորության անհրաժեշտությունը: «Պատմությունը պերճախոս կերպով վկայում է այն մասին, թե որքան անհրաժեշտ էր թագավորն այն ժամանակ»⁵⁸: Հարևանցիորեն նշենք, որ եբրայական կանոնում, նման տրամադրությամբ ավարտվող Դատավորաց գրքին հաջորդում է Ա Սամուելը, որտեղ ամրագրված է միապետության հաստատման պատմությունը:

Հարկ է նշել, որ գրքի երրորդ բաժինը ժամանակային առումով նախորդում է դատավորների մասին պատմություններին: Այն, որ Դանի ցեղը բնակության վայր էր փնտրում (ԺԸ 1), համեմատելի է այն տողերի հետ, որտեղ երևում է, որ Դանի ցեղը չկարողացավ նվաճել իրեն հատկացված տարածքը (Ա 34), այսինքն Դանի ցեղը բնակության վայր էր փնտրում, որովհետև իրեն հատկացված տարածքը չկարողացավ նվաճել: Բացի սրանից ԺԸ 27, 30 համարներից պարզ է դառնում, որ ԺԷ-ԺԸ գլուխներում գործող ղևտացին Մանասեի որդի Գերսոնի որդի Հովնաթանն է: Հետաքրքրականն է, որ վերոնշյալ տարբերակի փոխարեն հաճախ Մովսեսի որդի Գերսոմի որդի Հովնաթան տարբերակն (հմմտ. Ելք Բ 22, ԺԸ 3) է կիրառվում: Նշենք, որ մի շարք ուսումնասիրողներ նախապատվությունը տալիս են հենց վերջինին⁵⁹: Վուլգատայի և Յոթանասնիցի մի շարք տարբերակներ, ինչպես նաև անգլերեն մի շարք թարգմանություններ այս վերջին տարբերակն են կիրառում (հմմտ. LXX A և V Դատ. ԺԸ 30)⁶⁰: Իսկ եբրայերեն բնագրում (**מנשה** manaseh) անվան մեջ «նուն» (**נ**) տառը հարևանությամբ գտնվող տառերից վեր է և եթե դա դուրս թողնենք, ապա կարող ենք կարդալ Մովսես անունը (հմմտ. MT ԺԸ 30)⁶¹: Այս

⁵⁷ Հմմտ. **Протоиерей Александр Сорокин**, *Введение в Священное Писание Ветхого Завета*, Санкт-Петербург, 2002, стр. 79.

⁵⁸ Տե՛ս **Э. Янг**, նշվ. աշխ., էջ 106:

⁵⁹ Տե՛ս **Rev. G. F. Moore, D.D.**, նշվ. աշխ., էջ 400, **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 169, **B. G. Webb**, նշվ. աշխ., էջ 187:

⁶⁰ Ստորև ներկայացված է էլեկտրոնային հասցե, որտեղ ներկայացված են ԺԸ 30 համարի զանազան անգլերեն տարբերակներ <http://biblehub.com/judges/18-30.htm> (04.02.2018, 12:48):

⁶¹ Հմմտ. **B. G. Webb**, նշվ. աշխ., էջ 261:

երևույթին կա գաղափարական բացատրություն. քահանան կոապաշտության մեջ իր մասնակցությամբ արժանի է կոչվելու կոապաշտ արքա Մանսաեի թոռը, այլ ոչ թե Մովսես մարգարեի⁶²: Մեկ այլ բացատրությամբ, նուն տառը տողի վերևում է գրվել, տարընթերցումների երկու ավանդությունների միջև հավասարակշռություն պահպանելու համար⁶³: Այսպիսով երկրորդ տարընթերցումը, որը մեծ հավանականություն ունի, ԺԷ-ԺԹ գլուխներում ամփոփված պատմությունը ժամանակագրորեն առավել վաղ շրջանում է տեղադրում:

Եվս մեկ դիտարկում՝ այս անգամ ԺԹ-ԻԱ գլուխների վերաբերյալ: Ի 27-28 համարներում նշվում է, որ Աստծո Ուխտի տապանակի առաջ կանգնող քահանան Ահարոնի որդի Եղիազարի որդի Փենեեսն էր: Շնորհիվ այս վկայության՝ վերջին երեք գլուխներում նկարագրված դեպքերը նույնպես ավելի վաղ ժամանակային շրջանում են տեղադրվում: Վերը ներկայացված անախրոնիզմները դարձյալ վկայում են այն մասին, որ հեղինակը միտումնավոր կերպով իր գիրքն ավարտում է այդ պատմություններով՝ ի կարևորումն միապետության:

Գաղափարական յուրահաստկությունները

Դատավորաց գիրքը, միանշանակ, զուտ պատմական գիրք չէ: Միսալ կլիների կարծելը, թե մենք գործ ունենք մի գրքի հետ, որը սոսկ պատմում է հատված մի ժողովորդի պատմությունից, թե ինչպես էին կենցաղավարում իրենց խոստացված երկիրը նվաճելուց հետո, մինչ թագավորություն հաստատելը: Քաղաքական պատմության ետնապատկերի վրա, այն փոխանցում է մի շարք աստվածաբանական և գաղափարական կարևոր դասեր: Սակայն Դատավորաց գիրքն ընթերցողին համակարգված աստվածաբանություն չի փոխանցում, ավելի շուտ դա կարելի է անվանել մարդ-Աստված հարաբերությունների պատմություն⁶⁴:

Առաջինը, որ պետք է շեշտենք, մի միտք է, որին թերևս ամեն դատավորաց գիրքն ուսումնասիրող աստվածաշնչագետ անդրադառնում է: Խոսքն, իհարկե, «երկորդօրինական» կոչվող գաղափարական և աստվածաբանական կետի մասին է: Այս խնդրի շուրջ արդեն, որոշակի խոսել ենք, ուստի այստեղ գաղափարը կներկայացնենք ընդհանուր գծերով: Բանաձևը հստակ է՝ մեղքը հանգեցնում է պատժի, իսկ զոջումը՝

⁶² Տե՛ս **Rev. G. F. Moore, D.D.**, նշվ. աշխ., էջ 400-402:

⁶³ Տե՛ս **Rev. G. F. Moore, D.D.**, նշվ. աշխ., էջ 402:

⁶⁴ Տե՛ս **T. Longman III, R. B. Dillard**, նշվ. աշխ., էջ 142:

ազատության և հանգստի: Աստված Իսրայելի հարևան ժողովուրդներին օգտագործում է պատժելու համար իսրայելացիների կռապաշտությունը: Եվ երբ ժողովուրդը դառնում է դեպի Տերը, Նա ուղարկում է ազատարարների, նրանց Իր Հոգու զորությամբ լցնելով, որպեսզի նրանք կարողանան հաղթել թշնամիներին և դարձյալ խաղաղություն հաստատեն երկրի վրա: Այս դասերը հիմնականում դրական են, չնայած որ սկսում են կռապաշտությունից և անհավատարմությունից⁶⁵:

Գրքում հստակ նկատվում է այն միտքը, որ ազատության կամ փրկության համար պետք է հավաքական պայքար մղել: Դեբորան իր երգի մեջ 16-17 համարներում Ռուբենի, Գադի, Դանի և Ասերի ցեղերին քննադատում է, որ Իսրայելի ազատության համար թշնամիների դեմ պայքարի դուրս չեկան: Գեդեոնը Սոքքոթի և Փանուելի բնակիչներին պատժում է մադիանացիների առաջնորդներին հետապնդելու ժամանակ իրեն չաջակցելու համար (Ը 16-17)⁶⁶: Ազատությունը վտանգի մեջ է, եթե Իսրայելի ցեղերը միմյանց չեն աջակցում⁶⁷:

Ազատությունը Տիրոջ պարզն է: Նա է կանչում Իսրայելի ազատարարներին (Դ 6-7, Զ 14-15), նրանց «մեջտեղ հանում» (Գ9, 15), Իր Հոգին հանգչեցնում նրանց վրա (Գ 10, Զ 34, ԺԱ 29, ԺԳ 25 և այլն), Իր նշաններով կասկածներ ցրում (Զ 17-23, 36-40), վախ սփռում թշնամիների բանակներում (Է 22): Իսրայելը զրկվում է իր ազատությունից, երբ հեռանում է Տիրոջից ու պաշտում օտար աստվածներին (Բ 11-15, Գ 7, 8, 12-14, Դ 1, 2 և այլն) և կա նաև հակադարձ միտքը՝ կորուսյալ ազատությունը վերագտնվում է առ Տերը դառնալուց և աղաղակ բարձրացնելուց հետո (Գ 9, 15, Դ 3, Զ 6, 7 և այլն): Չնայած որ դատավորներն են անվանվում «ազատարարներ», սակայն հստակ երևում է, որ Աստված է իրական ազատարարը⁶⁸:

Դատավորաց գիրքը հակասական տրամադրություններ է հաղորդում թագավորական իշխանության նկատմամբ: Աբիմելեքի պատմության մեջ դա լավ է երևում (Դատ Թ): Կարծիք կա, թե համաշխարհային գրականության մեջ սա ամենից հզոր հակամիապետական ստեղծագործությունն է, թեև այստեղ հստակ չէ, թե պատումը վատ միապետի⁶⁹ դեմ է ուղղված, թե⁶⁹ ընդհանրապես միապետության⁶⁹: Իր եղբայրներին

⁶⁵ Տե՛ս **W. S. LaSor**, նշվ. աշխ., էջ 133:

⁶⁶ Հավաքական պայքարի գաղափարն առկա է նաև Դատ. ԻԱ 5, 8-11 համարներում:

⁶⁷ Տե՛ս **Э. Ценгер**, նշվ. աշխ., էջ 293:

⁶⁸ Տե՛ս **W. S. LaSor**, նշվ. աշխ., էջ 133:

⁶⁹ Տե՛ս **Протоиерей Александр Сорокин**, նշվ. աշխ., էջ 80, հմմտ. **Э. Ценгер**, նշվ. աշխ., էջ 294:

սպանելու միջոցով իշխանությունը զավթելու համար (Թ 1-6, 18-19), Աբիմելեքը, նզովվում է (Թ 20) և նրա համար համապատասխան պատիժ է սահմանվում (Թ 23, 24), ինչը և կատարվում է (Թ 56, 57):

Գրքի երրոդ մասում այլ գաղափար է ընդձվում, ինչի մասին մենք արդեն խոսել ենք: Եթե գերության շրջանում կատարված խմբագրությունը, անկում ապրած թագավորական իշխանության փոխարեն, որպես այլընտրանք ներկայացնում է դատավորներին, ինչն էլ Աստծո միակ ճշմարիտ թագավոր լինելու մասին է վկայում (հմմտ. Ը 23), ապա հետերկրորդօրինական խմբագրության շրջանում թագավորության վերածնման հույսն է արթնացնում⁷⁰: Ժամանակը, երբ թագավորներ չկային ամենաթողության շրջան կարծես լինէր: Այստեղից կարելի է միտք բխեցնել, որ թագավորական իշխանությունը, երկրի վրա լինելով բացարձակ, մի կողմից կարող է մարդկային ազատության սահմանափակման պատճառ դառանալ և մյուս կողմից գրավական լինել ազատության ձեռքբերման և պահպանման համար:

Հետաքրքրական մի գաղափար կարելի է առանձնացնել Գեդեոնի և Աբիմելեքի պատումներում: Հրամանատարներն ու առաջնորդները պետք է սեփական անձերով օրինակ հանդիսանան: Է 17 համարում Գեդեոնն իր մարդկանց գլուխն անցնելով ասում է. «Ի՛նձ նայեք և նո՛ւյնն արեք»: Նույնն էլ նրա որդին՝ Աբիմելեքը, Սյուքեմի (Շիսեմի) աշտարակի վրա հարձակվելիս ինքն է առաջին քայլն անում. «Տեսաք, թե ես ինչ արեցի. դուք էլ անմիջապես նույնը արեք» (Թ 48):

Դատավորների կյանքից կարելի է քաղել նաև հետևյալ գաղափարը՝ Տիրոջը նվիրվողը կարող է «օգտագործվել» Նրա կողմից⁷¹: Ճիշտ է, այդ մարդիկ իրենց կյանքում թույլ էին տալիս արարքներ, որոնք հազիվ թե արտահայտելու լինեին Տիրոջ կամքը: Բայց չպետք է մոռանալ, որ այնուամենայնիվ նրանք ծնունդներն էին իրենց ժամանակի: Երկար ապրելով հարևան ժողովուրդների հետ՝ ինչ-որ չափով նաև ազդվել էին նրանցից, ուստի գործում էին արարքներ, որոնք ժամանակակից քրիստոնեական աշխարհի ընդհանուր չափանիշներին չեն համապատասխանում: Բայց չէ՞ որ նրանք դաստիարակվել են ոչ այդ չափանիշների համաձայն, ուստի ժամանակակից ընթերցողը պետք է հաշվի նստի այդ մտքի հետ: Դատավորներն հաճախ իրենց սրտի անկեղծ մղումով քայլեր են գործում՝ ցույց տալու համար սուկ իրենց նվիրումը առ Աստված (օր.՝ Հեփթայեի ուխտը): Նրանց կյանքի

⁷⁰ Հմմտ. Զ. Ըբրեք, նշվ. աշխ., էջ 295:

⁷¹ Հմմտ. W. S. LaSor, նշվ. աշխ., էջ 133:

նման խոտելի դրվագներն էլ անգամ դաս են ընթերցողի համար, թե ինչպես չպետք է վարվել: Փոխարենը մի օգտակար դաս է նրանց նվիրումը, շնորհիվ որի Աստված նրանց «օգտագործում» էր ազատելու համար Իսրայելն իր կողոպտիչներից և թշնամիներից: Նրանք վատահում էին Աստծո ձայնին և հնազանդվում, որով առաջնորդվելով, ձեռք էին բերում երկրի համար բաղձալի «հանգստությունը», ապացուցելով, որ փրկությունը Աստծուն հնազանդությունից է բխում:

Արձագանքներ և աղերսներ

Վերջում անդրադառնանք Դատավորաց գրքի Հին Կտակարանի այլ գրքերում և Նոր Կտակարանում ունեցած աղերսներին: Ա Թագ. ԺԲ 8-12 համարները ուղղակիորեն հղում են կատարում ընդհանուր գրքին: Բ Թագ. ԺԱ 20-21-ը վերապատմում են Աբիմելեքի մահվան դրվագը (Դատ. Թ 50-55): Սաղմ. ՁԲ 10-12-ը հղում է Դատավորաց Դ և Ը գլուխներին: Իսկ Նեեմ. Թ 22-27 համարների նկարագրությունները համընկնում են դատավորաց ժամանակաշրջանի հետ: Պողոս առաքյալը Պիսիդիան Անտիոքում հնչեցրած քարոզի ժամանակ նշում է, որ նվաճման շրջանի և Սամուելի գործունեությունն սկսելու միջև, Իսրայելում դատավորներ կային՝ «շուրջ չորս հարիւր հիսուն տարի» (Գործք ԺԳ 19-20): Եբրայեցիներին ուղղված թղթում (ԺԲ 32) թվարկվում են Գեդեոնի, Բարակի, Սամսոնի և Հեփթայեի անունները՝ որպես հավատի օրինակներ: Բայց այստեղ առանձին չի պարզաբանվում, թե ինչպես պետք է հասկանալ այս հղումը: Թերևս ԺԲ 34 համարի «փրկուեցին սրի բերանից, զօրացան, տկարութիւնից յետոյ, կտրիճներ եղան պատերազմի մեջ, յաղթեցին օտար բանակների» արտահայտությունները կարելի է նրանց վերագրել: Աստծո կամքը կատարելու համար այս թերություններով լի մարդիկ էլնում էին գերակշռող թշնամու դեմ և հաղթող դուրս գալիս: Նման արարքի ընդունակ են կա՛մ հիմարները, կա՛մ էլ խորը հավատք ունեցողները, ինչի համար էլ Պողոս առաքյալը նրանց օրինակ է բերում⁷²:

Հավելենք, որ որոշ հեղինակներ փորձում են նմանություններ տեսնել Մարիամի ավետման (Դուկ. Ա 31) և Սամսոնի մորը հրեշտակի երևալու (ԺԳ 3-5), ինչպես նաև Եղիսաբեթի Մարիամին ուղղած օրհնության (Դուկ. Ա 42) և Դեբորայի Հայելին օրհնելու միջև (Ե 24)⁷³: Ինչ խոսք, բառերի մակարդակով նմանություն կարելի է գտնել, բայց պնդել,

⁷² Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 169:

⁷³ Տե՛ս **М. Мангано**, նշվ. աշխ., էջ 168:

որ դրանք ուղղակիորեն կապվում են Դատավորաց գրքին, արհեստական կլինի: Չէ՞ որ նույն բառերով կարելի է տարբեր գաղափարներ հայտնել:

ԳԼՈՒԽ Բ. ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԴԱՏԱՎՈՐԱՑ

ԳՐՔԻՆ

Աշխարհաքաղաքական իրավիճակը

Ուշ բրոնզի դարում (Ք. ա. 1550-1200 թթ.) Պաղեստինը Մերձավոր Արևելքի գլխավոր քաղաքական ուժերի համար պայքարի թատերաբեմի էր վերածվել: Բավականին տևական ժամանակահատված Եգիպտոսը իր տիրապետությունն էր հաստատել Պաղեստինում և փորձում էր գերիշխանություն հաստատել նաև Սիրիայի վրա, որտեղ հատվում էին կարևոր ցամաքային և ծովային առևտրային ճանապարհներ: Այստեղ նրա շահերը բախվում էին մեկ այլ հզոր տերության հետ: Խոսքը խուրիտական կոալիցիայի՝ «Միտանիի» մասին է, որը Միջերկրականից մինչև Տիգրիս գետը ձգվող մի հսկայածավալ տարածություն էր զբաղեցնում: Սակայն Ք. ա. շուրջ 1350-ական թթ. Միտանի քաղաքական թատերաբեմից դուրս է մղվում: Առիթից օգտվում է Խեթական թագավորությունը, որը սկսում է ընդարձակվել դեպի Անատոլիայի հարավ, որտեղ էլ Եգիպտոսի հետ պայքարի մեջ է մտնում Փյունիկիայի նավահանգստները և Եփրատի գետային առևտուրը իր ձեռքը զցելու համար: Բացի դրանից հավակնություններ էին ներկայացնում նաև Տիգրիսի վերին հոսանքում ձևավորված և աստիճանաբար դեպի Եփրատ տարածվող Ասորեստանը, ինչպես նաև Հարավային Բաբելոնիայում իշխանության գլուխ անցած կասիտները: Ահա այս քաղաքական ուժերի միջև ընթացող պայքարը Պաղեստինում քաղաքական կայունություն հաստատելու համար հույսեր չէր թողնում: Այս ամենին զուգահեռ Պաղեստինը շարունակում էր մնալ միակ գոտին, որով անցնում էին դեպի Եգիպտոս տանող ցամաքային առևտրի ճանապարհները:

Սրանով աշխարհաքաղաքական կյանքում քննարկվող տարածաշրջանը պահպանում էր իր կարևորությունը: Սակայն Ք. ա. շուրջ 1200-ական թթ., քաղաքական թատերաբեմում «Շովի ժողովուրդների» ի հայտ գալուն զուգընթաց, Պաղեստինի համար մղվող պայքարի հիմնական կողմերը դուրս են մղվում այդ պայքարից. Խեթական թագավորությունը անկում է ապրում, իսկ Եգիպտոսից սպասվող վտանգը չեզոքացվում է: Սովորաբար «Շովի ժողովուրդների» հետ է կապվում ոչ միայն Խեթական թագավորության կործանումը, այլև Սիրիայի և Պաղեստինի միջերկրածովյան ափի մի շարք քաղաքների ավերումը, այդ

թվում Ուզարիթի, Տյուրոսի, Սիդոնի, Մեզզիդոյի և Էքրոնի⁷⁴: Արդյունքում Վաղ երկաթի դարաշրջանում այս տարածաշրջանում քաղաքական կայունություն է հաստատվում, ինչի արդյունքում համեմատաբար փոքր քաղաքական ուժերը պետականություններ ստեղծելու հնարավորություն են ստանում: Այդպիսի քաղաքական ուժեր էին, առաջին հերթին, փղշտացիները, իսկ հետագայում՝ իսրայելացիները Սավուղի և Դավթի գլխավորությամբ:

Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Մերձավոր Արևելքում երեք հիմնական էկոլոգիական գոտիներ են առանձնացվում՝ պտղաբեր, կիսաչորային և չորային⁷⁵: Պտղաբեր տարածաշրջանները նպաստավոր են հողագործության համար, և այդտեղ տեղումների տարեկան միջին քանակությունը 305 մմ և ավելի է, կիսաչորային շրջաններում՝ 150-305 մմ է: Այն շրջանները, որտեղ տեղումների քանակությունը 150 մմ ցածր է, համարվում են չորային⁷⁶: Այդտեղ անհնար է ծավալել որևէ գյուղատնտեսական աշխատանք և միակ հնարավոր զբաղմունքը որսորդությունն ու անասնապահությունն է:

Պտղաբեր տարածքները միասին վերցրած նմանվում են կիսալուսնի և կազմում են Մերձավոր Արևելքի մոտ տասներորդ մասը: Այս շրջաններն ընդունված է անվանել «Բարեբեր մահիկ»: Պաղեստինի հյուսիսային բարեբեր շրջանները համընկնում են «Բարեբեր մահիկի» հարավային և արևմտյան մասերին:

Պաղեստինը հիմնականում ընկած է հս լայնության 30-33°-ում: Այլ կերպ ասած, կլիման այստեղ նախատրոպիկական է: Սակայն տարբեր տարածաշրջաններ ունեն կլիմայական տարբեր առանձնահատկություններ: Երկրի տարբեր մասերում տարբեր են նաև տեղումների քանակությունը, մթնոլորտային ճնշումը, քամիները, հողի բերրիության աստիճանը և բուսականությունը: Անձրևներ հիմնականում տեղում են հոկտեմբերից ապրիլ ամիսներին, իսկ մնացյալ ամիսները չորային են⁷⁷: Սա թերևս պայմանավորված է այն բանով, որ Լևանտի տարածաշրջանը գտնվում է երկու խոշոր կլիմայական գոտիների՝ միջերկրածովյան և Սահարոարաբական անապատային գոտիների միջև⁷⁸: Խոսելով

⁷⁴ J. H. Walton, V. H. Matthews and M. W. Chavalas, *The IVP Bible Background Commentary, Old Testament*, Downers Grove, Illinois, 2000, pg. 265.

⁷⁵ Տե՛ս Ս. Գ. Անատի, *Палестина до древних евреев*, Москва, 2007, стр. 18.

⁷⁶ Տե՛ս Ս. Գ. Անատի, նշվ. աշխ., նույն էջում:

⁷⁷ Տե՛ս Ս. Գ. Անատի, նշվ. աշխ., էջ 17:

⁷⁸ Հմմտ. S. K. Raphael, *Climate and Political Climate: Environmental Disasters in the Medieval Levant*, Leiden, Boston, 2013, pg. 13.

տեղումների մասին՝ հավելենք, որ Դատ. Դ 12-16 համարներում Սիսարայի պարտությունը կարելի կապել հենց եղանակային պայմանների հետ: Սիսարան պարտվեց, քանի որ Կիսոնի (Քիշոն) հեղեղատում անձրևների պատճառով ջրի մակարդակը բարձրացել և հեղեղել էր մոտակայքի դաշտավայրը: Նա տեղյակ չլինելով այդ մասին՝ իր կառքերը մտցրել էր այնտեղ ու դրանց անիվները թաղվել էին ցեխերի մեջ և շարքից դուրս եկել: Սրա պատճառով է նաև, որ Սիսարան փախուստի համար նախ իջնում է կառքից:

Կլիմայական առանձնահատկությունների և իհարկե ռելիեֆի պատճառով, գետերը այս տարածաշրջանում սովորաբար քիչ ջուր են ունենում, երբեմն նույնիսկ ամբողջությամբ ցամաքում են, բացի մի քանի գետերից, որոնցից ամենախոշորը և ջրառատը Հորդանան գետն է:

Ինչպես նշեցինք, տեղումների քանակությունները, տարբերվում են ըստ տարածաշրջանների: Հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք տեղումների քանակությունը նվազում է: Դրանք ամենից շատն են կենտրոնական լեռնային զանգվածներում: Գալիլիայում տեղումների միջին քանակությունը տարեկան (ձիշտ կլիներ ասելը անձրևաբեր ամիսներին) 1000 մմ է, Սամարիայում՝ շուրջ 810 մմ, Երուսաղեմում՝ մոտ 610 մմ, Մեռյալ ծովի (լճի) շրջակայքում 200 մմ: Մերձափնյա հովիտների հյուսիսային հատվածում տեղումները կազմում են շուրջ 600 մմ, իսկ հարավում 300 մմ: Հուդայի անապատում, տարեկան միջին տեղումները չեն գերազանցում 40 մմ-ը⁷⁹:

Տեղանունների հիշատակությունները

Այս ընդարձակ ենթաբաժնում անդրադառնալու ենք Դատավորաց գրքում նշված բոլոր տեղանուններին՝ երկրներին, քաղաքներին, առանձին աշխարհագրական վայրերին և կամ գետերին, լեռներին, հարթավայրերին, նույնիսկ աղբյուրներին: Մեր նպատակն այս ուսումնասիրությամբ հիմք ստեղծելն է, որ հայ ընթերցողը ավելի պատկերավոր ընկալի Դատավորաց գրքում կատարվող իրադարձությունները: Հավելվածում առանձին ցանկով դուք կգտնեք Դատավորաց գրքում թվարկվող բոլոր տեղանունները (Հավելված Ա և Բ): Այս ենթաբաժնում մենք նախ ներկայացնելու ենք Դատավորաց գրքում հիշատակվող Իսրայելի ցեղերի տարածքներն ընդհանուր կերպով և հետո անդրադառնալու ենք այն

⁷⁹ Տե՛ս **Власова Т. В.**, *Физическая география материков (с прилегающими частями океанов)*, в 2 частях, ч. 1. Евразия, Северная Америка, Москва, 1986, стр. 190-191, **Э. Авати**, նշվ. աշխ, էջ 17:

բնակավայրերին, որոնք վերաբերում են տվյալ ցեղին: Վերջում ներկայացնելու ենք Իսրայելի հարևան երկրները և ինչ-ինչ պարզաբանումներ են կատարելու որոշ անունների համար, որոնք Սուրբ Գրքի հայերենով ընթերցանության ժամանակ կարող են առաջին հայացքից տեղանուն թվալ:

Իսրայելի ցեղերի բնակավայրերն ըստ Դատավորաց գրքի

Առաջինը ներկայացնենք **Հուդայի ցեղը**, որին հատկացված տարածքի հարավային սահմանը սկսվում է Մեռյալ ծովի հարավային վերջավորությունից, Եղոմի սահմանով մինչև Ցին անապատը, այնտեղից մինչև Միջերկրական, որն արևմտյան սահմանն է: Արևելքում սահմանը Մեռյալ ծովի արևմտյան ափն է մինչև Հորդանանի գետաբերանը, որտեղից հյուսիսային սահմանը հս-արմ ուղղությամբ ձգվում է Երիքով, ապա անցնում է Երուսաղեմի հարավով, թեքվում դեպի Կարիաթ-Հարիմ, այնուհետև Հուդայի լեռներով հասնում է մինչև Թել Միքնե (Էքրոն): Հետո Սոռեքի հովտից հվ-արմ մինչև Միջերկրական⁸⁰:

Նախ նշենք, որ Շմավոնի ցեղին բաժին հատկացվում է Հուդայի ցեղի հետ միասին (Հեսու ԺԹ 1), այս իսկ պատճառով նրանք միասին են փորձում նվաճել իրենց հատկացված շրջանները (Դատ. Ա 17): Հուդայի բաժնի մեջ էին մտնում նաև Ազան, Աշկելոնը և Աշդոդը, որոնց մասին արդեն խոսել ենք: Հարկ է անդրադառնալ նաև Դատ. Ա 16-ում նշված և Հուդայի ցեղին առնչվող երկու աշխարհագրական հասկացությունների՝ **Հուդայի անապատ և Հուդայի երկրի հարավը**: Եթե Դատ. Ա 16 համարը կարդանք մասորական բնագրով կտեսնենք, որ «Հուդայի երկրի հարավը» արտահայտության փոխարեն Նեգեվ անունն է կիրառված, որը թարգմանվում է «հարավ», իսկ Հուդայի անապատն էլ հենց Նեգեվում է տեղադրվում: Վերջինս Հուդայի ամենահարավային շրջանն է, որի հյուսիսային սահմանը անցնում է Բերսաբեով (Բեեռ-Շեվա), իսկ հարավայինը Կադես-բառնեայով (Սին (Ցին) անապատում է)⁸¹:

Քերթոնը (Խեվոն՝ միություն, կոնֆեդերացիա) գտնվում է Հուդայի լեռնային հատվածում՝ ծովի մակարդակից շուրջ 1000 մ բարձրությամբ Թել Էր-Ռումեյդե բլրի վրա: Այն տեղակայված է Երուսաղեմից հարավ-հարավարևմուտք շուրջ 30 կմ հեռավորության վրա: Այստեղ հատվում են Լաքիշից (Լախիշ) դեպի արևելք և դեպի հյուսիս՝ Երուսաղեմ

⁸⁰ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 233:

⁸¹ Տե՛ս G. W. Bromiley (ed.), *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, Vol. 3, Michigan, 1986, pg. 511.

տանող հնագույն ճանապարհները: Այս փաստը վկայում է բնակավայրի ունեցած կարևոր նշանակության մասին: Շրջապատի աղբյուրները և ջրհորները բավականաչափ քանակությամբ ջուր են տրամադրում ձիթապտղի ու խաղողի մշակման համար և նպաստում են հողագործական-անասնապահական տնտեսության զարգացմանը: Արբահամի կողմից այստեղ գոհասեղան է կանգնեցվում (Ծննդ. ԺԳ 18), իսկ հետագայում էլ այն կիրառվում է որպես նախնիների դամբարան (հմմտ. Ծննդ. ԺԳ 18, ԻԵ 10): Այս վերջին փաստերը ընդգծում են տարածաշրջանի քաղաքական կարևորությունը, ուստիս Խելվոնը հանդես է գալիս նաև որպես Դավիթ թագավորի նստավայր, մինչ նա կգրավեր Երուսաղեմը (Բ Թագ. Բ 1-3): Ըստ Թվոց ԺԳ 23-ի Խելվոնը կառուցվել է Եգիպտոսի Տայանիս (Ցոան) քաղաքից 7 տարի առաջ: Դա եգիպտական քաղաք Dj'net-ն է, որը հույները Տանիս էին անվանում⁸²: Եթե Ցոանի կառուցումը վերաբերում է հյուքսոսների շրջանում ծավալված շինարարություններին, ապա Խելվոնը հիմնադրվել է մոտ Ք. ա. 1700-ական թթ.⁸³: Մեկ այլ մոտեցում հենվում է Ք. ա. 11-րդ դ. կեսերին Ցոանի Ստորին Եգիպտոսի մայրաքաղաք լինելու փաստի վրա: Այս նույն շրջանում գահակալել է Փուսենես Ա-ն, որը խոշոր շինարարական աշխատանքներ է ծավալել: Սակայն Խելվոնի առնչությամբ այստեղ փոքր-ինչ դժվարություն կա: Տեղանքը սկսել է բնակեցվել վաղ բրոնզի դարաշրջանում (մոտավորապես Ք. ա. 3-րդ հազարամյակից սկսած), միջին բրոնզի երկրորդ շրջանում այստեղ արդեն կար ամրացված քաղաք (Ք. ա. 2-րդ հազարամյակի կեսերին), իսկ իսրայելացիների կողմից Քանաանի նվաճման ժամանակաշրջանում այստեղ բնակություն են հաստատում զանազան ցեղեր, և վերջապես երկաթի դարում այստեղ ձևավորվում է մշտական բնակչություն (Ք. ա. շուրջ 12-րդ դար)⁸⁴: Ի վերջո դժվար է հստակ նշել, թե խոսքը որ շրջանի «շինարարությանն» է վերաբերում. հավանաբար Թվոց ԺԳ 23-ը վերաբերում է վաղուց գոյություն ունեցող բնակավայրի ամրացմանը: Ներկայումս Խելվոնի տեղում բնակելի քաղաք կա, ինչը խոչընդոտում է ավելի մանրակրկիտ պեղումների անցկացմանը: Խելվոնը Ենակի (Անակի) գավակների ցեղային կենտրոնն է եղել, որոնց պատկանել է նաև Դաբիրը (Դեվիո) (հմմտ. Հեսու ԺԱ 21, ԺԴ 15, ԺԵ 13): Դատ.

⁸² Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 45, 150:

⁸³ Տե՛ս G. W. Bromiley (ed.), *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, Vol. 2, Michigan, 1982, pg. 670.

⁸⁴ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 150:

Ա 10 համարից կարելի է հետևություն անել, որ Ենակի գավակները քանաանացիներ էին⁸⁵: Խեվրոնի նախկին անունը եղել է Քիոյաթ-Աոբա (Կարիաթարբոկ Սեփեր) (Դատ. Ա 10), որը նշանակում է «չորսի քաղաք», այսինքն՝ քաղաք, որը պատկանում է չորս անձանց⁸⁶:

Դաբիրը (Դեվիռ) ընկած է Խեվրոնից հվ-արմ Հուդայի լեռների հարավային եզրին: Երկաթի դարի սկզբին սահմանային ուղեկալ է եղել: Նույնացվում է Քիրբեթ Ռաբուդի հետ: Ընդհանուր առմամբ շուրջ 6 հա տարածք է զբաղեցնում: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են երկաթի դարին վերաբերող խեցեղենի մեծաքանակ բեկորներ, ինչպես նաև կաթի համար նախատեսված կիպրական գավաթի բռնակ, ինչը վկայում հարևան տարածաշրջանների հետ ունեցած հարաբերությունների մասին: Դեվիռի նախկին անունը Քիոյաթ-Սեփեր (Նամակաց քաղաք) է եղել (MT Դատ. Ա 11), որը թարգմանվում է «գրքի տուն» կամ «գրքի քաղաք»⁸⁷:

Բերսաբենն (Բեեռ Շեվա) քաղաք է Հուդայի անապատի հարավում: Անվանումը կարող է նշանակել «երդման ջրհոր» կամ «յոթի ջրհոր»⁸⁸՝ կախված, թե սուրբգրային որ պատումն է հիմք ընդունվում: Ծննդ. ԻԱ 28-31-ում Աբրահամը Աբիմելեքին յոթ էգ գառ է տալիս՝ ի վկայություն ջրհորի Աբրահամին պատկանելու, իսկ Ծննդ. ԻԶ 33-ում Իսահակը Աբիմելեքի հետ ունեցած վիճաբանության ժամանակ, իր ծառայի հայտնաբերած ջրհորը անվանում է «Երդումն»: Երկու պարագաներում էլ այդ վայրի Բեեռ Շեվա կոչվելը պարզաբանվում է երդման հանգամանքով (Ծննդ. ԻԱ 31, ԻԶ 31, 33): Ուստի երդման ջրհոր արտահայտությունն ավելի կիրառելի է, բայց մյուս իմաստն էլ չի բացառվում: Ներկայումս այն նույնացվում է երկու վայրերի հետ : Մեկը Վադի էս-Շեբայի մոտ գտնվող Քիրբեթ Բիռ էս-Շեբա անունը կրող ավերակներն են, որտեղ ջրհորներ էլ են հայտնաբերվել: Մյուսը Վադի էլ-Քալիլի և Վադի էս-Շեբայի միացման վայրից 4 կմ դեպի արևելք գտնվող բլուրն է՝ Թել էս-Շեբա անունով: Առաջինում հայտնաբերվել է երկաթի դարի, սակայն չպարսպապատված (աննպաստ հանգամանք), բնակավայրի հետքեր: Մյուսում հայտնաբերվել են երկաթի դարի հնագիտական 9 շերտեր (վաղագույնը Ք. ա. 12-րդ վերջ և

⁸⁵ Հետև ժԱ 21-22 համարները նաև հիշատակում են մյուս քաղաքները, որտեղ ապրում էին Ենակի գավակները:

⁸⁶ Բացի այս իմաստից, հնարավոր է նաև «հսկաների քաղաք» տարբերակը, տե՛ս <http://biblehub.com/hebrew/7153.htm> (10.04.2018, 13:24), վերջին գաղափարին կարելի է հանգել ընթերցելով MT Հետև ժԴ 15 համարը:

⁸⁷ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 227, G. W. Bromiley (ed.), *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, Vol. 1, Michigan, 1979, pg. 901-902.

⁸⁸ Եբրայերենում «երդվել» և «յոթ» բառերը նույն հիմքն ունեն, ուստի հնարավոր է երկու բացատրությունն էլ:

11-րդ դ. սկիզբ): Ավելի հավանական է երկրորդ տարբերակը, քանի որ Բիռ Էս-Շիվայի ամենահին շերտը 10-րդ դ. վեր չի անցնում: Խոսելով երկրորդի մասին՝ պետք է նշենք, որ դրա 9-րդ շերտում հայտնաբերվել են ժայռի մեջ փորված խորշեր և փոսեր, ընդ որում տարբեր մակերևույթներով դրանցից որոշները կիրառվում էին ցորենի պահպանության համար, որոշներն էլ՝ բնակության: 8-րդ շերտը 11-րդ դ. կեսերին է վերաբերում. ի հայտ են գալիս քարե հիմքերով շինություններ, իսկ ահա 7-րդում, որը վերաբերում է 11-րդ դ. ավարտին և 10-րդ դ. սկզբին, նկատել է մշակութային ծավալուն աճ: Նկատվում է շենքերի հատակագիծ (հիմնականում 4 սենյականոց տներ), որոնց ետևի պատերը միմյանց միանալով շրջանակում էին բլրի արտաքին սահմանը՝ ստեղծելով պաշտպանիչ համակարգ: Տների դռները ներսի կողմից բացվում էին դեպի մի ընդարձակ տարածք, որտեղ կարող էին քշել մանր և խոշոր եղջերավոր անասուններին: Դարպասին անմիջական հարևան երկու տներն ավելի շքեղ են: Պարսպից դուրս հայտնաբերվել է 9-րդ շերտին վերաբերող մի ջրհոր⁸⁹:

Արադը (Առադ) տեղակայված է Թելլ Առադի վրա՝ Բեր-Շեվայի հովտում (Նեգեվի հսարլ մասում), Խելվրոնից մոտ 32 կմ հարավ: Այս տեղանքը առաջին անգամ բնակեցվել է էնեոլիթյան շրջանում: Վաղ բրոնզի շրջանում շնորհիվ Եգիպտոսի հետ ստեղծված տնտեսական սերտ կապերի, Ստորին քաղաքը ընդարձակվում, պարսպապատվում և ծաղկում է ապրում: Իսկ արդեն երկաթի դարի ընթացքում մոտակա բլրի վրա առաջանում է չպարսպապատված Վերին քաղաքը (Ք. ա. 11-րդ դ.): Հնարավոր է, որ Վերին քաղաքի բնակեցումը կապված լինի կինեցիների այստեղ հաստատվելու հետ (Դատ. Ա 16): Այս մասին վկայում են, պաշտամունքայն կառույցի մնացորդները և տանը հավելված բակային տարածքը: Պեղումների արդյունքում Թելլ Առադում հայտնաբերվել են երկաթի դարի յոթ հնագիտական շերտեր, այդ թվում ամբողջ և տաճարային համալիր, կառուցված Ք. ա. 10-րդ դ.: Եգիպտոսի փարավոն Շեշնոկի հարձակման ժամանակ Առադը գրավվում է⁹⁰:

Սեփաթը (Յֆաթ), Նեգեվի բնակավայրերից մեկն է, որը գրավեցին Հուդայի և Շմալոնի ցեղերը: Գրավումից հետո Յֆաթը վերանվանում են Սատակում, իսկ ըստ մասորական բնագրի՝ Խոռմա, որը թարգմանվում է «կործանում, ավերում»: Ելնելով այս անվան առանձնահատկություններից հնարավոր է, որ այսպես կոչվեին այլ վայրեր նույնպես (հմմտ. MT Թվ. ԺԴ 45, ԻԱ 3): Այս պատճառով էլ Յֆաթ (Խոռմա) բնակավայրի ճշգրիտ

⁸⁹ D. N. Freedman (ed.), *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, Doubleday, New York, 1992, pg. 641-645.

⁹⁰ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 230, 243, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 227, 229:

վայրը հստակ չէ: Առաջարկվում է նույնացնել Թել էլ-Միլի բնակավայրի հետ՝ Բեն-Շեվայից 11 կմ հս-արլ կամ Թել Սասուսի հետ՝ Բեն-Շեվայից 11 կմ արլ⁹¹:

Բեզեկը (Վեզեկ) քաղաք է Հուդայի ցեղին հանձնված տարածքում, որի նվաճումը ներկայացված է Ա 4-ում: Այն նույնացվում է Քիրբեթ Բեզբայի հետ՝ Գեզեից 5 կմ հս-արլ: Բեզեկ անունով բնակավայր հանդիպում է նաև Ա Թագ. ԺԱ 8-11 համարներում, որը սակայն, նույնացվում է Շիեմից 25 կմ հեռավորության վրա՝ Բեթ-Շան տանող ճանապարհի վրա գտնվող Քիրբեթ Իբզիքի հետ⁹²:

Բենյամինի ցեղի տարածքները

Բենյամինի ցեղի բաժինը հիմնականում կազմում են **Երուսաղեմի** և **Բեթելի** միջև ընկած տարածքները: Բենյամինը հարավում սահմանակից է Հուդային, իսկ հյուսիսում՝ Եփրեմին: Հյուսիսային սահմանը ձգվում է մինչև Կարիաթ-Հարիմ: Արևելքում սահմանային է Հորդանանի գետաբերանը: Հարավային սահմանը անցնում է Հիննումի հովտով, ինչը փաստում է, որ Երուսաղեմը Բենյամինի տարածքում էր⁹³:

Բենյամինի քաղաքներից Դատ. Ա գլխում միայն **Երուսաղեմն (Յեռուշալայմ)** է հիշատակվում, որի նախկին անունը Հեբուս (Յեվուս) է եղել (հմմտ. Դատ. ԺԹ 10-11): Չնայած այն հողորդմանը, որ Հուդայի ցեղը գրավում է Երուսաղեմը (Դատ. 7բ-8), այնուամենայնիվ մյուս տեղիների տեղեկությունները հակառակն են պնդում (հմմտ. Հեսու ԺԵ 63 և Դատ. Ա 21): Բացի այս Դատ. ԺԹ 11-12 համարներից բխում է, որ քաղաքը դեռևս օտարազգիների տիրապետության ներքո է: Երուսաղեմի վերջնական գրավման պատիվը պատկանում է Դավթին (Բ Թագ. Ե 6-10): Հավանաբար իսրայելացիները գրավել էին քաղաքի Ստորին հատվածը և Դատ. Ա 7բ-8 համարներն էլ, ըստ երևույթին, դրա արձագանքն է⁹⁴:

Ռաման Բենյամինի տարածքում է և նույնացվում է Երուսաղեմից 8 կմ հս և Բեթ-Էլից 6 կմ հվ գտնվող, ներկայիս էր-Ռամ արաբական բնակավայրի հետ, որը գտնվում է 790 մ բարձրությամբ բլրի վրա, որտեղ կան սյուներ և անտիկ շրջանի շինություններից դեռևս

⁹¹ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 230, **G. W. Bromiley (ed.)**, *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, Vol. 4, Grand Rapids, Michigan, 1988, pg. 1191:

⁹² Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol 1, pg. 482.

⁹³ Հմմտ. **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 235-236:

⁹⁴ Հմմտ. *International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 1006, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 242: Թագ. Ե 7, 9 համարներից երևում է, որ Երուսաղեմում նույնպես քաղաքի երկմասնյա կառուցվածք է եղել՝ Ստորին քաղաք և Վերին քաղաք (Դավթի քաղաք կոչվածը):

չպեղված այլ ավերակներ⁹⁵: Նշենք նաև, որ ԺԹ 13 համարում առկա **Հռամա** բնակվայրը նույն Ռաման է:

Գաբաայի (Գիվրա՝ բլուր) տեղադրման համար երկու վայր է առաջարկվում. Ժամանակակից Ջաբան՝ Երուսաղեմից 10 կմ հս և Երուսաղեմից 5,5 կմ հս գտնվող Թել էլ-Ֆուլը: Սակայն Ջաբայի ամենից վաղ հնագիտական շերտը երկաթի II շրջանին է պատկանում, իսկ ահա Թել էլ-Ֆուլը հարուստ է երկաթի դարի I շրջանին պատկանող գտածոներով: Ըստ այսմ հիմնականում նախապատվությունը տրվում է այս վերջինին: Թել էլ-Ֆուլի հնագույն շերտում հայտնաբերվել են ամրոցի և այլ շինությունների հիմքեր, որոնք ավերվել են հրդեհից⁹⁶: Սավուդի գահ բարձրանալուց հետո այն մայրաքաղաքի կարգավիճակ է ստանում (Ա Թագ. Ժ 26):

Նուի (Ի 43) փոխարեն մասորական տեքստում գրված է **נִיבִּי**՝ *nūhāh*, որը թարգմանվում է «հանգստի վայր»⁹⁷: Ալեքսանդրյան տեքստում նման վայր չի հիշատակվում, իսկ Վատիկանյանում գրված է *Νουα*⁹⁸: Ամեն դեպքում պարզ է, որ այն գտնվում է Գիվրայի մոտակայքում և անվանումից էլ պարզ է, թե ինչ կիրառություն է ունեցել:

Ռեմոնի քարայր վայրը մասորական տեքստում կոչվում է **Ռիմոնի ժայռ (MT Ի 45)**: Գտնվում է Գիվրայի մոտ շուրջ 1,5 կմ դեպի արլ: Վերջինիս մոտ կան շատ ժայռեր, որոնցում կան փոքրիկ քարայրներ⁹⁹: Ըստ Ի 42, 45, 47 համարների, Ռիմոնի ժայռը պետք է որ գտնվեր անապատային տեղանքում:

Բաայթամարը (Բաալ Տամառ՝ «արմավենու տեր») գտնվում է Գիվրայի և Բեթ-Էլի միջև, որի ճշգրիտ վայրը հայտնի չէ: Հավանական է, որ լինի Քիրբեթ Աթարա, Ռաս Էտ-Թավիլ և Շարե ալ Գիբիյե վայրերից մեկը կամ էլ դատավորաց շրջանում հանրաճանաչ ուղենիշ¹⁰⁰:

Արմավենիների քաղաքը (Իռ (հա)Տմառիմ) Երիքովն (Յերիխա) է՝ հնագույն քաղաք-օազիս Մեռյալ ծովից մոտ 10 կմ հս-արմ հեռավորության վրա: Սկսած մեզոլիթից (Ք. ա. 9000-8700 թթ.) այստեղ բնակավայր է գոյություն ունեցել, որը վաղ բրոնզի III փուլում

⁹⁵ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 38-39, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 281:

⁹⁶ Տե՛ս **B. T. Arnold and H. G. M. Williamson (ed.)**, *Dictionary of the Old Testament Historical Books*, Illinois, 2005, pg. 330-331, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 273:

⁹⁷ Տեքստը ստացվում է այսպես. «հետապնդեցին հանգստի վայրից մինչև Գիվայի դիմացը»:

⁹⁸ LXX A՝ «ոտքի տակ տվեցին Մինչև Գաբաայի դիմացը»: LXX B՝ «հետապնդեցին նրան Նուայի ներքևից մինչև Գաբաայի դիմացը»:

⁹⁹ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 275:

¹⁰⁰ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 381, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 275:

պարսպապատվել է աղյուսով (Ք. ա. մոտ 2700 թ.): Օտար նվաճողների արշավանքների պատճառով երբեմն այստեղ կյանքը ընդհատվում էր (Ք. ա. մոտ 2500 թ.՝ վաղ բրոնզի III շրջանում և մոտ Ք. ա. մոտ 1350 թ.՝ ուշ բրոնզում): Հավանաբար Դատավորաց շրջանում ծառայել է որպես սահմանապահ ուղեկալ կամ քարավանների կայանատեղի ¹⁰¹: Երիքովը վերականգնվել է Ք. ա. մոտ 9-րդ դ. (Գ Թագ. ԺԶ 34):

Գաղգաղա (Գիլգալ՝ քարերի շրջանակ) անունով 3-5 բնակավայր է առանձնացվում. Դատավորացում հիշատակվում է Երիքովի (Յեռիխո) մոտ գտնվողը: Երբ իսրայելացիները առաջին անգամ անցնում են Հորդանան գետը, իրենց բանակած վայրում Հորդանանի չորացած հունից վերցրած 12 քար են կանգնեցնում (Հեսու Դ): Այստեղ նաև անապատում ծնվածների թլփատություն է լինում (Հեսու Ե): Գիլգալի հետ նույնացվող վայրեից մեկը գտնվում է Քիրբեթ Մեֆջիրից (Երիքովից 3 կմ հս-արլ) փոքր ինչ հյուսիս, որտեղից երկաթեդարյա խեցեղեն է հայտնաբերվել: Մյուսը Քիրբեթ Մեֆջիրի արևմուտքում է գտնվում: Չնայած որ գտածոները այնքան էլ վաղ ժամանակի չեն, չի բացառվում, որ Դատավորաց գրքում հիշատակվող Գիլգալը Քիրբեթ Մեֆջիրի մոտակայքում գտնվի, քանի որ այս Գիլգալը ավելի շուտ վայր էր քան բնակավայր (հմմտ. Դատ. Բ 1)¹⁰²:

Լացատեղ կամ Լալոնք (Բոխիմ) վայրի հստակ տեղադրությունը հայտնի չէ, բայց տեքստից պարզ է դառնում, որ գտնվում է Գաղգաղայի (Գիլգալ) մոտակայքում՝ Հորդանանից արմ¹⁰³: Տեղանքը Բոխիմ (Լացող մարդիկ) է կոչվել իսրայելացիների Տիրոջ հրեշտակի հանդիմանություններին ի պատասխան բարձրացրած լացի պատճառով (Դատ. Բ 1):

Հովսեփի որդիները՝ Մանասեի ցեղի մի մասը և Եփրեմի ցեղը նախքան իրենց առանձին բաժինները գրավելը միասին գրավում են **Բեթելը (Բեթ-Էլ)**¹⁰⁴, որը ըստ Դատ. Ա 23-ի (հմմտ. MT Հեսու ԺԶ 2, ԺԸ 13 և MT Ծննդ. ԻԸ 19) նաև **Լուգա (Լուգ)** էր կոչվում: **Բեթ-Էլը՝** ներկայիս Բեյթինը (Երուսաղեմից 16 կմ հյուսիս), Երուսաղեմի հյուսիսում գտնվող կենտրոնական լեռնային շրջաններով անցնող ճանապարհների խաչմերուկում էր գտնվում: Այն մտնում էր Բենյամինի բաժնի մեջ (Հեսու ԺԸ 22)¹⁰⁵ և փաստորեն իր կարևոր

¹⁰¹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 243:

¹⁰² Հմմտ. D. N. Freedman (ed.), *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, Doubleday, New York, 1992, pg. 1022-1023.

¹⁰³ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 246:

¹⁰⁴ Չնայած որ գրավում են միասին, բայց ի վերջո Բեթ-Էլը մնում է Եփրեմի ցեղին:

¹⁰⁵ Հեսու ԺԶ 2 և ԺԸ 13 համարներից երկուսն է, որ Բեթելը սահմանյին դիրքում էր Բենյամինի ու Հովսեփի որդիների տարածքների միջև, ուստիև գրավաան ժամանակ նման սահմանխախտումը հնարավոր էր:

դիրքով այն գրավում էր նաև այլ ցեղերի ուշադրությունը: Դեռևս հնագույն ժամանակներից այն ներկայանում է որպես պաշտամունքային կարևոր վայր (Մննդ. ԻԸ 18): Քաղաքը սկսել է բնակեցվել Ք. ա. 3200 թթ., բայց հետագայում լքվել է, բնակեցման հաջորդ հետքերը վերաբերում են Ք. ա. 2400-2200 թթ.: Ք. ա. շուրջ 1700 թ. այստեղ պարսպապատ մեծ քաղաք է եղել, որը Ք. ա. 16-րդ դ. կեսերին ավերվել և Ք. ա. 1550-1200 թթ. վերականգնվել ու երկու անգամ ավերվել է: Այստեղ միջին բրոնզին վերաբերող պաշտամունքային կառույցի հետքեր են հայտնաբերվել: Վաղ երկաթի դարում այստեղ եղել է գյուղատիպ բնակավայր առանց պարիսպների¹⁰⁶: Բաժանված թագավորությունների շրջանում այն որպես պաշտամունքային կենտրոն կարևոր դերակատարում է ստանում (Գ Թագ. ԺԲ 29-33): Հարևանցիորեն նշենք, որ ըստ Դատ. Ա 26-ի, իսրայելացիների կողմից քաղաքը գրավելուց հետո, տեղի բնակիչներից մեկը համանուն քաղաք է հիմնում **Քետիմ երկրում (Էռեց (հա)Խիտիմ՝ Խեթերի երկրում)**, որով ակնարկվում է Նոր իսթական թագավորությունը հաստատված Սիրիայի և Լիբանանի տարածքներում, որոնք մտնում էին նախկին Խեթական կայսրության մեջ:

Եփրեմի ցեղի տարածքները

Եփրեմի ցեղին վիճակված տարածքը հարավում Երիքովի հյուսիսով ձգվում է դեպի արևմուտք մինչև Գազեր, ապա Միրջերկրական (վերջինը անվանապես): Այստեղից հս դեպի Սյուքեմ, որտեղից դեպի հվ-արլ մինչ Քիրբեթ Թանա էլ-Ֆոքա: Եփրեմի քաղաքներից **Գազերը (Գազեռ)** Ռամլեի մոտ գտնվող ներկայիս Թելլ էլ-Ջեզերն է, որը 13 հա տարածությամբ բլուր է Այալունի հովտի արևմտյան կողմում: Պեղումների արդյունքում այստեղ 25 շերտ է բացվել, որոնցից վաղագույնը հասնում է մինչև ուշ էնեոլիթյան շրջան (Ք. ա. 3400-3300 թթ.): Էլ-Ամառնայի նամակներից երևում է, որ Գազերը նույնպես եղել է Եգիպտոսի տիրապետության ներքո: Այն հիշատակվում է նաև Մեռնեփթա փարավոնի հաղթական արձանագրության մեջ (Ք. ա. 1207 թ.): Չնայած որ Նվաճման ժամանակ Գազեռի զորքը ջախջախվում է, բնակավայրը չի գրավվում և քանաանացիները շարունակում են բնակվել այստեղ (Հեսու ԺԶ 10): Վաղ երկաթի դարի գտածոները վկայում են տեղանքի քանաանցիներվ բնակեցման մասին, սակայն երկգույն խեցեղենը և որոշ այլ տարրեր վկայում են նաև փղշտացիների ներկայության մասին: Այստեղ լայնատարած պեղումներ են անցկացվել, արդյունքում պարզվել է, որ միջին բրոնզի ընթացքում ամուր

¹⁰⁶ St 'u *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 118, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 220, 244, հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, pg. 710-711.

պարսպապատված քաղաքը այրվել և ավերվել է հավանաբար Եգիպտոսի կողմից: Ուշ բրոնզի շրջանում դարձյալ պարսպապատվել է 3,5-4 մ հաստությամբ և 4,5 մ բարձրությամբ պասսպով¹⁰⁷:

Եփրեմի լեռ (Հառ Եֆռայիմ) կոչվածը Հորդանանի արևմուտքում գտնվող լեռնային շրջանն է: Բարձրագույն կետը 900 մ է: Բերրի հողի և բավականաչափ անձրևների շնորհիվ այս տարածքը հարմար է հողագործության համար (մինչև այժմ էլ): Ժայռոտ կիրճերը տարածաշրջանը վերածում են բնական ամրոցի: Այստեղ են ապրել դատավորներ Դեբորան և Թողան¹⁰⁸:

Միրթան (Մեիռատա) հավանաբար գտնվում է Հորդանանի հովտում՝ Երիքովից հյուսիս՝ Եփրեմի բաժնում: Առաջարկվում է նաև Մովաբում գտնվելու վարկածը, սակայն սա ըստ մեզ անհավանական է, հազիվ թե Ավողը (Եհուղը) Մովաբի արքային սպանելուց հետո ապաստաներ հենց այդ նույն երկրում¹⁰⁹:

Բեթփարայի (Բեթ Բառա) տեղը հայտնի չէ, սակայն ենթադրվում է, որ պետք է լինի Հորդանանի հովտում՝ Հորադանանի և Վադի Ֆառայի միջև¹¹⁰:

Հավանաբար **Արիմ (Առումա)** բնակավայրը գտնվել է Էլ-Ուրմե լեռան գագաթին, որտեղ հայտնաբերվել են ամրացված բնակավայրի հետքեր¹¹¹:

Սյուքեմը (Շիեմ) նույնացնում են ներկայիս Թելլ Բալատայի հետ Երուսաղեմից 56 կմ հս՝ Նաբլուսից արլ: Գարիզիմ և Գեվալ լեռների հարևանությամբ գտնվելու համար երկար դարեր Շիեմի տարածքը սուրբ է համարվել: Շիեմը նաև կարևոր առևտրական քաղաք էր, ուստի պատահական չէ, որ արդեն միջին բրոնզի I շրջանում հիշատակվում է եգիպտական տեքստերում: Ամառնայի տեքստերում Շիեմը Քանաանի գլխավոր և ծաղկուն քաղաքներից էր: Քաղաքը զբաղեցնում էր մոտ 2,5 հա տարածություն, որը պարսպապատված էր, իսկ դարպասները գտնվում էին արլ կողմում: Քաղաքի ներսում՝ բլրի վրա տաճար է եղել: Դատավորաց շրջանում (երկաթի դար I) քաղաքը առանձնակի փոփախությունների չի ենթարկվում: Ավերման հետքեր չեն հայտնաբերվել, ինչը փաստում է, որ Նվաճման ժամանակ Հեսուն քաղաքը չի գրավել: Բլրի վրայի տաճարը հավանաբար Դատ. Թ 46-ի Էլ Բերիթի «տունն» է: Տաճար Ք. ա. 12-րդ դ. վերջին հրդեհվել է, որի հետքերը

¹⁰⁷ Հմմտ. *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 328, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 226-227:

¹⁰⁸ St 'u *The International Standard Bible Encyclopedia*, Vol 2, pg.120.

¹⁰⁹ Հմմտ. *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 383, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 249:

¹¹⁰ St 'u *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 464, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256:

¹¹¹ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 259-260:

երևում են ավերակների և մոխրի 11-րդ շերտում (հմմտ. Դատ. Թ 49)¹¹²: Շխեմին մոտ էր գտնվում **Կովի (Մուցցավ՝ կոթող, պատվար, հենասյուն) կաղնին**:

Մելմոն լեռը (Ցալմոն լեռ) միայն հանդիպում է Թ 48 և MT Սաղմ. ԿԸ 15 համարներում: Ուսումնասիրողների մի մասը ենթադրում է, որ այսպես կոչում էին կամ Գեվալ կամ Գարիզիմ լեռանը, մյուսներն էլ՝ Գարիզիմ լեռան հարավային կողմից վեր խոյացող բարձունքը¹¹³: Ամեն դեպքում այն պետք է մոտ գտնվի Շխեմին:

Ենթադրվում է, որ **Գայաս լեռը (Գաաշ)** Եփրեմի տարածքում Շխեմից դեպի հվ-արմ մոտ 25-30 կմ ձգվող լեռնաշղթայի գագաթներից է: Տեղանքի լեռնային ռելիեֆի պատճառով Գաաշ լեռան վայրի ճշգրիտ սահամանումը բարդանում է¹¹⁴:

Թեբեսը (Տեվեց) դեռևս վաղբրիստոնեական շրջանից նույնացվում է Տուբասի հետ՝ Շխեմից մոտ 15 կմ հս-արլ: Այստեղ հնագիտական պեղումներ չեն անցկացվել¹¹⁵: Ըստ Թ 51 համարի, այն իր ներսում «աշտարակ» ուներ, որն ըստ էության, քաղաքի կենտրոնական հատվածում է լինում, որտեղ նաև սրբատեղին ու գանձարանն են (հմմտ. Թ 4, 46):

Մելովը (Շիլո) նույնացվում է Քիրբեթ Սեիլունի հետ, որը գտնվում է Բեթ-Էլի և Շխեմի միջև: Հին քաղաքը զբաղեցնում է շուրջ 3 հա տարածք: Այն մոտ էր գտնվում երկրի հս և հվ շրջաններն իրար կապող ճանապարհին: Ունի բերրի հող և ջրհորներ: Շիլոն հայտնի էր իր սրբարանով, որը դատավորաց շրջանում Իսրայելի կրոնական կենտրոնի կարգավիճակն ուներ (Դատ. ԻԱ 19, Ա Թագ. Ա 3): Սակայն փղշտացիների հետ պատերազմի ժամանակ սրբարանը (հարկավ նաև քաղաքը) ավերվում է (հմմտ. Ա Թագ. Դ 1-11): Երկաթի դարի I շերտում հայտնաբերված ավերակները հրդեհման հետքեր են կրում¹¹⁶:

Ելեթոնան (Լեվոնա) գտնվում է Շիլոյից հյուսիս, հավանաբար ներկայիս Էլ-Լուբբանը կամ Լուբբան Շերքույեն է¹¹⁷:

Դատ. Ժ 1 համարի **Սամարիան** մասորական տեքստում **Շամիո** է կոչվում¹¹⁸: Շամիոի նույնացումը Սամարիայի հետ լոկ ուսումնասիրողների վարկածներից է, սակայն այլ

¹¹² Տե՛ս *The Interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, pg. 313-315, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 258:

¹¹³ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 260:

¹¹⁴ Հմմտ. **Buttrick G. A. (ed.)**, *The Interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, Abingdon Press, Nashville, 1993, pg. 332, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 246:

¹¹⁵ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 260:

¹¹⁶ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 272-273:

¹¹⁷ Տե՛ս *The Interpreter's Dictionary of the Bible*, vol. 3, 107, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 276:

¹¹⁸ Եբրայերենում Սամարիան Շոմոն է (հմմտ. Մ Բ Թագ. 17.1)

նույնացումներ չկան և եթե Մամրիայի տարբերակը սխալ է, ապա Շամիոնի ճշգրիտ վայրը հայտնի չէ¹¹⁹:

Փարաթունը (Ֆիռատուն) նույնացվում է Շիսեմից մոտ 9,5 կմ հվ-արմ գտնվող Ֆառատա բնակավայրի հետ¹²⁰: Այստեղ թաղվել է փոքր դատավորներից Ելլեքի (Հիլլեյ) որդի Աբդունը (Ավդոնը) (Դատ. ԺԲ 15):

Թամնաթարեսը (Տիմնատ-Խեռես) Նավեյի (Նունի) որդի Հեսուին հանձնված քաղաքն էր: Կառուցվել է Եփրեմի լեռան վար և պատականում էր Հեսուի տանը: Այն նույնացնում են Քիրբեթ Թիբնայի հետ, Սյուքեմից (Շիսեմից) 19 կմ հվ-արմ: Պեղումների արդյունքում այստեղ հայտնաբերվել է վաղ երկաթի դարում կառուցված մեծ բնակավայր¹²¹:

Մանասեի ցեղի տարածքը

Մանասեի տարածքը հստակ չի սահմանվում: Հարավում սահմանակից էր Եփրեմին: Արևմտյան սահմանը ձգվում է մինչև Միջերկրական: Հս-արմ սահմանին Ասերի ցեղն է: Արևելքից սահմանակցում է Իսաքարին: Մանասեի ցեղին վիճակված քաղաքներից նշվում են **Բեթսանը (Բեթ-Շան)**, **Թանաքը (Թարնախ)**, **Դովրը (Դոռ)**, **Հեբդամը (Յիվլեամ)** և **Մեգիդդոն**¹²², որոնք սակայն չեն գրավվում:

Պատմական Բեթ-Շանը գտնվում էր Թել Էլ-Հունսի մոտ, ներկայիս Բեթ-Շանից 200 մ հս: Այն տեղակայված է Յիզբեելի և Հորդանանի հովիտների միջև: Եղել է «Մերձափնյա ճանապարհի» վրա ընկած կարևոր առևտրական քաղաքներից մեկը: Այս տարածաշրջանը սկսել է բնակեցվել դեռևս էնեոլիթի շրջանից և կարելի է ասել, որ մինչ այժմ էլ միշտ բնակեցված է եղել: Հելլենիզմի շրջանում բլրի ստորոտին կառուցվել է երկրորդ քաղաքը, որը Դեկապոլսի քաղաքներից մեկն է համարվել: Հռոմեական կայսրության և ապա Բյուզանդիայի տիրապետության շրջանում քաղաքը զգալիորեն մեծանում է և վերանվանվում Սկյութոպոլիս (հմմտ. Դատ. Ա 27): Պեղումների տրամադրած տեղեկությունների համաձայն «ծովի ժողովուրդների» ներխուժման ժամանակ Բեթ-Շանը

¹¹⁹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 260:

¹²⁰ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 873.

¹²¹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 237:

¹²² Դատ. Ա 27 համարում նշվող Բաղակ բնակավայրի փոխարեն, մեր կարծիքով, պետք է լինի Մեգիդդոն: Վերջինս առկա է մատրական բնագրում և Յոթանասնիցում: Ըստ երևույթին Բաղակ անվանումը հավելադրություն է, քանի որ այն առկա է միայն LXX B (*Βαλακ*) տարբերակում, LXX A-ն *Βαλααμ* բնակավայրն է նշում, իսկ մատրականում ընդհանրապես բացակայում է: Բացի դրանից Բալակ և Բալաամ անուններով բնակավայրեր չկան, ո՛չ Հեսուի կողմից պարտության մատնված թագավորների ցանկում (Հեսու ԺԲ 7-24), ոչ էլ Մանասեին հատակցված տարածքների ցանկում (Հեսու ԺԷ 7-13): Հավելենք, որ Դատ. Ե 19 համարի **Մակեդդով** բնակավայրը նույն Մեգիդդոնն է:

չի ավերվել և այն շարունակել է մնալ Ռամզես Գ փարավոնի տիրապետության ներքո նաև Ք. ա. 12-րդ դ. առաջին կեսին¹²³: Սողոմոնի գահակալության շրջանում քաղաքը միացվում է Իսրայելի թագավորությանը (հմմտ. Գ Թագ. Դ 12): Բեթ-Շան թարգմանվում է լռության, հանդարտության տուն:

Աբելմաուլան (Աբել Մեխուլա՝ «պարելու մարգագետին») գտնվում է Հորդանանի արև արևմուտքում՝ Բեթ Շանից հարավ: Ամենայն հավանականությամբ դա Թել Աբու Սուսն է, որը Բեթ Շանից դեպի հվ մոտ 18 կմ հեռավորության վրա է՝ Բեթ Շանի հովտի հարավային մասում, որտեղ Յաբիս գետը արլ կողմից թափվում է Հորդանան գետի մեջ: Այստեղ հայտնաբերվել են ուշ բրոնզի դարով թվագրվող խեցեղենի մնացորդներ¹²⁴:

Տաբթըր (Տաբթաթ) ընկած է Բեթ-Շանից արևելք և նույնացվում է Ռաս Աբու Տաբթի հետ, որը սակայն Թել Աբու Սուսից հեռու է գտնվում (հմմտ. Է 22)¹²⁵:

Հեզրայելի հովիտներն (Յիզբեելի հովիտ) իր անվանումը ստացել է հովտի արլ կողմում գտնվող Յիզբեել քաղաքի համար: Սա բավականին արգավանդ հող ունի և Ակկոյի հովտից Քիշոնի հոսանքով տարածվում է դեպի հվ-արլ, անցնելով Սորբյի բլրի ու Գիլբոա լեռան միջով և Բեթ-Շանի մոտով, միանում է Հորդանանի հովտին: Երկարությունը կազմում է մոտ 24 կմ, իսկ լայնությունը տատանվում է 8-16 կմ մեջ: Հիմնական առևտրական ճանապարհները հովիտ մտնում են Մեգիդոն քաղաքի միջով, ուստի երբեմն այս հովիտը կոչվում է նաև Մեգիդոնյի հովիտ: Այս հովիտը աշխարհագրական տեսանկյունից նպաստավորության պատճառով բազմաթիվ ճակատամարտերի վայր է եղել, որոնցից են նաև Դեբորայի ու Բարակի և քանաանացիների (Դատ. Դ), Սավուդի և փղշտացիների (Ա Թագ. 31), ինչպես նաև Հոսիայի և Նեխո փարավոնի (Դ Թագ. ԻԳ 29) միջև մղված ճակատամարտերը: Այս հովտում Մեգիդոնյի մոտ է Թութմոս Գ-ն ջախջախել է քանաանացիներին և նվաճել տարածաշրջանը (Ք. ա. 15-րդ դ.)¹²⁶: Յիզբեելի հովիտը մասամբ գտնվում է նաև Իսաբարի տարածքում:

Բեթասետան (Բեթ Շիտա՝ ակացիայի տուն) հիմնականում նույնացվում է ներկայիս Շատտա բնակավայրի հետ՝ Յիզբեելի հովտից մոտ 9,5 կմ արլ Բեթ-Շանի ուղղությամբ, սակայն Բեթ-Շանի հարավում գտնվող Յերերայի հետ էլ են նույնացնում¹²⁷:

¹²³ Հմմտ. *International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 475-477, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 244-245:

¹²⁴ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256, հմմտ. *International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 5.

¹²⁵ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 697.

¹²⁶ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 254:

¹²⁷ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 479.

Կիսունի հեղեղատը (Քիշուն՝ թեքում կամ ոլորան) կամ Վադի ալ-Մուքատտան է Յիզբեելի հովտում, որը սկսում է Մեզիդդոյի մոտից և հոսում դեպի արմ՝ մինչև Միջերկրական, կամ էլ Վադի էլ-Բիրան է, որը սկիզբ է առնում Թաբոր լեռից և միանում է Հորդանանին¹²⁸:

Մեզիդդոն բավականին աչքի ընկնող դիրք ունի: Այն գտնվում է Յիզբեելի հովտի արմ մուտքին՝ Թեյլ էլ-Մութեսելիմ բլրի վրա: Հենց այստեղով էր անցնում և հովիտ մտնում «Մերձափնյա ճանապարհը», ինչով էլ գրավում էր հնագույն նվաճողների ուշադրությունը: Միրայի և Պաղեստինի կարևոր առևտրական ուղիներին տիրանալու համար մղված անհաշտ պայքարի ընթացքում, որը ընթանում էր Խեթական պետության, Միջագետքի ու Եգիպտոսի միջև, այն շուրջ 20 անգամ ավերվել և վերականգնվել է: Հիմնադրվել է մոտ Ք. ա. 3300 թ. երկու աղբյուրների մոտակայքում: Եվս մեկ անգամ Մեզիդդոն ավերվել է Ք. ա. 12-րդ դ., այս անգամ «ծովի ժողովուրդների» կողմից, որից հետո քաղաքը դուրս է գալիս Եգիպտական տիրապետությունից: Պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոներից վաղ երկաթի դարին վերաբերողները պատակնում են քնաանացիների (գարդեր, մետաղյա իրեր և ներկված խեցեղեն) և «ծովի ժողովուրդների» (լայնաբերան սափորի եզրեր և այլ տիպի խեցեղեն) մշակութային ավանդություններին¹²⁹: Թագավորության շրջանում քաղաքը հայտնվում է Իսրայելի տիրապետության ներքո (հմմտ. Գ Թագ. Դ 12):

Մակեդդովի՝ Մեզիդդոյի ջրեր (Ե 19) արտահայտությամբ, ըստ երևույթին, ակնարկվում է Քիշուն գետը¹³⁰:

Թաբնախը գտնվում է Յիզբեելի հովտում՝ Մեզիդդոյից 8 կմ հվ-արլ: Ներկայիս Թեյլ Թասանաքն է, որը հիմնադրվել է մոտ Ք. ա. 2700-ական թթ., սակայն արտաստվածաշնչյան աղբյուրները ընդհուպ մինչև Ք. ա. 15-րդ դ. այս քաղաքի մասին ոչինչ չեն հայտնում: Թաբնախը առաջին անգամ հիշատակում է Թուրամու Գ փարավոնը՝ Մեզիդդոյի մոտ մղած ճակատամարտի մասին արված արձանագրության մեջ, ըստ որի, այս քաղաքը նույնպես նվաճվել է: Հետագայում էլ Թաբնախը իր նպաստավոր դիրքի համար (մոտ էր «Մերձափնյա ճանապարհին») պարբերաբար նվաճվել է. Հեսուի կողմից նվաճումը կարելի է այս շարքին դասել (Հեսու ԺԲ 12): Թաբնախը ծաղկում է ապրել

¹²⁸ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 252, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 43.

¹²⁹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 231, *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 677, 679.

¹³⁰ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 43.

հատկապես Ք. ա. 3-րդ հազարամյակի կեսերին և Ք. ա. 17-14-րդ դդ.: Ուշ բրոնզում «Ծովի ժողովուրդների» կողմից քաղաքը ավերվում է, սակայն Ք. ա. 10-րդ դ. նորից պարսպապատվում է, ինչը վկայում է, որ միապետության շրջանում քաղաքը վերածնունդ է ապրել¹³¹: Թառնախը Մանասեի բաժնում դևտագիներին հանձնված քաղաք էր:

Հեբդամը (Յիվլեամ) ամրոց է Յիզբեելի հովտի արլ հատվածում՝ Մեգիդոյից 16 կմ հվ-արլ (Քիրբեթ Բելամե): Չնայած նվաճման շրջանում Մանասեի ցեղը ձախողվում է (Դատ. Ա 27-28), սակայն բաժանված թագավորությունների շրջանում այն Իսրայելի կազմի մեջ է գտնվել (Դ Թագ. Թ 27): Այս բնակավայրի ռազմավարական կարևորության մասին է վկայում Թուրմու Գ-ի արձանագրության մեջ հիշատակվելը¹³²:

Արեդի աղբյուրը (Խառող) բխում է Գիլբոա լեռան հս լանջից Յիզբեել քաղաքից 2 կմ դեպի արևելք: Սա արևելքից փոքրիկ մուտք է ապահովում դեպի Յիզբեելի հովիտ¹³³: Այստեղ բանակ էր դրել Գեդեոնը մադիանացիների դեմ պատերազմելու համար (Դատ. Է 1):

Գաբաաթամը (Գիվրատ (հա)Մորե՝ Մորեի բլուր) գտնվում է Յիզբեելի հովտի հս-արլ սահմանին՝ ճիշտ Թաբոր լեռան հարավում և Գիլբոա լեռան հյուսիսում: Մադիանացիները Գեդեոնի հետ պատերազմելու համար բանակել էին Յիզբեելի հովտում՝ Մորե բլրի հենց արմ կողմում (Դատ. Է 1), որը Խառողի աղբյուրից մոտ 6-8 կմ հեռավորության վրա էր¹³⁴:

Եփրայի (Օֆռա) ճշգրիտ տեղադրությունը հստակ չէ: Ամենից հավանական նույնացումը տարվում է Յիզբեելի հովտում՝ Մեգիդոյի և Մորեյի բլրի միջև գտնվող Աֆֆուլե բնակավայրի հետ¹³⁵: Օֆռայի մոտ էր գտնվում **Հովասի (Յովաշ) կաղնին** (Դատ. Զ 11): Կաղնին հավանաբար կապված էր Տիրոջ պաշտամունքի հետ (հմմտ. Ծննդ. ԺԳ 18), այդ պատճառով էլ Յովաշի կաղնին հայտնի էր:

Բերա (Բեռա) քաղաքը որևէ վայրում հստակ տեղադրելը դժվար է, քանզի անվանումը թարգմանվում է «ջրհոր», որն էլ առկա է բազում բնակավայրերի անվանումներում (օր. `

¹³¹ Տե՛ս **G. A. Buttrick ed.**, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, Abingdon Press, Nashville, 1993, pg. 497, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 230-231, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 695.

¹³² Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 791, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 245:

¹³³ Հմմտ. **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 255:

¹³⁴ Տե՛ս **Buttrick G. A. (ed.)**, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 3, Abingdon Press, Nashville, 1992, pg. 438.

¹³⁵ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 253:

Բեեռ-Շեվա՝ Երդման ջրհոր): Ենթադրվում է, որ Բեեռան Յիզեբելի հովտում գտնվող Է-Բիրե բնակավայրն է՝ Շիսեմից հյուսիս և Թաբոբ լեռան հվ-արլում¹³⁶:

Դոռը մերձափնյա քաղաքը ամենայն հավանականությամբ հիմնվել է Ք. ա. 13-րդ դ. Ռամզես Բ-ի կողմից Միջերկրականի արլ ավի և Էգեյան աշխարհի հետ առևտրական հարաբերությունները զարգացնելու համար: Հնագույն քաղաքը տեղադրվում է ժամանակակից Էտ-Թանտուրա մերձափնյա քաղաքի մոտ, իսկ ավերակները կոչվում են Քիրբեթ Է-Բուրջ: Ք. ա. 12-րդ դ. շուրջ այստեղ հաստատվում են փղշտացիները¹³⁷:

Այստեղից թվարկվող քաղաքները գտնվում են Հորդանանի արլ կողմում հաստատված Մանասեի ցեղի մյուս մասի բաժնում, որը հիմնականում ներառում Յաբբոբ գետից հյուսիս ընկած տարածքները մինչև Յառմուկ գետ:

Հաբոկ (Յաբբոբ) գետը Տրանսհորդանանի կարևոր գետերից է: Այն ժամանակակից Վադի Ցեռքան է: Սկսում է ներկայիս Ամմանի մոտակայքից և թափվում է Հորդանան գետը¹³⁸:

Գաղասաղ (Գիլրաղ) անունը տրվում է և՛ Տրանսհորդանանում Յառմուկ ու Յաբբոկ գետերի միջև եղած տարածաշրջանին¹³⁹, և՛ Յաբբոբ գետից 9 կմ հվ գտնվող ժամանակակից Քիրբեթ Ջելադ բնակավայրին¹⁴⁰: Դատ. Ժ 8-ից կարելի է եզրակացնել, որ այստեղ ամորահացիներ էին բնակվում, մինչև Իսրայելի այս տարածքները նվաճելը:

Դիտանոցը (Միցպա) գտնվում էր Գիլրաղում, սակայն հստակ վայրը հայտնի չէ: Սա այն վայրն է, որտեղ Հակոբը ու Լաբանը ուխտ են կնքում և որպես վկայություն կանգնեցնում քարակույտ, ինչի համար էլ վայրը անվանվում է Գալեդ՝ Վկայության քարակույտ (հմմտ. MT Ծննդ. ԼԱ 48): Տարածաշրջանի Գիլրաղ անունը գալիս է այստեղից: Այդ վայրը անվանվում էր նաև Միցպա՝ Դիտանոց, որովհետև Տերը պիտի նայեր ու հսկեր, որ ուխտը չխախտվի (հմմտ. MT Ծննդ. ԼԱ 49)¹⁴¹: Դատ. Ի 1 համարը վկայում է, որ Միցպան դատավորաց շրջանում մեծ կարևորություն ուներ:

Մասեփան (Միցպա) նույն Գիլրաղի մոտ գտնվող Միցպան է:

¹³⁶ Տե՛ս **G. A. Buttrick ed., The interpreter's Dictionary of the Bible**, vol. 1, Abingdon Press, Nashville, 1993, pg. 374, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 259:

¹³⁷ Տե՛ս *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, pg. 223, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 231, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 1, pg. 864.

¹³⁸ Տե՛ս *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 946.

¹³⁹ Երբեմն Գիլրաղի հարավային սահմանը հասցվում է մինչև Առնոն գետ:

¹⁴⁰ Հմմտ. **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 261:

¹⁴¹ Հմմտ. <https://www.biblegateway.com/passage/?search=Genesis+31&version=RSV> (20.04.2018, 20:19):

Գաղասադ սարի (Գիլրադ) հիշատակումը է 3 համարում ամենայն հավանականությամբ սխալմունք է, քանի որ այն գտնվում է Հորդանանի արլ կողմում և Դատ. է գլխում նկարագրված ռազմական գործողություններից հեռու է: Պետք է նշել, որ այն ավելի շուտ փոքր բլուր է քան լեռ¹⁴²:

Տովբ երկիրն (Տով) հավանաբար էտ-Թայբեն է Գիլրադի արմ մասում՝ Դերայի և Բուսրա աշ-Շամի միջև՝ մոտ Յառմուկ գետի ակունքին: Այս վայրում սակայն պեղումներ չեն անցկացվել¹⁴³:

Հայիրի ավանները (Խավվուտ Յաիո՝ Յաիոի ավաններ) գտնվում էին Գալիլիայի լճի արևելքում Յառմուկ և Յաբբոբ գետերի միջև՝ Գիլրադի տարծաշրջանում¹⁴⁴:

Կամովնի (Քամոն) ճշգրիտ վայրը հայտնի չէ, սակայն վարկածներ առաջարկվում են (օր.՝ Իռբիդի հս-արլում գտնվող Քումայն գյուղը): Թերևս կարելի է միայն վստահ ասել, որ նույնպես Գիլրադում է գտնվել (հմմտ. Ժ 4-5)¹⁴⁵:

Հաբիսը (Յավեշ) ամենայն հավանականությամբ Թել Մաքլուբի մոտ է գտնվում, Գիլրադի (տարածաշրջանի) հյուսիսում հոսող Յաբիս գետի ափին և Հորդանան գետի արլ կողմում¹⁴⁶:

Իսաբարի ցեղի տարածքը

Իսաբարի ցեղը հաստատվել էր Հորդանանի արմ կողմում՝ Մանասեից հս, Ասերից արլ և Նեփթավիմից հվ: Թաբոր լեռը գտնվում է նրա հս սահմանին: Այն իր մեջ էր ներառում նաև Յեզրեելի հովտի մասը¹⁴⁷:

Թաբոր լեռը (Տավոռ) գտնվում է Իսաբարի բաժնում՝ Գալիլիայի լճի հվ մասում և Յիեզրեելի հովտի հս-արլ սահմանին: Իր դիրքով այն հսկում է Բեթ-Շանից Դամասկոս և Յիեզրեելի հովտից Գալիլիայի լիճ տանող ճանապարհների վրա: Թերևս այս պատճառով է, որ Ք. հ. 13-րդ դ. սկզբին այստեղ ամրոց է կառուցվում, որն իհարկե նույն դարի ավարտին ավերվում է¹⁴⁸:

Չաբուդոնի ցեղի տարածքները

¹⁴² Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 470, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 255:

¹⁴³ Տե՛ս *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, pg. 657, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 261-262:

¹⁴⁴ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 261:

¹⁴⁵ Տե՛ս *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 3, pg. 3.

¹⁴⁶ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 276:

¹⁴⁷ J. H. Walton, նշվ. աշխ., էջ 236:

¹⁴⁸ Տե՛ս *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, pg. 508.

Զաբուղոնի ցեղի տարծքի հս սահմանը Տիբերիայի արևմուտքից 19 կմ և Նազարեթի հս-արլ կողմից մոտ 9,5 կմ վրա է ըկած: Այնուհետև սահմանը Նազարեթից 8 կմ դեպի հվ-արմ թելլ Շադուդի մոտից անցնում է Կիսունի երկայնքով դեպի Հոքնեամ: Արևելքից սահմանակից է Իսաքարին, իսկ արլ սահմանը ընկած է Նազարեթից 3 կմ հվ-արլ: Զաբուղոնին վիճակված քաղաքներից **Կեդրոնը (Քիտոն՝ ներփակված)** ամենայն հավանականությամբ Յիզբեելի հովտի հս-արմ մասում է գտնվել, սակայն ճշգրիտ վայրը հայտնի չէ: Այն նույնացվել է Ակկոյի հովտում գտնվող թելլ Քուրդանեյի և Զաբուղոնի հովտի արլ եզրին գտնվող թելլ էլ-Տարի հետ, սակայն ներկայումս այս նույնացումները չեն ընդունվում և Քիտոնի ճշգրիտ վայրը հայտնի չէ¹⁴⁹:

Նաալըը (Նահալը՝ արոտավայր կամ ջուր խմելու վայր) նույնացվում է թել են-Նահլի հետ, որն ընկած է Միջերկրական ծովից 8 կմ արլ.՝ Հայֆայի մոտ: Անվանումների ծագումնաբանական նմանությունը, ինչպես նաև վաղ բրոնզից սկսած գտածոների առկայությունը վկայում են դրանց նույնականացման օգտին, սակայն թել են-Նահլը տեղակայված է Ասերի բաժնում, ինչն էլ բարդացնում է ինդրի լուծումը: Առայժմ այս հարցը առկախ է մնում¹⁵⁰:

Եղիմը Զաբուղոնի ցեղից դատավոր Ելոնի թաղման վայրն է: Մասորական տեքստում փոխարենը **Այալոն**¹⁵¹ է: Ինչպես արդեն նշել ենք Դանի ցեղի նախնական տարածքում գտնվող Այալոնի հովտում կար համանուն բնակավայր: Սակայն տեքստից բխում է, որ խոսքը Զաբուղոնի երկրում գտնվող այլ վայրի մասին է: Ամեն դեպքում այս բնակավայրի ճշգրիտ վայրը հայտնի չէ:

Գոյություն ունեն **Բեթղեհեմ (Բեթ Լեխեմ)** անունով երկու բնակավայրեր: Դատ. ԺԲ 8 համարում խոսվում է Զաբուղոնի երկրում՝ Յիզբեելի հովտի հյուսիսում գտնվող լեռնային շրջանում գտնվող Բեթ Լեխեմ բնակավայրի մասին: Իսկ մյուսը բոլորիս քաջածանոթ Բեթղեհեմն է՝ Երուսաղեմի հարավում: Դատավորաց գրքում մյուս բոլոր հիշատակումները վերաբերում են այս վերջինին: Բեթ-Լեխեմի և Եփրեմի լեռան միջև մոտ 50 կմ տարածություն է:

Ասերի ցեղի տարածքները

¹⁴⁹ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 236, 245, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 44-45:

¹⁵⁰ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 245, *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 476:

¹⁵¹ LXX A տեքստում Αιλιμ, իսկ LXX B-ում Αιλωμ, վերջինս LXX B-ում կիրառվում է նաև դատավոր Ելոնի անվան համար:

Ասերի ցեղին վիճակված տարածքը գտնվում էր Ակկոյի հովտում Զաբուդոնի և Նեփթադիմի տարածքներից արմ և տարածվում էր դեպի հս մինչև Տյուրոս և Սիդոն փյունիկյան քաղաքները, որոնց ներառումը Ասերի տարածքի մեջ դեռևս չի նշանակում, որ նրանք փաստացի տիրապետում էին դրանց: Ավելի շուտ դա ցանակալի վիճակն է մատնանշում: Ա 31 համարում նշված և Ասերի տարածք համարվող **Դոռը** ընկնում է Մանասեի վիճակի մեջ: Այն բացակայում է մասորական բնագրում և ալեքսանդրյան տարբերակում: Ըստ երևույթին սա տարընթերցում է, որը գալիս է Վաստիկանյան տարբերակից (հմմտ. M, LXX A, B Դատ. Ա 31):

Դալափը (Ախլավ) որպես Ասերի բաժնի քաղաք առկա է միայն Ա 31 համարում, Հեսուի ԺԹ 24-31 համարներում այն բացակայում է: Սակայն MT Հեսու ԺԹ 19 համարում Ախլավի կողքին թվարկվում է Մեխեվելը: Վերջինս նույնացվում է ասսուրական մի արձանագրության մեջ Սիդոնի տարածքում նշվող Մահալիբա քաղաքի հետ: Այժմ Ախլավի Մահալիբայի հետ ասոցացման պատճառով, այն նույնացնում են ժամանակակից Քիրբեթ էլ-Մահալիբի հետ, որը գտնվում է Տյուրոսից 6 կմ հս-արլ¹⁵²:

Ուսումնասիրողների մի մասը **Ելփայը (Խելբա)** նույնացնում են Ախլավի և Մեխեվելի հետ, ըստ այսմ, Քիրբեթ էլ-Մահալիբի հետ նույնացումը վերաբերում է նաև այս քաղաքին: Խնդիրը նրանում է, որ երեք անուններնը հիմնականում նույն բաղաձայններն ունեն. Ախլավ՝ ܐܚܠܐܘܒ հև, Խելբա՝ ܚܠܒܐ հև, Մեխեվել՝ ܡܚܠܒܐ տհև: Եթե վերիջինի մոտ «Մեմ» տառը նախաձանց է, նմանությունն ավելի է ընդգծվում: Ենթադրվում է, որ կա՛մ գրչագրական վրիպակի պատճառով է երեք տարբեր անուններ ստացվել, կա՛մ էլ դրանք նույն վայրի տարբեր անվանումներն են¹⁵³: Մասորական բնագիրն իր հերթին Խելբայի համար նշում է անում, որ հավանաբար այն Ախլավի կրկնագիր հավելումն է (MT Դատ. Ա 31):

Սիդոնը (Ցիդոն) Միջերկրականի ափին գտնվող փյունիկյան խոշոր քաղաք-պետություն է՝ Տյուրոսից 40 կմ հս: Այն հիշատակվում է ուգարիթյան (Ք. ա. 13-րդ դ.) և էլ-Ամառնայի (Ք. ա. 14-րդ դ.) տեքստերում և Թուրմոս Գ-ի արձանագրություններում, որոնցից բխում է, որ Սիդոնը Եգիպտոսի իշխանության տակ է եղել, ինչը սակայն Ք. ա. 1200-ական թթ. վերացվել է: Ք. ա. 12-րդ դ. Սիդոնը փյունիկեցիների գլխավոր քաղաքն էր,

¹⁵² St' u *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, pg. 123.

¹⁵³ St' u **D. N. Freedman (ed.)**, *The Anchor Bible Dictionary*, Vol. 3, New York, 1992, pg. 117.

իսկ Ք. ա. 9-րդ դ. ասսուրական արձանագրությունները վկայում են, որ Սիդոնը Տյուրոսից անկախ թագավորություն էր¹⁵⁴:

Ռոբը (Ռեխով) նաև հիշատակվում է եգիպտական փաստաթղթերում (Ռախաբու), որոնցից կարելի է եզրակացնել, որ համանուն 3-4 վայր կարելի է գտնել Գալիլիայի և Յիզբեելի տարածաշրջաններում: Ասերի քաղաքներից Ռեխովը ղևտացներին հանձնված քաղաքներից էր (Հեսու. ԻԱ 31): Հնարավոր է, որ Ասերի բաժնում երկու Ռեխով լինի, քանի որ ըստ Հեսու ԺԹ 28 համարի, Ռեխովը գտնվում է Ասերի հյուսիսում, իսկ ըստ Հեսու ԺԹ 30-ի՝ Ակկոյի դաշտավայրում (Ումման նույնացվում է Ակկոյի հետ), որն ավելի հարավ է: Հյուսիսի Ռեխովը նույնացվում է կամ ներկայիս Լիբանանում գտնվող Թել Էլ-Բալաթի հետ, կամ էլ ներկայիս Իսրայելում գտնվող Թել Էլ-Ռախբի հետ, որը Թել Էլ-Բալաթից 6 կմ հվ-արլում է: Հարավում գտնվող Ռեխովը նույնպես երկու վայրերի հետ է նույնացվում: Մեկը Քիրբեթ Դաուկն է Ակկոյից 8 կմ հվ-արլ, որը բնակեցվել է միջին բրոնզից մինչև երաթի դարի II շրջանը և հելլենիստական ժամանակաշրջանում: Մյուսը Թել Էլ-Բիր Էլ-Գհարբին է, ընդ որում ուսումնասիրողների մեծ մասը վկայում է սրա օգտին: Այն գտնվում է Ակկոյի մերձափնյա դաշտավայրի արևելյան եզրին: Այստեղից հայտնաբերված խեցեղենը թվագրվում է միջին բրոնզով, երկաթի I և II, պարսկական ու հելլենիստական շրջաններով¹⁵⁵: Դատավորաց զրքում բավարար տվյալներ չկան, ցույց տալու համար Ա 31-ի Ռեխովը հյուսիսին է, թե հարավին:

Ակբովը (Ակկո) առաջին անգամ հիշատակվում է եգիպտական «Անեծքների տեքստում» (միջին բրոնզ): Այն հիշատակվում է նաև Թուրֆոս Գ և Ռամգես Բ փարավոնների արձանագրություններում, Էլ-Ամառնայի նամակներում, Ուգարիթում հայտնաբերված ուգարիթյան և աքադական տեքստերում: Հին քաղաքը նույնացվում է Էլ-Տուքքարի հետ, որը գտնվում է ներկայիս Ակկո քաղաքի մոտ՝ Նաաման գետի հյուսիս-արևելքում: Այն գտնվում է ծովափնյա և ցամաքային (Գալիլիայով և Տրանսհորդանանով դեպի Սիրիա գնացող) ճանապարհների խաչմերուկում: Երկաթի դարից այստեղ հայտնաբերված խեցեղենը իր վրա է կրում փյունիկյան և կիպրական մշակույթների ազդեցությունները: Հնագիտական տվյալները փաստում են, որ այստեղ զբաղվել են խեցեղենի արտադրմամբ:

¹⁵⁴ Հմմտ. *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 500-501, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 247:

¹⁵⁵ Տե՛ս D. N. Freedman (ed.), *The Anchor Bible Dictionary*, Vol. 5, New York, 1992, pg.660-661.

Ք. ա. 8-7 դդ. քաղաքը հայտնվում է փյունիկեցիների տիրապետության ներքո: Հելլենիզմի շրջանում վերանվանվել է Պտոլեմաիս (Պտղոմայիս)¹⁵⁶:

Աքազիփը (Ախազիֆ) տեղակայված էր Ակկոյի հյուսիսում, չնայած որ հանձնված էր Ասերի ցեղին, սակայն այդպես էլ չի նվաճվում (Դատ. Ա 31): Վաղ բրոնզից մինչև հռոմեացիների տիրապետության շրջանը այստեղ եղել է ծաղկուն առևտրական քաղաք, որը թեև հաճախակի էր հարձակումների ենթարկվում և ավերվում, սակայն վերստին ոտքի էր կանգնում: Իր ծաղկման գագաթնակետին եղել է Ք. ա. 8-րդ դ., մինչև Ք. ա. 701 թ. Ասորեստանի Սենեթերիմ թագավորի կողմից չի ավերվում: Հարկ է իմանալ, որ Ախազիֆ անունով քաղաք կա նաև Շֆելայում՝ Հուդայի բաժնի մեջ¹⁵⁷:

Ափեկ (Աֆիք՝ գետի հուն) անունով բնակավայրեր Ասերի տարածքից գատ գոյություն ունեին նաև Առամում, Լիբանանում, Շարոնի հովտում և Հուդայում: Անվան Աֆիք ձևը հանդիպում է միայն Դատավորաց գրքում, առավել տարածված են Աֆեք և Աֆեքա տարբերակները: Ասպես Աֆեքը նույնացնում են երկու բնակավայրերի հետ: Առաջինը Թել Քուրդանան է Ակկոյից 9 կմ հվ-արլ Նաաման գետի ակունքին: Մյուսը ներկայիս Թել Քաբրին է՝ Նահարիայից 4 կմ արլ: Այն զբաղեցնում է 32 հա ընդարձակ տարածություն: Մոտակայքում կան 4 մեծ ջրհորներ: Բնակավայրը շրջապատված է էտ-Թելլ, էն-Նահո, իսկ հյուսիսից Դհահոաթ էտ-Թելլ գյուղերի ավերակներով: Աֆեքի Թել Քաբրիի հետ նույնացման օգտին վկայում է այն, որ Ասերը չգրավեց հիմնականում մերձափնյա հովտի հյուսիսային հատվածները, որտեղ գտնվում է Թել Քաբրին: Պետք է նշել, որ երկու վայրերում էլ հայտնաբերվել են միջին բրոնզի մնացորդներ, ինչը հավանական է դարձնում Աֆեքի նույնացումը եգիպտական «Անեծքների տեքստում» հիշատակվող համանուն վայրի հետ¹⁵⁸:

Նեփթաղիմի ցեղի տարածքները

Նեփթաղիմի ցեղի տարածքի համար հաշվարկի հիմնական առանցքը Թաբոր լեռն է: Նեփթաղիմի հարավային սահմանը անցնում է Վադի Ֆաջջասով արևելյան մինչև Հորդանան գետը: Նեփթաղիմի քաղաքներից **Բեթսամյուսը (Բեթ-Շեմեշ)** գտնվում է Շֆելայի հս-արլ մասում: Նույնացվում է Թելլ էր-Ռումեյլա բնակավայրի հետ: Պեղումները ցույց են տալիս, որ միջին բրոնզի I շրջանից մինչև հռոմեական կայսրության

¹⁵⁶ St' u *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, pg. 53-56.

¹⁵⁷ St' u **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 237, հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, pg. 57-58.

¹⁵⁸ St' u *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, pg. 275-277.

տիրապետության շրջանը այս տեղանքը մշտապես բնակեցված է եղել: Ք. ա. 11-րդ դ. ավերվել է, իսկ թագավորության շրջանում այն կարևոր վարչական կենտրոնի է վերածվել, սակայն չի պարսպապատվել: Եգիպտոսից և Ուգարիթից հայտնաբերված առարկաները վկայում են առևտրային հարաբերությունների մասին¹⁵⁹: Բեթ- Շեմեշ թարգմանվում է «Արևի տուն»:

Բեթանաթի (Բեթ-Անաթ) ճշգրիտ վայրը անհայտ է: Հավանական տարբերակ է Գալիլիայի հս կողմում գտնվող Սաֆեդ էլ-Բաթթիք բնակավայրը կամ էլ էլ-Բանեն Ակկոյից 16 կմ արլ: Եգիպտական փարավոններ Թուֆոս Գ, Սեթի Ա և Ռամզես Բ հիշատակում են այն իրենց արձանագրություններում, որպես թե գտնվում է Խացոռից Տյուրոս տանող ճանապարհին¹⁶⁰: Անվանումը թարգմանվում է «Անաթի տուն», ըստ երևույթին, ակնարկվում է քնասանական Անաթ աստվածուհին, որը հնարավոր է այստեղ պաշտամունքի կենտրոն էլ է ունեցել:

Կադեսը (Քեդեշ) Իսրայելի տարածքում կարելի է նույնացնել երկու վայրերի հետ: Մեկը Գալիլիայի վերին շրջանում գտնվող Հուլե լճի հս-արմ գտնվող Թելլ Քադեսն է և մյուսն էլ Թել Աբու Քուդեիսը, որը Նեփթաղիմի բաժնում էր և մոտ Մեգիդոյին¹⁶¹: Դատ. Դ գլխում հիշատակվում է այս վերջինը, իսկ Հեսու ԺԲ 22 համարի Կեդեսը մյուսի հետ է նույնացվում: Բացի վերոնշյալներից մեկ այլ Կադես էլ կար Եդոմի սահմանին (Դատ. ԺԱ 16-17): Կադեսը նաև Ապաստանի քաղաք էր (Դատ. Ի 7):

Ասովրը (Խացոռ) գտնվում է Հյուսիսային Գալիլիայում՝ Մեգիդոյից Դամասկոս տանող՝ ռազմավարական կարևոր նշանակությամբ ճանապարհի վրա: Գալիլիայի լճից մոտ 16 կմ հս է գտնվում: Հիշատակվում է Մարիի (Ք. ա. 18-րդ դ.) և էլ-Ամառնայի (Ք. ա. 14-րդ դ.) տեքստերում: Նույն Թել էլ-Քեդա բնակավայրն է: Ըստ Հեսու ԺԱ 10-ի, Խացոռի բնակիչները քանաանացիներ էին (հմմտ. Դատ. Դ 24): Նրա արքան՝ Հաբինը (Յավինը), հարևան թագավորների նկատմամբ իշխող դիրք ուներ: Յավինի պարտությունը արտացոլված է Հեսու ԺԱ 13 և Դատ. Դ 24 համարներում: Հնագիտական պեղումները Ք. ա. մոտ 13-րդ դ. թվագրվող շերտում հայտնաբերել են ավերածությունների հետքեր, որոնք կարող էին թողնել իսրայելացիները կամ էլ «ծովի ժողովուրդները»: Հետազայում

¹⁵⁹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 238:

¹⁶⁰ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 463, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 245:

¹⁶¹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 231, 250:

Ստողմունքը պարսպապատել է այս քաղաքը, որի վկայությունները պահպանվել են 10-րդ շերտում (MT Ա Թագ. 9.15)¹⁶²:

Ազգերի Արիսոթ (Հարոսեթ (հա)Գոյիմ) այնքան էլ հայտնի չէ, թե որ վայրի մասին է խոսքը գնում: LXX A Դատ. Դ 16 համարում այս տեղանունը թարգմանվել է որպես «ազգերի անտառ», ուստի պարզ չէ սա Գալիլիայում գտնվող քաղաք է, թե անտառային շրջան: Բհարկե հնարավոր է, որ բնակավայրը տեղակայված լինի անտառում: Նույնականացման փորձեր են տարվում Թել Էլ Հարբաջի և Թել Ամրի հետ, սակայն այս առիթով հնագիտական ծանրակշիռ փաստարկումներ չկան: Տեքստից երևում է, որ սա Իսրայելի հովտի սահմաններում գործերի հավաքագրման վայր էր: Հավանաբար գտնվում էր փղտացիների տիրապետության ներքո, քանի որ Սիսիարայի, (ըստ երևույթի այդ տարածքը նրա իրավասության ներքո էր) անունը ոչ սեմիթական ծագման է: Վերջինս էլ ենթարկվում էր Յավինին՝ Խացոռի արքային¹⁶³:

Հանգստացողների (Յաաննայ) կաղնին մոտ էր գտնվում Նեփթաղիմի Կադես քաղաքին, այստեղ բնակություն էր հաստատել կինեցի Խեվեռի ընտանիքը (MT Դատ. Դ 11): Հաշվի առնելով, որ Սիսարան մարտի դաշտից փաղչում է այստեղ, ապա ամենայն հավանականությամբ այս վայրը մոտ էր նաև Թաբոր լեռանը:

ԺԸ 27 համարի **Ռոբի հովտի** փոխարեն պետք է լինի **Բեթ-Ռեխովի հովիտ**: Բեթ-Ռեխովը տարբեր է Ռեխովից (Ա 31), չնայած որ արևելահայերեն թարգմանության մեջ տարբերությունը չի զգացվում: Քաղաքի ճշգրիտ վայրը հայտնի չէ և հավանաբար, այն մոտ է Խամատին (MT Թվ. ԺԳ 21) (տե՛ս էջ 59): Ընդհանուր առմամբ Բեթ-Ռեխովը տեղադրվում է Հուլե հովտի և Բեքայի հովտի (Հարավային Լիբանանում) միացման վայրում¹⁶⁴: Այն Լայիշի գրավման ժամանակ Սիդոնի (Ցիդոն) իշխանության տակ էր¹⁶⁵:

Դանի ցեղի տարածքները

Դանի ցեղին վիճակված էր Բենյամինի արմ կողմում և Միջերկրականի ափին ընկած մի ընդարձակածավալ տարածություն՝ Սոռեք գետակից մինչև Յարքոն գետ, մինչև Հոպպեի մոտակայքը: Հազիվ թե Դանի ցեղը երբևէ տիրապետած լինի այս տարածքները: Դանին տրված քաղաքներից նշվում են **Մրտենիների լեռը (Հառ Խեռես), Մրտաստանը**

¹⁶² Հմմտ. *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, 539-540, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 249:

¹⁶³ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 249-250:

¹⁶⁴ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 272, *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, pg. 692.

¹⁶⁵ Այդ պատճառով է ԺԸ 27 համարում շեշտվում Սիդոնից (Ցիդոնից) հեռու լինելու փաստը:

(Այալոն) և Սաղապիմը (Շաալվիմ): Վերաբնակեցման ժամանակ նրանք հաստատվում են Լայիսայում (Լայիշ), որն ըստ էության նրանցը չէր և մոտ էր Նեփթաղիմի բաժնին:

Մրտենիների լեռ անվանումը գալիս է Յոթանասնիցից, որը մասորականում **Հառ Խեռես** է, ինչը նշանակում է «արևի լեռ»¹⁶⁶: Հաճախ նույնացվում է Հեսու ԺԹ 41-ի Իո-Շամեշ (Արևի քաղաք) բնակավայրի հետ: Սակայն Խեռես լեռան ճշգրիտ վայրը վերջնականապես հայտնի չէ. Այալոնի հվ-արլ մի քանի վայրեր կան, որոնց հետ կարելի է այն նույնացնել: Քանի որ Դանի ցեղի բաժնի մեջ է, ապա հնարավոր է, որ Այալոնի հովտի հվ-արլ մասում լինի, հատկապես որ մասորական տեքստում կարդում ենք «Ամորացիները շարունակում էին բնակվել Խեռես լեռան վրա, Այալոնում և Շաալվիմում» (MT Դատ. Ա 35)¹⁶⁷:

Մրտաստան անվան փոխարեն պետք է լինի **Այալոն**, որը նույնացվում է Յալո բնակավայրի հետ՝ Գազեոից 8 կմ արլ Այալոնի հովտի արմ մասում: Այն ընկած է դեպի լեռնային շրջաններ տանող ճանապարհին և հիշատակվում է Էլ-Ամառնայի տեքստերում¹⁶⁸: Այալոնը հիշատակվում է նաև Սավուդի փղշտացիների դեմ մղած պայքարում (Ա Սամ. ԺԴ 31):

Սաղապիմը (Շաալվիմ՝ աղվեսներ) ամենայն հավանականությամբ Այալոնից 4,5 կմ հս-արմ գտնվող Սելբիտ (ներկայումս ավերված) բնակավայրն է: Հնարավոր է, որ Այալոնի պես ծառայել է որպես սահմանային ամրոց, որը հսկում էր ճանապարհը դեպի Այալոնի հովիտ¹⁶⁹:

Ուրեկի հեղեղատը (Սոռեքի հովիտ) Սամսոնի գործունեության հիմնական ասպարեզն է: Այն տարածվում է Երուսաղեմի արմ կողմում մոտ 20 կմ երկարությամբ՝ հանդիսանալով Հուդայի լեռնային շրջաններից հս-արմ ուղղությամբ դեպի Միջերկրական ծով հոսող վաղիի մի մասը¹⁷⁰:

Սարասան (Ցոռա) նույնացվում է ժամանակակից Սառայի (Թել Ցառա) հետ՝ Երուսաղեմից շուրջ 25 կմ դեպի արմ և Բեթ-Շեմեշից 3 կմ հս՝ Սոռեքի հովտում¹⁷¹: Այն գտնվում է Դանի ցեղի նախնական տարածքում:

¹⁶⁶ Խեռես նշանակում է նաև «քոս», տե՛ս <http://biblehub.com/hebrew/2776.htm> (13.04.2018, 22:52): «Մրտենի» իմաստը սակայն եբրայերենում չկա:

¹⁶⁷ Հմմտ. *The Interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, pg. 525, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 245:

¹⁶⁸ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 245:

¹⁶⁹ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 245, *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 439.

¹⁷⁰ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 269:

¹⁷¹ Տե՛ս D. N. Freedman (ed.), *The Anchor Bible Dictionary*, Vol. 6, Doubleday, New York, 1992, pg. 1168, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 265:

Յոռայի հարևանությամբ (2 կմ արլ) գտնվում է **Եսթավուղը (Էշտաուլ)**, և այս երկու բնակավայրերի միջև անցնում է վաղի Քեսալոնով հոսող գետակ: Էշտաուլը համարվում է ներկայիս Քիրբեթ Դեիր Շուբեյբը¹⁷²:

Մասորական տեքստում **Ետամի քարայր (Էտամ)** վայրը կոչվում է «Էտամի ժայռ», իսկ Սամսոնը բնակվում է դրա մեջ առաջացած ճեղքում (MT Դատ. ԺԵ 8): Չնայած որ համանուն բնակավայր կա Բեթ-Լաիսեմի մոտ (MT Բ Մնաց. ԺԱ 6), այնուամենայնիվ այն հեռու է կատարվող դեպքերի վայրից, ուստի հավանաբար Էտամի ժայռը Յոռայի մոտակայքում գտնվող Առաք Իսմահինն է¹⁷³:

Կարիաթ-Յարիմը (Քիոյատ Յըառիմ՝ Անտառների քաղաք) համարվում է Հուդայի քաղաքներից (ԺԸ 12): Ենթադրվում է, որ սա Թելլ էլ-Ազհարն է՝ Երուսաղեմից մոտ 14 կմ հս-արմ և Գաբաայից մոտ 10 կմ հվ-արմ¹⁷⁴:

Դանի բանակատեղին (Մախանե-Դան՝ Դանի ճամբար կամ բանակատեղի) հիշատակվում է Դատ. ԺԳ 25 և ԺԸ 12 համարներում: Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ ըստ առաջինի Մախանե-Դանը գտնվում է Յոռայի և Էշտաուլի միջև: Սակայն, ըստ մյուսի, այն ավելի մոտ է Քիոյատ Յըառիմին, որը Էշտաուլից հեռու է մոտ 8 կմ: Հավանաբար այն հավասարապես մոտ է երկուսին էլ՝ գտնվելով դրանց միջև: Բացի այդ շատ հավանական է, որ ԺԸ 11-12 համարները ներկայացնում են Մախանե-Դան վայրի առաջացման պատմությունը հատկապես, որ ԺԷ-ԺԸ գլուխներում դեպքերն ավելի վաղ ժամանակային համատեքստ ունեն և ԺԳ-ԺԶ գլուխների հետ ժանակային հաջորդականություն չեն կազմում:

Թամանթան (Տիմնա) գտնվում է Յոռայից 8 կմ արմ Սոռեթի հովտում՝ իսրայելացիների և փղշտացիների տարածքների սահմանին: Այն ժամանակակից Թելլ էլ-Բատաշի բնակավայրն է, որտեղ հայտնաբերվել են երկաթեդարյա բնակավայրի հետքեր¹⁷⁵: Տիմնայի մոտակայքում եղել են խաղողի այգիներ (**Թամանթայի այգեստաններ** Դատ. ԺԴ 5), որտեղ Սամսոնը հաղթում է առյուծին: Բացի դրանից շատ հավանական է, որ Սամսոնի հրդեհած ցորենի կալերը, արտերը, ձիթենիներն ու մրգատու այգիները նույնպես եղել են Տիմնայի մոտակայքում:

¹⁷² Տե՛ս *The Interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, pg. 143, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 266:

¹⁷³ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 268:

¹⁷⁴ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 42, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 272:

¹⁷⁵ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 266, *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 783.

Եղքին նույն **Մնտո** կոչված վայրն է, քանի որ մասորական տեքստում դրանց փոխարեն **Լեխի** (ծնոտ) է գրված (MT ԺԵ 9, 14, 19): Ոմանք Լեխի (ծնոտ) կչվող վայրը նույնացնում են Ցոռայից մոտ 3 կմ և Էշտաուլից մոտ 2,5 կմ հվ հեռավորության վրա գտնվող Քիրբեթ Էս-Սույյազի հետ¹⁷⁶:

Մնտոյի կոտորած վայրը եբրայերենում **Ռամաս Լեխի**՝ «ծնտոյի բլուր» (MT ԺԵ 17): Նույնական է Լեխի կոչվող վայրի հետ: Մոտեցում կա, ըստ որի Դատ. ԺԵ 9-19 համարները, փաստում են իսրայելացիների օրինական իրավունքներն Շֆելայում գտնվող քաղաքի համար¹⁷⁷:

Մնտոյի աղբյուրը մասորականում **Էն (հա)Քրոնե** է՝ «Կանչողի աղբյուր» կամ «Նրա աղբյուրը, ով կանչեց» (MT ԺԵ 19)¹⁷⁸: Տարածաշրջանում, որտեղ դեպքերն էին ընթանում, չի հյատնաբերվել աղբյուր, որը կհամապատասխաներ ԺԵ 19-ի նկարագրությանը: Հավանական է, որ աղբյուրը ցամաքած լինի:

Երբ Սամսոնը Գազայի դարպասները պոկում է, այն դնում է մի լեռան վրա, որը «**Քեբրոնի դիմացն է**» (ԺՁ 3): Գազայի և Խեվոնի միջև ավելի քան 60 կմ է և ճանապարհը վեր է բարձրանում լեռնային շրջաններով: Սամսոնի զարմանահրաշ ուժը կասկածի տակ չդնելով հանդերձ, իհարկե հավանական է, որ նա Գազայից Խեվոն գնալիս դարպասները թողել է որևէ լեռան վրա, որը տեսականորեն Խեվոնի դիմացն է՝ նայում է Խեվոնի կողմը:

Դանի ցեղը, չկարողանալով հաստատվել Այալոնի հովտում, բնակության նոր վայրերի փնտրտուքի ժամանակ տեղափոխվում են հս և գրավում **Լայիսան (Լայիշ)**: Այն գտնվում է Հերմոն լեռան ստորոտին: Դանի ցեղի կողմից քաղաքի գրավումից հետո այն վերանվանվում է Դան (ԺԸ 29, Ի 1): Հորդանան գետի ակունքերից մեկը բխում է այս բնակավայրի մոտից: Եգիպտական որոշ տեքստեր և Մարիից հայտնաբերված նամակներ հիշատակում են Լայիշը, ինչ վկայում է քաղաքի հնագույն ծագման մասին: Այստեղ նկատելի է նաև փյունիկյան ազդեցություն: Ներկայումս **Դանը** կոչվում է Թել Էլ-Քադի և մինչև այժմ էլ առատ է ջրհորներով և աղբյուրներով: Պեղումների արդյունքում այստեղ հայտնաբերվել է «Դանի Աստված» գրությունը: Միջին բրոնզի ժամանակ քաղաքը զբաղեցրել է մոտ 12 հա տարածություն: Երկաթի դարում քաղաքը չի ավերվել, սակայն այս

¹⁷⁶ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 38-39, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 268:

¹⁷⁷ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 39.

¹⁷⁸ Հմմտ. <http://biblehub.com/hebrew/5875.htm> (22.06.2018, 15:41):

շերտից հայտնաբերված խեցեղենը և բանջարեղենի պահպանման համար արված փոսերից կարելի է ենթադրել, որ երկաթի դարում այստեղ նոր բնակչություն է հայտնվել: Այս շերտում սրբարանի հետքեր չեն հայտնաբերվել: Հնարավոր է, որ բաժանված թագավորությունների շրջանում Հերոբովամը Դանում պահվող կուռքերի համար վրան պատրաստած լինի (Գ Թագ. ԺԲ 29-30):

Գաղի ցեղի տարածքը

Գաղի ցեղը հաստատվել էր Հորդանանի արլ վտակ Յաբբոք գետից հարավ մինչև Ամման ընկած տարածքում:

Մեփենան (Յաֆոն) Հեսու ԺԳ 27-ում ներառվում է Գաղի բաժնի մեջ: Ամենայն հավանականությամբ այն Թելլ էլ-Քոսն է, որը Թելլ Դեիր Ալլայից մոտ 3 կմ հս է գտնվում¹⁷⁹:

Սորքոթը (Սուքքոտ՝ տաղավարներ) տեղադրվում է Թելլ Դեյր Ալլա, Յաբբոք գետից շուրջ 1,5 կմ հս և Հորդանանից դեպի արլ մոտ 5 կմ հեռավորության վրա: Այստեղ վաղ երկաթի դարին վերաբերող նյութեր են հայտնաբերվել: Պեղումները նաև փաստում են, որ այստեղի բնակչությունը բրոնզ է ձուլել: Բլրաթմբի գագաթը կես հեկտար տարածություն է զբաղեցնում: Սուքքոտում նաև հայտնաբերվել է 7,5 մ տրամագծով աշտարակ¹⁸⁰:

Փանուելը (Պենուել՝ Աստծո երես կամ Աստծո երևում) գտնվում է Սուքքոտից մոտ 7 կմ արլ՝ Յաբբոք գետի ափին՝ ներկայիս Թելլ եղ-Դհահաբ էջ-Շերքիյեի մոտ: Նախնական հետազոտությունները երկաթի դարի բնակավայրի հետքեր են հայտնաբերել, բայց մանրակրկիտ պեղումներ դեռևս չեն արվել: Ծննդոցից հայտնի է, որ այստեղ Հակոբը մենամարտում է մի անձանոթի հետ և վայրն անվանում է «Պենիել»¹⁸¹:

Քանի որ Պենուելում պեղումներ չեն անցկացվել, աշտարակի հետքեր առայժմ չեն հայտնաբերվել: Սակայն վաղ երկաթի դարի քաղաքաշինության մեջ ընդունված էր աշտարակների կառուցումը, որոնք Դարպասի մաս էին կազմում, ծառայում էին որպես պարեկային աշտարակներ և հատկապես միջնաբերդեր, որի մոտ էր գտնվում նաև սրբարանն ու գանձարանը¹⁸²: **Պենուելի աշտարակը** (Դատ. Ը 9) հարկավ իրենից նմանատիպ կառույց է ներկայացնում:

Ելնելով անվան նշանակությունից **Կարկարը (Քարքոր՝ ցածր գետին)**, ամենայն հավանականությամբ Բեքաայի ջրամբար-ավազանն է, որը գտնվում է ընդարձակ՝ 8 կմ

¹⁷⁹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 264:

¹⁸⁰ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 4, pg. 648, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256:

¹⁸¹ Տե՛ս *International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 759, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256:

¹⁸² Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256:

երկարությամբ և 3 կմ լայնությամբ ցածրավայրում հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ՝ Ներկայիս Ամման քաղաքից ավելի քան 10 կմ հս-արմ¹⁸³:

Վրանաբնակների ճանապարհը պարզելու համար պետք է նախ հնարավորինս ճշգրտել **Նաբաեի (Նովախ)** և **Նաբեի (Յոզբահա)** տեղադրությունը: Առաջինի վայրը անհայտ է, երկրորդը նույնացվում է Ամմանից մոտ 10 կմ հս-արմ գտնվող Քիրբեթ էլ-Աջուբեյհաթ վայրի հետ (պետք է, որ Նովախը սրան մոտ լինի (Դատ. Ը 11)): Քիրբեթ էլ-Աջուբեյհաթը գտնվում է Բեքաայի ավազանը հարավից եզերող բարձունքի միջնամասում: Այս տարածաշրջանում գործող ճանապարհը Յաբբոկ գետի հովտից գնում է Պենուելի հարավային կողմը, այնուհետև դեպի հարավ-արևելք ու հարավ-արևմուտքից միանում էր Բեքաայի ավազանին: Հնարավոր է, որ հենց սա էլ լիներ վրանաբնակների ճանապարհը, բայց չի բացատրվում, որ այն կիրառող քոչվորները ճանապարհը փոխած լինեին: Սակայն հստակ է, որ Բեքաա ավազանը այս ճանապարհի հանգրվանային կետերից է¹⁸⁴:

Արեսի զառիվայրը մասորականում **Խեռես** է կոչվում, որը նշանակում է «արև»: Սա տարբերվում է Դանի տարածքի Խեռես լեռանից: Դժվար է հստակ տեղադրել սա, բայց հավանական է, որ Բեքաայի ջրամբարի (Քարքորի) մոտ լինի, քանի որ Գեդեոնը մադիանացիների հետ մղած մարտից հետո, այստեղից էր հեռանում, իսկ մարտը տեղի էր ունեցել Քարքորի մոտ¹⁸⁵:

Ռուբենի ցեղի տարածքը

Ռուբենի ցեղը զբաղեցնում էր Մովաբի հս դաշտավայրային շրջանները՝ ներկայիս Մադեբայի հարթավայրը: Ռուբենի Գադի և Իսաքարի ցեղերը հիմնականում ձեռնպահ են մնացել դատվորաց իրադարձություններից, բացի թերևս ԻԱ գլխի համացեղային հավաքից: Հարկ է նշել, որ Դեբորան իր երգում Սիսարայի դեմ կովին մասնակից է Դարձնում նաև Իսաքարի ցեղին, սակայն ոչ Ռուբենին կամ Գադին (հմմտ. Ե 15-17):

Հարևան տարածաշրջաններ

Փղշտացիների հինգ քաղաքները

Գազան, Գադը, Ասկադոնը, Ակկարոնը և Ագովտոսը միասին կոչվում են «փղշտացիների հինգ քաղաքներ»: Ներկայացնենք դրանք առանձնաբար: Դատավորացում հիշատակվող Այլազգիների Հինգ նախարարությունները հենց այս հինգ քաղաքների

¹⁸³ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256, հմմտ. *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 3, pg. 3.

¹⁸⁴ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 256-257, հմմտ. *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, pg. 929.

¹⁸⁵ Հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 3, pg. 143.

ղեկավարներն էին: Ենթադրաբար քաղաքներից յուրաքանչյուրն ուներ իր առանձին ղեկավար մարմինը և հինգ քաղաքի ընդհանուր խորհուրդն էր վճռում ողջ ազգին առնչվող կարևոր հարցերը (հմմտ. Դատ. ԺՁ 5, 23): Պետք է նշել, որ Գազայի և մյուս քաղաքների նվաճման հարցում անհատակություններ կան (հմմտ. MT Դատ. Ա 18 և LXX A, B նույն տեղին): Մատրական բնագիրը վկայում է, որ Հուդան գրավում է Ազգան, Աշկելոնը և Էքրոնը, Յոթանասնիցում սակայն նշվում է, որ այդ տարածքները չեն գրավվում¹⁸⁶: Վերջինը համահունչ է Ա 19-ին, որտեղ վկայվում է, որ Հուդան գրավում միայն լեռնային շրջանները, իսկ հովիտներում բնակվողներին չի կարողանում նվաճել, քանի որ նրանք մարտակառքեր ունեին¹⁸⁷:

Սուրբգրային **Գազան (Ազգա)** գտնվում է ժամանակակից Գազայի մոտակայքում՝ 61 մ բարձրությամբ բլրակի վրա: Միջերկրականի ափից հեռու է մոտ 4 կմ: Ք. ա. մոտ 1550 – 1150 թթ. եղել է եգիպտական վարչական կարևոր կենտրոն տեղակայված Պաղեստինի մերձափնյա հովտի հվ-արմ մասում՝ միջազգային կարևոր տարանցիկ ուղու վրա (Via Maris՝ «մերձափնյա ճանապարհ», երբեմն «փղշտական ճանապարհ»): Շրջակա հովիտը հատկապես արլ կողմից բարեբեր հող ունի: Նույնացվում է Թել Հարուր բնակավայրի հետ: Հիշատակվում է Թել Էլ-Ամառնայի տեքստերում և Թուրթոս Գ փարավոնի արձանագրություններում: Հավանաբար գրավվել է Շեշոնկ փարավոնի արշավանքի ժամանակ՝ բաժանված թագավորությունների շրջանում: Սակայն եթե նախորդ միտքը, զուտ վարկած էր, ապա Ք. ա. 734 թ. Թիզլաթպալասար Գ-ի կողմից նվաճվելը փաստ է¹⁸⁸: Փղշտացիների Պաղեստինում հաստատվելուց հետո, այն դառնում է վերջիններիս կարևոր հինգ քաղաքներից մեկը:

Ասկադոնը (Աշկելոն) Գազայից շուրջ 19 կմ հս է գտնվում: Այն նաև խոշոր նավահանգստային քաղաք էր: Իր դիրքի շնորհիվ գրավել է եգիպտացիների ուշադրությունը: Առաջին անգամ հիշատակվում է Միջին բրոնզի առաջին շրջանում (Ք. ա. մոտ 2000-1800 թթ.): Թել Էլ-Ամառնայի որոշ նամակներից (Ք. ա. 13-րդ դ. 14-րդ դ.) կարելի է

¹⁸⁶ Յոթանասնիցում չորս քաղաք է նշվում. ավելացվում է Ազովտոսը (Աշոտոթ): Եթե երկու բնագրային ավանդությունների միջև տարբերությունը, մատրական բնագրի սխալի արդյունքը չէ, ապա չի բացառվում, որ իսրայելացիները սկզբում գրավում և հետո կորցնում են այդ տարածքները:

¹⁸⁷ Հարևանցիորեն նշենք, որ Ա 19-ում անհստակ է Ռեքաբի (Pεχαβ) ինքնությունը, ամենայն հավանականությամբ սա բնագրային սխալ է և առաջացել է նույն համարում եբրայերեն רֶקֶב (rekeb) բառի, որը նշանակում է մարտակառք, ոչ ճիշտ թարգմանությունից:

¹⁸⁸ St u *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 415-416, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 243, հմմտ. *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 307-309.

եզրակացնել, որ Աշկելոնի կառավարիչը փարավոնի վասալն էր: Ք. ա. 13-րդ դ. քաղաքը դեռևս Եգիպտոսի տիրապետության ներքո էր գտնվում: Նվաճման շրջանում Հուդայի ցեղը չի կարողանում գրավել այն: Ք. ա. 12-րդ դ. առաջին կեսին, երբ այստեղ հաստատվում են փղշտացիները, քաղաքը ամրացվում է պարսպով և աղյուսաշեն բերդով, իսկ տները վերակառուցվում են եգեյան աշխարհին բնորոշ ոճով: Նորաբնակները իրենց սննդի մեջ կիրառում էին ինչպես ոչխարներ և այծեր (հարևանների նմանողությամբ), այնպես էլ խոզեր և շներ¹⁸⁹: Այստեղից պեղված խեցեղենը (վաղ երկաթի դար) վկայում է մշակութային ավանդույթների միաձուլման մասին¹⁹⁰:

Ակկարոնը (Էքրոն) գտնվում է Շֆելայի և կենտրոնական լեռնայն շրջանների միջև՝ Սոռեքի հովտում: Նույնացվում է Թել Մուքննայի հետ՝ Երուսաղեմից մոտ 32 կմ հվ-արմ: Սկսել է բնակեցվել դեռևս Էնեոլիթյան շրջանում (Ք. ա. մոտ 4300 – 3300 թթ.): Սակայն խոշոր քաղաք այստեղ հայտնաբերվել է միայն Ուշ բրոնզում (Ք. ա. մոտ 1500 – 1200 թթ.): Այստեղ հայտնաբերված խեցեղենը վկայում է Եգիպտոսի և Կիպրոսի հետ ունեցած կապերի մասին: Ք. ա. 12-րդ դ. փղշտացիների այստեղ հաստատմամբ քաղաքը ավելի է ընդարձակվում, իսկ էթնիկ կազմը բազմազան է դառնում: Ք. ա. 1-ին հազարամյակում՝ Ասորեստանի և Բաբելոնի տիրապետության շրջանում վերածվում է խոշոր արտադրողական կենտրոնի մասնագիտացած ձիթայուղի արտադրության մեջ: 1996 թ. այստեղ փյունիկերենով արձանագրություն է հայտնաբերվել: Մեր օրերում քաղաքի ընդհանուր տեսքը բաժանվում է երեք մասի՝ Ստորին քաղաք (16 հա), Վերին քաղաք (4 հա) և միջնաբերդ (1 հա)¹⁹¹:

Ազովտոսը (Աշդոդ՝ ամրոց) Գազայից հս-արլ մոտ 29 կմ հեռավորության վրա է գտնվում: Սակայն հին քաղաքը ներկայիս Աշդոդից մոտ 5 կմ հվ է եղել: Այն բաղկացած է եղել երկու մասից՝ բլրի վրա եղել է Վերին քաղաքը մոտ 8 հա տարածությամբ և ստորոտին՝ Ստորինը քաղաքը մոտ 40 հա տարածքով: Ուզարիթյան տեքստերում հիշվում է որպես կարևոր առևտրական կենտրոն: Բլրի գագաթին Ուշ բրոնզով թվագրվող խոշոր քանաանական բնակավայրի հետքեր են հայտնաբերվել: Քանաանացիներից հետո տարածքը բնակեցվել է «ծովի ժողովուրդներով»: Աշդոդը փղշտացիների կարևոր հինգ

¹⁸⁹ Տե՛ս *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 95-96, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 243, 267:

¹⁹⁰ Տե՛ս *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 96, H. Мерперт, *Очерки археологии Библейских стран*, Москва, 2000, стр. 208, հմմտ. A. Leonard, Jr. and E. H. Cline, *The Aegean Pottery at Megiddo: An Appraisal and Reanalysis*, in Bulletin of the American Schools of Oriental Research, No. 309, Feb., 1998, pg. 7-10.

¹⁹¹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 243-244, 288, *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 48.

քաղաքներից մեկն էր: Երկաթի դարում այստեղ իշխող է եղել փղշտական մշակույթը, քաղաքը լավ ամրացվել և սկսել է տարածվել բլրի ստորոտին¹⁹²:

Գաղը կամ Գեթը (Գաթ՝ զինու հնձան) Դատավորաց գրքում չի հիշատակվում: Օլբրայթը այն տեղադրում է ժամանակակից Քիռյաթ Գաթի հյուսիսում գտնվող Թելլ Շեիխ Ահմեդ էլ-Արեիհի (կոչվում է նաև Թելլ Գաթ) հետ: Սակայն 20-րդ դ. կեսերին անցկացված պեղումները փաստեցին, որ երկաթի դար I շրջանում այս վայրը չի բնակեցվել: Որպես վարկած առաջարկվել են նաև Թելլ Սեռան, Թելլ Նագիլան (երկոսն էլ Նեգև անապատի եզրին) և Թել էս-Սաֆին (Թել Միքնեից (Էքրոն) 16 կմ հվ-արլ): Երեքում էլ հայտնաբերվել են փղշտացիների բնակության հետքեր: Սակայն վերջին շրջաններում Թել էս-Սաֆիի նույնացումը Գաթի հետ գերիշխող է դարձել: Ըստ հնագիտական վկայությունների, այստեղ եղած երկաթի դար I շրջանի փղշտական բնակավայրը բավականին ընդարձակ է եղել¹⁹³:

Այլ երկրներ

Միջագետք (Առամ Նահառայմ՝ Երկու գետերի Առամ) ասելով պետք է հասկանանք ոչ թե Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած այդ հսկայական տարածքը, որը Միրիայից ձգվում է դեպի Պարսից ծոց, այլ ներկայիս Միջագետքի հս-արմ հատվածը՝ Եփրատ գետի Արևելյան Միրիայում հոսող հատվածի և Հաբուր գետի ստեղծած եռանկյունաձև տարածությունը: Այստեղ էր գտնվում Խառան քաղաքը (հմմտ. Ծննդ. ԻԴ 10, ԻԹ 5): Ուշ բրոնզի դարում այս տարածքը Միտաննիի խուռիական թագավորության տիրապետության տակ էր: Վերջինս խեթերի հետ պայքարի արդյունքում անկում է ապրում և խուռիական ցեղերը սփռվում են սիրիոպաղեստինյայն տարածքով մեկ: Առամ Նահառայմի տիրակալի անունը՝ Քուշան-Ռիշատայմ (MT Դատ. Գ 8), ակնհայտ նմանություն ունի ուշ բրոնզի խուռիական մի անվան հետ (Kuzzari-rishti): Կարելի է ենթադրել, որ Քուշան-Ռիշատայմի կողմից Իսրայելի նվաճումը կորսված պետականության վերականգնում է այլ վայրում և ոչ տարածքների ընդարձակում: Բայց ընդհանուր առմամբ Առամ Նահառայմը դիտվում է վաղ երկաթի դարում գոյություն

¹⁹² St 'u J. H. Walton, նշվ. աշխ., էջ 287, *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 93-94, հմմտ. *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 314-315:

¹⁹³ St 'u *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 305-306. *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, pg. 908-909.

ունեցած արամեական հնագույն թագավորություն, որը ներառել է նաև ներկայիս Լիբանանի տարածքը¹⁹⁴:

Լիբանանի (Լեվանոն՝ սայիտակել) սահմանները հնագույն սկզբնաղբյուրներում մասնավորաբար չեն ներկայացվում, բայց հավանաբար այն համընկնում է ներկայիս սահմաններին, բացառությամբ Միջերկրականի ափին ընկած փյունիկյան տարածքների, որտեղ գտնվող Տյուրոսը, Սիդոնը և այլ քաղաքներ չեն ներկայացվում որպես Լիբանանի քաղաքներ: Լիբանանի տարածքը կարելի է երեք խոշոր մասի բաժանել Լիբանանի լեռներ (ՄՏ Դատ. Գ 3), Լիբանանի հովիտ (Հեսու ԺԲ 7) և Անտիլիբանանի լեռներ (Դատ. ԺԳ 5՝ «Լիբանանը արևելքից», LXX Թ 1)¹⁹⁵:

Լիբանանում գտնվող Բադհերմոն սարից մինչև Լաբոեմաթ հիշատակման փոխարեն մասորական տեքստը նշում է **Լիբանանի (Լեվանոն) լեռան վրա, Բաալ Հեռմոնից մինչև Լեվո Խամատ** (Մ Դատ. Գ 3), որը հյուսիսից հարավ Միջերկրականի ափին զուգահեռ ձգվող 160 կմ երկարությամբ լեռնաշղթա է՝ 3089 մ Քուռնետ էս-Սաուդա բարձրագույն գագաթով: Լեռնաշղթայի արմ լանջերին առատ տեղումների շնորհիվ բարենպաստ պայմաններ կան գյուղատնտեսության համար: Հնագույն ժամանակներում այն կեդարի լայնածավալ անտառներով է ծածկված եղել¹⁹⁶: Պետք է նշել, որ **Բադհերմոնը (Բաալ Հեռմոն)** վերաբերում է Հեռմոն լեռանը (գրեթե 3000 մ), որը Անտիլիբանան լեռնաշղթայի գագաթներից է: Այն գտնվում էր Մանասեի արևելյան ցեղի հյուսիսային սահմանին՝ Լիբանանի հովտի հս: Լեռան լանջին ժամանակին եղել են պաշտամունքային կենտրոններ, այսիսկ պատճառով այն նաև անվանվում է Բաալ Հեռմոն: Լեռան շրջակայքը բնակեցված է եղել ամորացիներով (Հեսու Ժ 10-11) և իսրայելիցիներով (Դատ. Գ 3)¹⁹⁷:

Լաբոեմաթը (Խամատ կամ Լեվո Խամատ՝ Խամատի մուտքը) գտնվում է ժամանակակից Սիրիայում: Հնագույն ժամանակներում այն մատնանշում էր Խոստացված երկրի հյուսիսային սահմանը: Խամատի գտնվելու վայրի վերաբերյալ տարբեր վարկածներ են առաջ քաշվում, բայց Դատ. Գ 3 համարը հաշվի առնելով ավելի հավանական է Լիբանանի և Անտիլիբանանի լեռների միջև գտնվող Քուելե-Սիրիայի հովիտի ցածրադիր մասը¹⁹⁸:

¹⁹⁴ Հմմտ. *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 41-42, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 247:

¹⁹⁵ Տե՛ս Հմմտ. D. N. Freedman (ed.), *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, New York, 1992, pg. 269.

¹⁹⁶ Տե՛ս Власова Т. Б., նշվ. աշխ., էջ 190, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 247:

¹⁹⁷ Հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 3, pg. 158.

¹⁹⁸ Հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 3, pg. 37.

Հորդանան (Յաորդեն) գետը Լևանտի ամենից խոշոր գետերից է: Նշանակում է «ներքև հոսող գետ», արաբներն այն կոչում են «խամելու վայր»: Հոսում է 21 կմ երկարությամբ և 6 կմ լայնությամբ հովտի միջով: Նրա 4 ակունքները մոտ են գտնվում Հերմոն լեռանը: Հորդանանը իր վերին հոսանքներում երկու՝ Հուլեյի և Գալիլիայի լճերի միջով է անցնում: Թափվում է Մեռյալ ծովի (լճի մեջ)¹⁹⁹:

Ամովնը (Ամոն) զբաղեցնում է Հորդանանից արևելք՝ Վադի էլ-Մուջիբ և Յաբբոբ գետերի միջև ընկած տարածությունը: Ք. ա. 13-րդ դ. սկսած մայրաքաղաքը եղել է Ռաբբան (Հորդանանի ներկայիս մայրաքաղաք Ամմանի մոտակայքում): Ասուրական աղբյուրներում ամոնական թագավորությունը կոչվում էր Բենամինու:

Մոավքը (Մոավ) հիմնականում զբաղեցնում էր Մեռյալ ծովի արլ գառիթափերի և Արաբական անապատի միջև ընկած մշակելի տարածքները (հյուսիսից հարավ մոտ 90 կմ, արևելքից արևմուտք 25 կմ): Հյուսիսում սահմանը անցնում է Վադի էլ-Մուջիբ գետով, իսկ հարավից Վադի էլ-Խեսայով: Երկու գետերն էլ թափվում են Մեռյալ ծով: Հին Կտակարանը երբեմն «Մոավ» անվան ներքո հասկանում է նաև մոավացիներին: Ըստ MT Ծննդ. ԺԹ 37-ի, «Մոավ» նշանակում է «իմ հորից», իսկ մոավացիների նախահայր ներկայացվում է Ղովտը (Լոտ): Մոավի մասին առաջին հստակ արտաստվածաշնչյան աղբյուրը հենց Մոավի արքա Մեշայի, որը գահակալել է 9-րդ դ. կեսերին, արձանագրությունն է: Դատ. Գ 12-ը խոսում է Եզրոմի (Էզրոմ), իսկ Թվեր ԻԲ 4-ը Բաղակի (Բալաք) մասին, որոնք նույնպես ներկայացվում են որպես թագավորներ: Բայց չենք կարող հաստատապես պնդել, որ ուշ բրոնզում և վաղ երկաթում գոյություն ուներ միացյալ մոավական թագավորություն: Ամենայն հավանականությամբ քաղաքական բազմազանության պայմաններում, եղել են մի քանի քաղաքներ, որոնց «թագավորները» իշխում էին նաև հարևան տարածքների վրա: Էզրոնը կարող էր այս տիպի թագավոր լինել, որը իշխանությունը ընդգրկում էր նաև գրավյալ Երիբովը (Յեռիխո)²⁰⁰:

Ամովնը (Ամոն) ներկայիս Վադի էլ-Մուջիբ գետն է և հոսում է ժամանակակից Հորդանան պետության տարածքով և թափվում է Մեռյալ ծով՝ ծովի մակարդակից մոտ - 400 մ ցածրության վրա ²⁰¹:

¹⁹⁹ St 'u *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 1119-1120, 1122, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, pg. 973, **Власова Т. В.**, նշվ. աշխ., էջ 191:

²⁰⁰ Հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 4, pg. 882-893, **J. Rogerson, P. R. Davies**, *The Old Testament World*, London, New York, 2007, pg. 46.

²⁰¹ Հմմտ. **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 158, հմմտ. *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 1, pg 230.

Արոյեր (Առոեռ) ժամանակակից Արաիրն է: Ռազմավարական կարևոր նշանակությամբ ամրոց էր, որը պահպանում և վերահսկում էր Մովաբի ու Ամմոնի սահմանը: Գտնվում է Առոն գետի հս. ափին: Հավանաբար ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում Առոռ անվամբ բնակավայրը ներկայիս վայրից մոտ 2 կմ հս` Թել Էսդար վայրում է տեղակայված եղել, իսկ Ք. ա. 8-րդ դ. ավերվելուց հետո անավնումը տրվել է փոքր ինչ հարավում գտնվող Արաիրին²⁰²:

Դատ. ԺԱ 22 համարում հիշատակվող **անապատը** գտնվում էր Մովաբի արմ սահմանին:

Դատ. ԺԱ 33 համարում ներկայացվում են Հեփթայեի կողմից նվաճված մոտ քսան քաղաք, որոնցից անվանապես նշվում են` **Արոյերը (Առոեռ)**, **Մեմենիթը (Միննիթ)** և **Այգեստանների Հաբելը (Ավել Քերամիմ` Խաղողի այգիների հարթավայր)**: Միննիթը ենթադրաբար Ումմ Էլ-Բասատինն է` Ռաբբայի և Հեշբոնի միջև: Առոեռը հավանաբար գտնվում է Ռաբբային մոտ (հմմտ. Հեսու. ԺԳ 25) և տարբեր է Ամմոնի և Մոավի սահմանին գտնվող համանուն ամրոցից: Իսկ Ավել Քերամիմի հստակ տեղադրությունը հայտնի չէ, չի բացատրվում, որ Թուրթուս Գ-ի արձանագրության մեջ նշված krm-ն լինի: Բայց պետք է որ Ռաբբային մոտ լինի, ինչպես մյուս երկուսը: Պեղումների արդյունքում այս տարածաշրջանում (Ռաբբայի և Խեշբոնի հարակից շրջաններում) հայտնաբերվել են բազմաթիվ ամրացված բնակավայրեր: Ըստ երևույթին Հեփթայեն ոչ միայն հետ է մղել ամմոնացիների այլև գրավել է որոշ տարածքներ հիմնականում Ռաբբայի և Խեշբոնի մոտակայքում²⁰³:

Եսեբոնը (Խեշբոն) քաղաք էր Հորդանան գետի արլ բարձրավանդակին, որը աշխարհագրական և լեզվաբանական որոշ հանգամանքներից ելնելով նույնացվում է Թելլ Խեսբանի հետ: Այն բլուր է ծովի մակարդակից 895 մ բարձրությամբ և գտնվում է Մադաբայի հարթավայրի հս-արմ եզրին, որտեղից Վադի Խեսբանը թեքվում է և դեպի արմ շուրջ 25 կմ երկարությամբ սրընթաց իջնում դեպի Հորդանան գետը: Այն գտնվում է Երուսաղեմից 55 կմ արլ և Ամմանից (Հորդանանի մայրաքաղաքից) 20 կմ հվ-արմ: Թելլ Խեսբանում անցկացվել է պեղումների 6 փուլ, սակայն վաղագույն 19-րդ շերտը Ք. ա. մոտ 1200 թ. վեր չի անցնում: Այս դեպքում խնդիր է առաջանում Դատ. ԺԱ 19-22-ի հետ (սա

²⁰² Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 607, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 1, pg. 230-231, *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 298.

²⁰³ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 263:

Թվեր ԻԱ 21-55-ի վերաներկայացումն է), որը վստահաբար ավելի վաղ ժամանակի իրադարձություն է ներկայացնում: Շատերն այս տեղին անախրոնիզմ կամ ոչ պատմական դեպք են համարում (Միլլեր, Վան Սեթերս), որոշներն էլ այլ տեղ են փնտրում Խեշբոնը: Ինչպես օրինակ Թելլ Ջալուլը՝ ներկայիս Մաբադա քաղաքից 5 կմ արլ՝ մոտ Թելլ Խեսբանին: Թելլ Ջալուլում հնագիտական հնագույն շերտը հասնում է մինչև վաղ բրոնզ²⁰⁴: Պեղումներն այստեղ այժմ էլ շարունակվում են: Հավանական է, որ հայտնաբերվեն խոսուն ապացույցներ վերջինի օգտին: Պետք է հետևողական լինել Թելլ Խեսբանի պարագային, քանի որ այստեղի հնագույն շերտի բնակավայրը փոքր և չպարսպապատված է եղել, և հազիվ թե նման գյուղակի տերը համարձակվեր դեմ կանգնել մի ամբողջ ժողովրդի ու սպասելի թշնամություն հրահրեր (Դատ. ԺԱ 19-22):

Ասսան (Յահցա) Իսարյելի և ամորացիների արքա Սեհոնի (Սիխոն) միջև մղված մարտի վայրն է: Եվսեբիոս Կեսարացու պատմության (4-րդ դ.) և Մովսեսի արքա Մեշայի արձանագրության (Ք. ա. 9-րդ դ.) համադրմամբ կարելի է ենթադրել, որ Յահցան գտնվում է Քիրբեթ Մեդենիյեհի մոտ՝ Մովսեսի արլ եզրին Վադի ալ-Թեմեդի կողմից²⁰⁵: Վերոնշյալ ճակատամարտն են ներկայացնում Թվեր ԻԱ 23, Բ Օր. Բ 32 և Դատ. ԺԱ 20 համարները:

Եդովմը (Էդոմ) գտնվում է Մեռյալ ծովի հվ ու հվ-արլ ափերին և անմիջական հարևանության մեջ էր Իսրայելի հետ (Հուդայի տարածքով): Էդոմ անունը սեմիթական ծագման է, որի արմատը նշանակում է «կարմիր, կարմրավուն»: Հավանաբար այն պայմանավորված է Էդոմի տարածքում տարածված կարմրավուն ավազաքարերով: Էդոմը հարավից առնչվում էր Սիդյանի ու Հեջազի հետ, արևմուտքում Աքաբի ծովածոցով և Սինայի թերակղզով Եգիպտոսի հետ, իսկ Մովսեսի և Ամոնի միջով (հս), ինչպես նաև Վադի Մուջիբը հատելով՝ Սիրիայի և Դամասկոսի հետ: Էդոմի մասին, բացի Հին Կտակարանի տրամադրած տվյալներից, տեղեկություններ կարելի քաղել նաև եգիպտական («Անաստասի» պապիրուսիից Ք. ա. 13-րդ դ., էլ-Ամառնայի նամակներից), ասսուրական (Ք. ա. 8-րդ դ. Թիզլաթ-պալասար Գ-ի արձանագրության մեջ) և բաբելական (Ք. ա. 6-րդ դ. կես, Նաբոնիդուսի ժամանակագրության մեջ) արձանագրություններից²⁰⁶:

Սեիրը (Սեիր) Եդոմ երկրի մասերից է (Ծննդ ԼԲ 3), Հին Կտակարանի որոշ տեղիներից կարելի է ենթադրել, որ այն կիրառվում է նաև որպես Եդոմ անվանը հոմանիշ (հմմտ. Ծննդ.

²⁰⁴ Տե՛ս 'u *The Anchor Bible Dictionary*, Vol. 3, pg. 181.

²⁰⁵ Տե՛ս 'u **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 173:

²⁰⁶ Տե՛ս 'u *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, pg. 287-295, **J. Rogerson**, նշվ. աշխ., էջ 47:

ԼԳ 14, 17, Եզեկ. ԻԲ 8 և այլն): Սեփոր լեռնային (Մինդ. ԺԴ 6, ԼԶ 8-9) և դաշտային շրջան է (Դատ. Ե 4-ում Սեփոր և Եդոմի դաշտը զուգահեռ են դրված)²⁰⁷:

Աքրաբիմի գառիվայրը (Աքրաբիմ) Մեռյալ ծովի հվ-արմ հատվածում ընկած լեռնանցք է՝ ներկայիս Նեքք ես-Սաֆան²⁰⁸: Աքրաբիմ նշանակում է «կարիճներ»:

Վեմ (Սելա²⁰⁹) (Դատ. Ա 36) վայրի ճշգրիտ տեղադրությունը հայտնի չէ: Աքրաբիմի գառիվայրի հետ միասին նշվելու պատճառով՝ տեղադրվում է Մեռյալ ծովի հարավ-արևմուտքում: Դ Թագ. ԺԴ 7 համարում Սելան եդոմական քաղաք է կամ ամրություն (հմմտ. Դատ. Ա 36): Անվանման պատճառով նույնացվում է կա՛մ Պետրայի հետ, որը նաբաթեական ժայռոտ քաղաք է, կա՛մ ժամանակակից Սելայի հետ, որը Բոսրայից 3 կմ հս-արմ է գտնվում: Սակայն պեղումների արդյունքում այս վայրերից հայտնաբերված նյութերը Ք. ա. 9-րդ դ. այն կողմ չեն անցնում²¹⁰:

Սինայի հիշատակությունը ամենայն հավանականությամբ վերաբերում է Սինա լեռանը (հմմտ. Ե 5) և ոչ թերակզուն: Լեռան ճշգրիտ վայրը հայտնի չէ: Ըստ մեզ ամենից հավանականը ավանդական մոտեցումն է, ըստ որի, այն Ջեբել Մուսան է՝ Սինա թերակզու հարավային մասում: Որոշ ուսումնասիրողներ Դատ. Ե 4-5-ից ելնելով՝ Սինան տեղադրում են Եդոմում՝ Սեփոի տարածաշրջանում, սակայն մենք Ե 4-5 համարները բավարար չենք համարում նման մոտեցման համար. ընդհանուր Ե գլխի համատեքստում շատ տեղանուններ են հիշատակվում և պարտադիր չէ, որ դրանք միմյանց հարևանությամբ գտնվեն²¹¹:

Կարիմիր (Մուֆ՝ կարմիր) ծովը մեր կարծիքով մանրամասն պարզաբանման կարիք չի զգում, քանի որ այն բավականաչափ հայտնի է: Գտնվում է Եգիպտոսի և Արաբական թերակզու միջև:

Եգիպտոսը (Միցոսայիմ) հնուց ի վեր ակտիվ կապերի մեջ է եղել Քանաանի և ընդհանրապես Լևանտի հետ: Ուշ բրոնզի դարում, մինչև «ծովի ժողովուրդների» տարածաշրջան մուտք գործելը, Եգիպտոսը, Քանաանը իր տիրապետության ներքո էր պահում և ավելի հյուսիս ընկած շրջանների համար, մրցում Միտանիի և Խեթական կայսրությունների հետ: Սակայն Ք. ա. 12-րդ դ. իրադրությունը փոխվում է: Եգիպտոսը վաղ

²⁰⁷ Սեփոի մասին ավելի մանրամասն տե՛ս *The Anchor Bible Dictionary*, Vol. 5, pg. 1072-1073.

²⁰⁸ Տե՛ս *J. H. Walton*, նշվ. աշխ., էջ 245:

²⁰⁹ Եբր.՝ *שֵׁלָה*՝ *sela*՝ ժայռ:

²¹⁰ Տե՛ս *J. H. Walton*, նշվ. աշխ., էջ 245:

²¹¹ Հմմտ. *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, pg. 376-377.

երկաթում արդեն ինքն էր հարձակումների թիրախ դառնում՝ ինչպես հյուսիսից, այնպես էլ նոր հարավային հարևան Նապաստայի (թագավորություն Նուբիայում) կոմից: Ք. ա. 11-10-րդ դդ. Եգիպտոսը միայն փոխնիփոխ քաղաքկան, մշակութային և առևտրական կապերի մեջ է եղել Լևանտի հետ²¹²:

Որոշ պարզաբանումներ

Մադարոթը (Ե 22) աշխարհագրական վայր չէ: Մասորական տեքստում կիրառված **מִדְּחָרֹת** (middahārōwt) բառը նշանակում է «սրընթաց» կամ «քառատրոփ», որը կիրառված է որպես ածական²¹³: Ընդ որում Յոթանասնիցում էլ *Մադարոթ* հատուկ անունը չկա. բառը պարզապես տառադարձվել է, իսկ Ռալֆսի բնագրում այն դրված է փոքրատառով:

Մանովզ (Մաոզ) անունով լեռ ամենայն հավանականությամբ չկա: Մասորական տեքստում Տերը պատվիրում է Գեդեոնին զոհասեղան կառուցել «այս բարձունքի գագաթին» (MT 26): Ցուցական դերանունը փաստում է, որ խոսքը Օֆոայի միջնաբերդի մասին է: Ալեքսանդրյան տեքստը **מֵעֹז** ` mā'ōwz `«բարձունք, ամրություն, ամրոց» բառը որպես տեղանուն է թարգմանել՝ «այս Մաոզ լեռան գագաթին», իսկ վատիկանյանը լեռը կոչում է «Մաուեկ», ամեն դեպքում երկու պարագաներին էլ հունարենը լեռը Օֆոայի մոտ է դնում: Հնարավոր է խոսքը քաղաքի միջնաբերդի մասին լինի, որը սովորաբար բլուրների վրա էին կառուցում: Ըստ մեզ *մաոզը* չպետք է տեղանուն թարգմանել:

Ակերզեբան (Յեքեվ-Չեեվ) այն վայրն է, որտեղ սպանել են մադիանացիների առաջնորդներից Չեբին (Չեեվ) (Դատ. Է 25): Յեքեվ-Չեեվ նշանակում է «Չեեվի գինու հնձան»²¹⁴: Նույնը կարելի է ասել նաև **Սորոդեբա (Ցուռ-Օռեվ)** վայրի մասին, որը թարգմանվում է «Օռեվի ժայռ»²¹⁵, այսինքն Օռեվին (մադիանացիների առաջնորդներից է, արևելահայերենում՝ Օրեբ) սպանել են այդ ժայռի վրա (Է 25): Ի դեպ «Արարատ»-ի հրատարակության մեջ նույնպես կիրառված են «Չեբի հնձան» և «Օրեբի վեմ» տարբերակները:

Մարովզ (Մեռոզ) քաղաքը (Ե 23) բնակավայր է, որը նգովվում է Դեբորային և Բարակին չօգնելու համար: Չնայած որ տարբեր մոտեցումներ կան այս քաղաքի գտնվելու վայրի

²¹² Հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, pg. 405-408.

²¹³ Հմմտ. <http://biblehub.com/hebrew/1726.htm> (22.06.2018, 15:41):

²¹⁴ Հմմտ. <https://www.biblegateway.com/passage/?search=Judges+7&version=RSV> (22.06.2018, 15:41):

²¹⁵ Հմմտ. <http://biblehub.com/interlinear/judges/7-25.htm> (22.06.2018, 15:41):

մասին, սակայն մինչև այսօր այս հարցը մնում է չլուծված: Ըստ մոտեցումներից մեկի, Մեռողը գտնվում է Խացոռի մոտ՝ Քիրբետ Մառուսում: Բայց Մեռողի բնակիչներից օգնություն էր ակնկալվում, ուստի պետք է լինեին իսրայելացիներ կամ գոնե օտարազգի դաշնակիցներ: Սակայն քիչ հավանական է, որ Խացոռի մոտակայքում բնակվեին իսրայելացիներ, որոնք սեփական քաղաք ունենային, իսկ օտարազգիներն էլ Խացոռի հետ կդաշնակցեին: Փաստորեն վերոնշյալ մոտեցումը տեքստով չի հիմնավորվում: Նույնը կարելի է ասել մյուս մոտեցման մասին, ըստ որի քանաանացիներով բնակեցված Մեռողը Իսրայելի դաշնակիցն էր: Սակայն տեքստից բխում է, որ նրանք այնուամենայնիվ իսրայելացիներ էին: Ե 23-24-ում հստակ հակադրություն կա՝ օտարական Հայելը (Յաել) օգնեց, ուստի օրհնյալ լինի, Մեռողի բնակիչները, որ յուրայիններ էին չօգնեցին, ուստի նզովված լինեն²¹⁶:

Դատավորաց Ե 14-ում նշվող **Մաքիրը**, ըստ երևույթին ոչ թե քաղաքի անուն է, այլ Մանասեից ծագող ցեղային խումբ (Ա Մնաց. Է 14): Հնարավոր է նաև, որ Ե 14-ում Մաքիրը վերաբերում է Մանասեի ընդհանուր ցեղին:

Մադիամը (Միդիան) ավելի շուտ ոչ թե պետության, այլ էթնիկ խմբի անուն է: Աբրահամը իր Քետուռա կնոջից ուներ Միդիան անունով որդի, որը և համարվում է այս էթնիկ խմբի նախահայրը: Հին Կտակարանում շատ քիչ տեղիներ կարելի է առանձնացնել, որտեղ Միդիանը աշխարհագրական որոշակի վայրի հետ է կապվում (օր՝ Ամբ. Գ 7): Ուխտերով տեղաշարժվելու համար (Զ 5) նրանց հաճախ բնորոշում են որպես բեդվինների կենցաղավարությամբ ապրող թափառական ցեղախմբեր: Սակայն նախորդ դարի երկրորդ կեսին տարված պեղումները, հատկապես, ցույց են տվել, որ նրանք ունեցել են բարձր կենսամակարդակով հասարակություն, որոնք բնակվում էին Աքաբայի ծոցի արևելքում և Հեջազի հյուսիսում: Հայտնաբերվել են մի շարք քաղաքների և գյուղերի մնացորդներ, որոնք թվագրվում են ուշ բրոնզի ավարտով և վաղ երկաթի սկզբով: Ամենայն հավանականությամբ նրանք խոսել են մի լեզվով, որը ներկայիս արաբերենի նախատիպն է եղել: Նրանց մշակույթը ազդեցություններ է կրում Անատոլիայից մինչև Եգիպտոս եղած մշակույթներից, իսկ խեցեղենի պարագային նաև միկենյան աշխարհից²¹⁷:

²¹⁶ Հմմտ. *The Anchor Bible Dictionary*, Vol. 4, pg. 705-706, *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 327.

²¹⁷ St' u *The Anchor Bible Dictionary*, Vol. 4, pg. 815, 818.

Ամադեկը (Ամալեք) համարվում է Իսրայելի երդվյալ թշնամին (Բ Օր. ԻԵ 17-19): Ինչպես Միդյանի պարագային, «Ամալեք» ասելով, ընկալվում էր էթնիկ խումբը²¹⁸: Ըստ որոշ տեղեկությունների, ամադեկացիները բնակվում էին Սինայի թերակղզում, սակայն չի բացառվում, որ նրանք ներթափանցած լինեին նաև Քանաանի հարավ-արևելյան շրջանները: Ծննդ. ԻԶ 16-ը ամալեքացիների բնակեցման վայրը Եդոմում է սահմանում: Ամենայն հավանականությամբ նրանք քոչվոր և կիսաքոչվոր համայնքներով էին ապրում: Սուրբ Երկրի տարածքում նրանց հայտնվելը սեզոնային գաղթի կամ արաշավանքի բնույթ էր կրում, ըստ այսմ Ամադեկի (Ամալեքի) լեռը մատանշում էր նրանց ժամանակավոր բնակության վայրը (Դատ. ԺԲ 15): Դատ. Գ 13 համարը վկայում է, որ նրանք հարմար դաշնակիցներ էին Իսրայելը նվաճողների համար²¹⁹:

Էթնիկ խմբերի հիշատակությունները

Դատավորաց Գ 3, 5 համարում թվարկվում է ժողովուրդների հիմնական կազմը, որոնք բնակվում էին Քանաանի տարածքում: Դրանք այն ազգերն էին, որոնց միջոցով Տերը պիտի փորձեր իսրայելացիներին: Պետք է նշել, որ տարածաշրջանի բնական պայմաններն իսկ նպաստում են այդտեղ բնակվող ժողովուրդների առանձնացմանը: Այդտեղ բնակվող հիմնական էթնիկ խմբերն էին քանաանացիները, քետացիները, ամորհացիները, փերեզացիները, իսաացիները, հեբուսացիները, ամադեկացիներ, գերգեսացիները և փղշտացիները: Համաձայն Ծննդոց Ժ 15-18-ի, այս ազգերը (ի բաց առյալ փղշտացիների և փերեզացիների) հանդիսանում էին Քամի Քանան որդու սերունդները (հմմտ. Ա Մնաց. Ա 13-15): Իսկ փղշտացիները համարվում են Քամի որդիներից Մեստրեմի (եբր. ՝ Միցրայիմ = Եգիպտոս) սերունդները: Այս ենթաբաժնում բացի վերոնշյալներից անդրադառնալու ենք նաև Դատավորաց գրքում հիշատակվող և հարևան տարածաշրջաններում բնակվող, սակայն իսրայելացիների հետ ակտիվ փոխազդեցությունների մեջ եղած ամմոնացիներին, սիդոնացիներին և կինեցիներին: Մյուս ազգություններից եդոմացիների, ամադեկացիների, մադիանացիների և քետացիների մասին խոսելը ավելորդ է (նյութը չերկարելու համար), քանի որ նախորդ ենթաբաժնում տարբեր առիթներով արաված պարզաբանումները բավարար են պատկերացում կազմելու

²¹⁸ Այսպես է նաև «Իսրայել»-ի պարագային, որով ոչ թե տարածաշրջանն է մատնանշվում այլ բնակիչները և տվյալ պարագյին իսրայելացիները: Նման երևույթ կար նաև մեզանում. Հայք անունը սկզբնապես մատնանշել է ժողովրդին և հետո նոր երկիրը:

²¹⁹ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 247, J. Rogerson, նշվ. աշխ., էջ 48:

համար այս ժողովուրդների վերաբերյալ: Ավելացնենք, որ հավելվածում կարող էք գտնել Դատավորաց գրքում թվարկվող բոլոր էթնիկ խմբերը (Հավելված Գ), ընդ որում ոչ միայն գլխավորներին, այլև մասնավոր քաղաքի կամ վայրի բնակիչների անունները, որոնց այստեղ նույնպես մասնավոր կերպով չենք անդրադառնալու²²⁰:

Քանաանացիներ անվանումը ավելի ընդհանուր է, երբեմն այն կիրառվում է Քանաանի տարածքում բնակվող բոլոր ժողովուրդներին բնորոշելու համար (հմմտ. Ծննդ. Ժ 18բ, Հեաու ԺԳ 3): Երբ իսրայելացիները վերջնականապես տիրեցին երկրին, քանաանական բնակչության կենտրոնական հատվածը տեղափոխվեց հյուսիս (ներկայիս Լիբանանի տարածքը): Ուստի նրանց առնչությամբ կարելի է կիրառել նաև «փյունիկեցիներ» անվանումը²²¹: Ք. Քենյոնի կարծիքով, քանաանացիները ձևավորվել են ամորեական քոչվոր ցեղերի ու Բիբլոսի տարածաշրջանում գոյություն ունեցող մշակույթի միաձուլումից և շուրջ Ք. ա 2300 թ. հաստատվել Պաղեստինում²²²: Ավելացնենք, որ Մովսես մարգարեի ուղարկած հետախույզների համաձայն, քանաանացիները բնակվում էին ծովեզերքին (Միջերկրականի ափին) և Հորդանան գետի ափին (Թվոց ԺԳ 30):

Ամորիացիների վերաբերյալ քննարկումները մինչև այժմ էլ շարունակվում են: Բաբելոնյան աղբյուրները վկայում են, որ նրանք եկել են Ամուրրու երկրից, որի մայրաքաղաքը Եփրատի ափին գտնվող Մարի քաղաքն էր: Նրանք Միջագետք մտել են շատ վաղ՝ երրորդ հազարամյակի ավարտին և երկրորդ հազարամյակի սկզբներին ու հաստատել ամորեական դինաստիա՝ Իսին և Լարսա քաղաքներում: Միջագետքում առավելաբար հաստատվել էին հս-արմ հատվածներում և բարձրադիր գոտիներում: Այստեղ նրանք իրենց կենցաղով զանազանվում էին ավելի բարձր մակարդակի վրա գտնվող միջագետքյան այլ հասարակություններից. Ուրից հայտնաբերված վկայությունները նրանց բավականին պարզունակ են ներկայացնում: Նրանք զբաղվում էին անասնապահությամբ²²³: Ամորիացիները քաղաք-պետություններ ունեին նաև Սիրիայում (հմմտ. Հեաու Թ 1)²²⁴: Մեծ թվով ամորիացիներ էին բնակվում Պաղեստինում և Անդրհորդանանում (Դատ. Ա 34-36, Ժ 8, հմմտ Հեաու Թ 1 և այլն)²²⁵: Թվոց գրքի վերոնշյալ

²²⁰ Նշենք նաև որ ավելորդ ենք համարել անդրադառնալը եգիպտացիներին և իսրայելացիներին, որոնք նույնպես տեղադրված են ցանկում:

²²¹ Տե՛ս **W. S. LaSor**, նշվ. աշխ., 129:

²²² Տե՛ս **K. M. Kenyon**, "Amorites and Canaanites", New York, 1966, pg. 76:

²²³ Տե՛ս **B. T. Arnold, B. A. Strawn**, *The World Around the Old Testament*, Grand Rapids, Michigan, 2016, pg. 5-7.

²²⁴ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 151:

²²⁵ Հմմտ. **J. Rogerson**, նշվ. աշխ., էջ 42:

դրվագում նրանք ներկայացվում են որպես լեռների մոտ բնակվողներ: Իսկ Եսայի մարգարեն խոսում է նրանց և խնացիների քաղաքների իսրայելացիների կողմից ավերման մասին (Ես. ԺԷ 9):

Սուրբ գրքում **խնացիների** բնակության վայրերի մասին մի շարք ակնարկներ կան: Դրանք համադրելով կարող ենք ասել, որ նրանք բնակվում էին Լիբանանի Բաղհերմոն (եբր. Բաալ-հերմոն) (Դատ. Գ 3) կամ Հերմոն լեռան մոտ՝ Միցպայում (Հեսու ԺԱ 3), սրան համադրվում է Թվոց ԺԳ 30-ի հիշատակումը, ըստ որի խնացիները նույնպես ներկայացվում են որպես լեռնաբնակներ: Նրանք նաև բնակվում էին Գաբավոնի քաղաքներում (Հեսու ԺԱ 19) և Սիդոնից Բեեռ-Շեվա տանող ճանապարհին (Բ Թագ. ԻԴ 7): Նրանք ապրել են նաև Գազա քաղաքի մատակայքում, և ամենայն հավանականությամբ մինչ փոշտացիների այնտեղ հայտնվելը (Բ Օր. Բ 23):

Մյուս ժողովուրդների վերաբերյալ տեղեկություններն ավելի սահմանափակ են: Դատավորաց գրքում նշվում է, որ **հեբուսացիներն** ապրում էին Երուսաղեմում (Ա 21, հմմտ. Հեսու ԺԵ 63): Վերջինիս Հեբուս անվան համար էլ բնակիչները կոչվում էին հեբուսացիներ (Ա Մնաց. ԺԱ 4)²²⁶: Այլ տեղիներում նշված է, թե նրանք բնակվում էին լեռների մոտ (Թվոց ԺԳ 30, Հեսու ԺԱ 3): Հեսուի գրքի Ժ 5 համարում Երուսաղեմի (Յիռուշալայմ), Քերբոնի (Խեվոն), Հերիմուֆի (Յարմուտի)²²⁷, Ողողոմի (Էզլոնի)²²⁸ և Լաքիսի (Լաքիշի)²²⁹ թագավորները անվանվում են հեբուսացիների հինգ թագավորներ²³⁰:

²²⁶ Հեբուսը հիշատակվում է նաև Դատավորաց գրքում (ԺԹ 11):

²²⁷ Յարմուտը նույնացնում են Khibet el-Yarmuk բնակավայրի հետ, որ տեղակայված է Երուսաղեմից հարավ-արևելք՝ մոտ 24 կմ հեռավորության վրա: Քաղաքը գտնվում էր ավելի քան 1,5 հա մակերեսով բլրապատ տարածքում և զբաղեցնում էր ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող դիրք. գտնվում էր լեռնային շրջանները միջերկրածովյան ափի քաղաքներին կապող ճանապարհին, տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 223:

²²⁸ Կարծիք կա, որ Էզլոնը Թել-Այտունն է, որը գտնվում է Լաքիշից դեպի հարավ-արևելք մոտ 11 կմ հեռավորության վրա: Այս բնակավայրի վերաբերյալ արտաստվածաշնչային աղբյուրներից վկայություններ չկան, տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 225:

²²⁹ **Լաքիսը (Լաքիշ)** գտնվում է Երուսաղեմից հարավ-արևմուտք մոտ 48 կմ հեռավորության վրա: Շֆելայի (սարահարթ, որն ընկած է լեռնային շրջանների և առափնյա հովիտների միջև) կարևոր քաղաքներից մեկն էր, քանզի դեպի լեռնային շրջաններ տանող ճանապարհներից մեկի վրա էր ընկած: Թել Էլ-Ամառնայի արխիվում 5 նամակ է պահպանվել Լաքիսի վերաբերյալ, որոնցից իմանում ենք, որ Լաքիսը հաբիրու ցեղի համար առևտրով էր զբաղվում, վերջիններս էլ սպանել էին Լաքիսի արքա Ջիմրիդուին: Պեղումների արդյունքում այստեղ հայտնաբերվել է միջին բրոնզին վերաբերող լավ ամրացված քաղաք, որը կործանվել է հրդեհի պատճառով (Ք. ա. շուրջ 1500-ական թթ. կեսերին), իսկ ուշ բրոնզի շրջանում այստեղ եղել է բավականին մեծ, սակայն չամրացված քաղաքը, որի պեղումների արդյունքում ավերումի հետքեր չեն հայտնաբերվել, Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 225:

²³⁰ Այս բնակավայրերը բոլորն էլ Երուսաղեմի հարակից լեռնային շրջաններում են և համահունչ են Թվոց ԺԳ 30 համարի «լեռնաբնակ» բնորոշմանը:

Փերեզագիները քանիցս հիշատակվում են Սուրբ Գրքում, սակայն այդ տեղիներում նրանք ուղղակի ներկայացվում են որպես Քանաանի տարածքում բնակվող ժողովուրդներից մեկը և ոչ ավելին, որևէ հստակ բնակության վայր դրանցում չի մատնանշվում (Ելք ԻԳ 23, Ելք ԼԳ 2, Բ Օր Է 1, Հետու Գ 10, Հետու ԺԱ 3, Հետու ԺԲ 8, Գ Թագ. Թ 20 և այլն): Այնուամենայնիվ որոշ տեղեկություններ կարելի է քաղել: Հետու ԺԶ 10 համարում վկայվում է, որ Գազեոում քանաացիների հետ միասին ապրել են նաև փերեզագիները: Իսկ Հետու ԺԷ 15-ում փերեզագիները հանդես են գալիս որպես անտառապատ տարածքներում բնակվողներ: Կարծիք կա, որ այսպես կոչում էին պարսպապատ քաղաքներում չբնակվողներին (սակայն առանց փաստարկումների)²³¹: Հնարավոր է, որ նման կարծիքների համար հիմք է հանդիսացել Բ Օր. Գ 5 համարը²³²: Այս դեպքում կարելի է հետևություն անել, որ փերեզագիներն ավելի շուտ իրենցից ներկայացնում են հասարակական խումբ՝ դասակարգ, քան թե առանձին էթնիկ խումբ: Սակայն սա լոկ վարկած է, ինչը կարող է ավելի լուրջ փաստարկումների:

Գերզեսացիները Քանաանի արևմտյան կողմի բնակիչներից էին: Ենթադրվում է, որ նրանք առնչություն ունեն խեթական և եգիպտական աղբյուրներում հիշատակվող քարաքիշաների հետ: Բացի այդ, փյունիկյան տեքստերում հայտնաբերվել են Grgshy, Grgsh և Grgshm անձնանունները, ինչը ուսումնասիրողներին հիմք է տալիս գերզեսացիներին կապելու փյունիկեցիների հետ²³³:

Փղշտացիները տարածաշրջանի կարևոր էթնիկ խմբերից էին: Նրանց Հարավային Լևանտի մերձափնյա շրջանում հաստատվելը պայմանավորված էր «ծովի ժողովուրդների» միգրացիայով (այս մասին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլխում): Փղշտացիները այդ ժողովուրդներից մեկն էին: Հայտնվելով Հվ Լևանտում նրանք հաստատվում են առափնյա խոշոր կենտրոններում (Ք. ա. շուրջ 1200 թ.): Նրանց քաղաք-համադաշնությունների մասին արդեն խոսել ենք նախորդ գլխում: Բնականաբար նրանք միայն այդ քաղաքներում չին բնակվում, այլ իրենց իշխանությունը առնվազն տարածում էին այդ քաղաքների շրջակայքի վրա: Դանի ցեղին հատկացված նախնական տարածքը

²³¹ St' u **W. S. LaSor**, նշվ. աշխ., 129, **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 79:

²³² «Բոլոր քաղաքներն ամրացրել էին բարձր պարիսպներով, դարպասներով ու դռնափակերով, բացի փերեզագիների չամրացված քաղաքներից, որոնք բավական շատ էին»: Պետք է հավելել, որ այս համարը հետևում է Յոթանասնից տեքստին, եբրայերեն բնագիրը պարզապես խոսում է չպարսպապատված բնակավայրերի մասին:

²³³ St' u *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 2, pg. 472.

գտնվում էր նրանց տիրապետության տակ: Նորեկներն իրենց հետ բերում են նոր մշակույթ և կացության նոր ձև, որը միավորվելով տեղական մշակութային շերտերի հետ յուրօրինակ խառնուրդներ է առաջ բերում²³⁴:

Ամադեկացիները մասին արդեն խոսել նախորդ ենթաբաժնում:

Ամնոնացիները ապրում էին Հաբոկ գետի ավազանում՝ Մավաբից հս: Ասուրական աղբյուրներում նրանք կոչվում են Բիթ-Ամնոն, իսկ նրանց երկիրը Բենամմանու: Նրանք այս տարածքներում հաստատվել են մոտավորապես այն շրջանում, երբ Իսրայելը դեռ թափառում էր անապատում: Ըստ Ծննդ. ԺԹ 38-ի, ամնոնացիների նախահայրը Բենամմին է՝ ծնված Ղովտից և նրա կրտսեր դուստրից²³⁵:

Կինեցիները Սինա թերակղզում և Նեգեվի հարավային սահմաններից մինչև Աքաբի ծոց ընկած տարածքներում ապրող ցեղերից էին (հմմտ. Ծննդ. ԺԵ 18-19, Մ Ա Թագ. ԻԷ 10, Մ Ա Մնաց. Բ 55բ): Ըստ երևույթին նրանք ազգակցական կապեր ունեին մադիանացիների հետ (հմմտ. Ելք Գ 1 և Դատ. Դ 11): Հաշվի առնելով Դատ. Դ 11-ում կինեցի Խեվերի վերաբնակեցման հանգամանքը՝ կարող ենք նշել, որ նրանք ժամանակի ընթացքում տեղափոխվել են հս. շրջաններ՝ դեպի Յիզրեելի հովիտը: Ելք Գ 1 ներկայացված է կինեցիների կապը իսրայելացիների հետ: Նրանք թափառական կյանքով ապրող քարավաններով շրջող հովիվներ (հմմտ. Ե 24-27) և մետաղագործներ էին, նրանց անունն իսկ թարգմանվում է որպես «դարբիններ»²³⁶:

Աստվածությունների հիշատակությունները

Իսրայելացիները իրենց խոստացված երկրում հաստատվելուց հետո, ի հեճուկս Աստծո նախազգուշացումների, ներգրավվում են իրենց շրջապատող ազգերի հասարակական կյանքում: Բնականաբար դա չէր կարող ընթանալ առանց ազդեցությունների և տարբեր սովորությունների ընդօրինակումների: Դա առաջին հերթին վերաբերում է Քանաանի ժողովուրդների կրոնական փորձառությանը:

Այս ենթաբաժնում փորձելու ենք համակողմանիորեն ներկայացնել Դատավորաց գրքում հիշատակվող օտար աստվածությունները: Եվ որպես առաջին քայլ անդրադառնալու ենք Քանաանում և նրա հարևան երկու տարածաշրջաններում՝

²³⁴ Հմմտ. J. Rogerson, նշվ. աշխ., էջ 42-43:

²³⁵ St 'u *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 23-25, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 173, J. Rogerson, նշվ. աշխ., էջ 45:

²³⁶ Հմմտ. *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 3, pg. 6-7, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 243:

Միջազգետքում ու Եգիպտոսում գործող բազմաստվածական համակարգերի առանձնահատկություններին: Ի վերջո փորձելու ենք այդ ամենը համեմատության մեջ դնել Իսրայելի կրոնական հայացքների հետ: Նախորդ հարյուրամյակի հնագիտական մի շարք ձեռքբերումներ բավականին նյութ են տրամադրում պոլիթեիստական վաղ կրոնների առավել հստակ ներկայացման և աստվածաբանական վերլուծության համար:

Այսպես բազմաստվածական համակարգերում աստվածություններն հանդիսանում էին այս աշխարհի սկիզբներն ու ուժերը, որոնք անձնավորված էին և ունեին իրենց անունները: Բնությունն ինքը աստվածային կյանքի հարթակ էր հանդիսանում: Քանի որ հնարավոր չէր աշխարհի սահմաններից դուրս պատկերացնել մեկին, որը կստեղծեր այդ ամենը, ապա աշխարհաստեղծման գաղափարները նախնական անշարժ քառսից այն կողմ չէր անցնում²³⁷: Վերջինս պատկերացնում էին որպես անհատակ օվկիանոս կամ անդունդ, որտեղից երկիր էին հոսում քաղցրահամ և աղի ջրերը: Միջազգետքում «անդունդը» ներկայացվում էր տղամարդկային և կանացի անձնավորված սկիզբներով՝ Ապսուն և Թիամաթը: Նրանց միությունն էլ համարվում է հենց արարչության սկիզբը: Նրանք ծնում են մի շարք աստվածների, որոնց ներքո հասկացվում էին արարման զանազան սկիզբներ (զանազան երևույթներ): Կարգավորվածությունը հաստատվում է միայն այն ժամանակ, երբ կրտսեր աստվածները իրենց գլխավորի հրամանատարությամբ տիեզերական մարտի են դուրս գալիս ընդդեմ քառսի: Ապսուն կախարդվում և սպանվում է, իսկ Թիամաթը երկու կեսի է բաժանվում. մարմնի մի մասը երկինք է դառնում, մյուս մասը՝ երկիր: Աստվածներն էլ բաժանվում են երկու խմբի. մեկը մնում է երկրի վրա, մյուսը՝ գնում է երկինք: Այնուհետև նրանց համպատասխան գործառույթներ են վստահվում: Մարդն ստեղծվում է որպես աստվածների ստրուկ: Մարդկանց թագավորները, որոնց աստվածների խորհուրդն էր ընտրում, հասարակության կարգ ու կանոնի պահապաններն էին հանդիսանում: Հասարակությունը որպես այդպիսին մարդկային երևույթ էր, այլ ոչ թե արարչության մաս: Կյանքը անհաստատ էր և Նոր Տարվա ամենամյա ծիսական արարաողության ժամանակ արարչության մարտը կրկնվում էր, որտեղ աստվածների գլխավորի դերը ստանձնում էր հենց թագավորը²³⁸:

Եգիպտական աշխարհարարման պատկերացուների համաձայն Արևի աստված Ռան ամենամյա (երբեմն ամենօրյա) պայքարի մեջ է մտնում քառսի և խավարի վիշապի հետ:

²³⁷ Տե՛ս **G. E. Wright**, *Biblical Archaeology*, Philadelphia, 1960, pg. 1.

²³⁸ Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 1-2:

Կյանքի նկատմամբ վերաբերմունքն այլ էր: Հասարակական կարգերը այստեղ ընկալվում էին որպես արարչության ժամանակ հաստատված երևույթներ:

Արարչության վերաբերյալ մի քանի հին եգիպտական ընկալումներ գոյություն ունեն, որոնցում շեշտված է գոյություն ունեցող կարգերի ամբողջականությունը և մեծությունը: Դրանցից մեկի համաձայն քառսի օվկիանոսից բարձրացող լեռան վրա կանգնում է հավերժական թագավոր Ռան և սկսում է արարչությունը՝ ձեռնաշարժություն կատարելով: Ըստ այսմ, ամեն ինչ այդ թվում և գոյություն ունեցող հասարակական կարգերը աստծո անմիջական մասնիկն են ընկալվում: Փարավոնի անձը երաշխիք էր այդ կարգերի համար, քանզի նա չէր ընկալվում որպես մարդ, այլ երկրի վրա աստվածայինի մարմնավորումն էր և Ռա աստծո որդին²³⁹:

Քանաանում արարչության մասին ընկալումները շատ կողմերով համընկնում էին միջագետքյան ընկալումներին, չնայած որ դրանց մասին համեմատաբար քիչ բան է հայտնի: Արարչությունը նկարագրվում է որպես Բաալի²⁴⁰՝ աստվածների արքայի և Լևիաթանի (Լիտանո) կամ Յամուի (Յամ)²⁴¹՝ հավիտենական քառսի վիշապի միջև ընթացող պայքար²⁴²: Հին Կտակարանում քանիցս հանդիպում է քառսի մարմնավորում հանդիսացող վերոնշյալ պատկերը՝ անվանվելով «օձ», «վիշապ», «հրեշ», «Ռահավ», «Լևիաթան» և «Ծով» (Սղմ. ՀԳ 13-14, ՁԸ 10, Հոբ Գ 8, ԽԱ 1, Ելք ԻԷ 1, ԾԱ 9, Ամոս Թ 3, հմմտ Հայտ. ԻԱ 1): Այլ կերպ ասած, արարչությունը նրանց համար տարերային զանազան ուժերի դեմ մղվող պայքար էր: Ըստ այսմ գոյություն ունեցող աշխարհակարգը համարվում էր բազում կամքերի կողմից հաստատված ներդաշնակ մի իրողություն: Արարչության ժամանակ հաստատվում է մի որոշակի սկզբունք, որը կարելի է ընկալել որպես ճակատագիր, որին ենթակա են նաև աստվածները: Ի հակադրություն այս ամենի աստվածաշնչյան հավատը նման սկզբունքներից չի բխում. միայն Աստված է հավիտենական, Նա վեր է ամեն ինչից և որևէ սկզբունքից:

Հետաքրքրական մի փաստ կարելի է առանձնացել կապված բնական որոշ երևույթների, ի մասնավորի պարբերաբար փոփոխվող շրջափուլերի հետ (գիշեր-ցերեկ, տարվա եղանակներ և այլն): Պոլիթեիստական համակարգերում կյանքը շարժվում է ի հաշիվ բնության ուժերի: Ըստ այսմ կրոնական գրականության մեջ շեշտված է, ոչ թե

²³⁹ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 2:

²⁴⁰ Նույն սուրբգրային Բահադն է:

²⁴¹ Թարգմանվում է ծով:

²⁴² Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 2-3:

մարդկանց կյանքը, այլ աստվածներինը, որը համընկնում է բնական երևույթների հետ²⁴³: Նրանց կյանքի զանազան դրվագների՝ սիրո, պատերազմների և այլնի, մասին պատմող առասպելները բացահայտում են այն հիմնական օրենքները, որոնցով պետք է առաջնորդվեն հասարակակն կյանքում:

Բազմաստվածական առասպելաբանությունների համեմատ Աստվածաշունչը էական տարբերություններ ունի: Այստեղ պատմությունը միահյուսված է մարդկանց կյանքին: Կյանքի ու պատմության ընթացքը սահմանում է աստվածային բացարձակ Կամքը և ոչ թե տարրերային ուժերը: Աստված պատմության Տերն է: Նա բնության կամ դրա առանձին տարրերի մամնավորումը չէ, այլ ոչնչից կախում չունեցող Ինքնագո սկիզբ է, բնության ու մնացյալ ամեն բանի Արարիչը: Որպես Աարարիչ նա առանձնանում է և բարձր է իր իշխանության ներքո գտնվող արարածներից²⁴⁴: Այս պատճառով էլ «արարում»-ը ներկայացվում է, ոչ թե որպես պայքար, այլ որպես Միակ և Բացարձակ Աստծո արարում: Հրեական համատեքստում էլ իհարկե խոսվում է «անդունդների», «ջրային խորքերի», և «խավարի» մասին (հմմտ. Ծննդ. Ա 1-2): Եբրայերեն **תְּהוֹמֹת** (tehom) բառը առնչվում է բաբելոնյան առասպելի Թիամաթի հետ: Պետք նշել, որ հիմքը նույնն է, բայց մեկնաբանությունները տարբեր են. եբրայական մտածողության մեջ «անդունդը» անձնավորված չէ: Բացի այդ արարչությունը ժամանակին պատմության մեջ է ու դրա սկզբում և ոչ ժամանակից դուրս մի իրողություն (Ծննդ. Ա 1): Ելքի ժամանակ հայտնվելով իր ժողովրդին՝ Աստված ցուցադրում է իր մեծ ուժը, որի առաջ խոնարհվում են բնության ուժերը և ինքը փարավունը (Ելք Է-ԺԱ, ԺԴ և այլն), որն ինչպես արդեն վերը նշեցինք, ըստ եգիպտացիների, երկրի վրա աստվածայինի մարմնավորումն էր և աստծո որդի: Ականատես լինելով պատմական ակնթարթի մեջ Աստծո միջամտությանը՝ Իսրայելը սեփական պատմությանը մոտենում էր, որպես Աստծո միջամտություն երկրային իրադարձություններին: Վերջիններս կարևոր են Աստծուն հասկանալու համար: Ուստի Իսրայելը դեմիֆոլոգիզացնում էր վաղնջական առասպելները՝ դրանք ներկայացնելով Ամենքի Տեր և Արարիչ Աստծո մասնակցության տեսանկյունից²⁴⁵:

Համեմատած բազմաստվածական կրոնների, տարբերվում են նաև մարդաբանական ընկալումները: Այստեղ մարդն ունի բարձր պատիվ և արժանիքներ, քանզի ստեղծվել է

²⁴³ Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 3:

²⁴⁴ Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 4:

²⁴⁵ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 5:

որպես մի էակ, որն ունի ազատ կամք ու պատասխանատու է սեփական արարքների համար (հմմտ. Ծննդ. 16-17)²⁴⁶: Այս արժանիքը շնորհվել է նրան Աստծու կողմից, որի պատկերով էլ արարվել է մարդ (Ծննդ. Ա 26-27): Վերջին միտքը միայն բավարար է շեշտելու համար մարդու վերաբերյալ աստվածաշնչյան ընկալումների վեհությունը: Պետք է նաև նշել, որ բացառվում է մարդու Աստված դառնալը կամ գոնե որևէ միստիկական դրսևորումներով համեմատվելը Աստծո հետ: Աստված իր արարածներից խորհրդավոր հեռավորության և անհասանելիության մեջ է գտնվում:

Հին Իսրայելի կրոնական ընկալումների մեջ կարելի է յուրօրինակ սինկրետիզմի հանդիպել: Իսրայելի Աստծուն տրվում են անուններ և վերագրվում գործառույթներ, որոնք բնորշ են քանաանական աստվածներին. առաջին հերթին Բաալին: Էլը և Բաալը հաճախակի կիրառվում էին որպես Աստծո անուններ: Իշբաալ (Բաալի կամ Տիրոջ մարդը), Բեելյադա (Բաալը գիտի), Բեալիյահ (Յահվեն Բաալն է) այս և նմանատիպ այլ անունների կիրառությունը վկայում է ոչ այն մասին, որ Իսրայելը խոնարհվում էր քանաանակն աստծուն, այլ այն, որ այդ անունը յուրացվել էր իսրայելացիների կողմից և կիրառվում էր Աստծո վերաբերյալ²⁴⁷: Բայց հաշվի առնելով սինկրետիզմից եկող վտանգը՝ հետագայում Բաալ անունը դուրս է մղվում կիրառությունից: Դատ. Ձ 32-ում Գեդեոնին վերանվանում են Հերոբոադ՝ Բահադի դատաստան (եբր.՝ Յերուբաալ՝ թողեք Բաալը պայքարի նրա դեմ): MT Բ Թագ. ԺԱ 21-ում Գեդեոնին կոչում են Յերուբոշետ, որտեղ «բաալը» փոխարինվել է «զզվանք» կամ «ամոթ» բառով²⁴⁸: Այս բառախաղը արտահայտում է վերաբերմունքը Բաալի նկատմամբ: Հին Կտակարանում կարելի է նմանատիպ մեկ այլ օրինակ գտնել: MT Բ Թագ. Ա 2-ում հիշատակվում է Էքրոնի աստված Բաալ-Ջերուբը, որը թարգմանվում է «ճանճերի տեր», բայց Բաալին կոչում էին Բաալ-Ջերուլ (Բարձրյալ տեր)²⁴⁹: Փաստորեն իսրայելացիները նման բառախաղի միջոցով ծաղրում և խայտառակում էին Բաալի պաշտամունքը: Իսկ ահա Օսեի մարգարեության Բ 16-17 համարները ակնհայտ պայքարի մասին է վկայում. «Այն օրը,- ասում է Տերը,- ինձ կանվանի «Իմ ամուսին» և

²⁴⁶ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., նույն էջում:

²⁴⁷ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 8: Հարևանցիորեն նշենք, որ «Բաալ» անվանումը այնքան խորը արմատներ է գցել, որ միջնադարյան Սիրիայում քաղաքներից մեկը կոչվում էր Բաալբեկ, հմմտ. Հմմտ. **S. K. Raphael**, նշվ., աշխ., էջ 49, 86, 129:

²⁴⁸ Վերոնշյալ մտքին հանգելու համար սուրբգրային տեղին ընթերցեք մասորական բնագրով Բ Սամ. Ա 21: Հմմտ. **W. S. LaSor**, նշվ. աշխ., էջ 613:

²⁴⁹ Տե՛ս *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, pg. 381.

Բահադիմ չի կոչի ինձ, կվերացնեմ Բահադիմի անունները նրա բերանից և այլևս չեն հիշվի նրանց անունները»: Սակայն քանաանական «Ադոն»՝ Տեր (MT Ես. ԿԱ 1 և այլն) և «Էլյոն»՝ Բարձրյալ կամ Ամենաբարձրյալ (MT Ծննդ. ԺԴ 18 և այլն) անվանումները պահապանվում և շարունակվում են կիրառվել Յահվեի համար:

Վաղ շրջանի մշակույթը ուսումնասիրելով՝ կարելի է պատկերացում կազմել, որ քանաանական գլխավոր աստվածներն հիմնականում մարդկային կերպարանք են ունեցել, իսկ մյուս ավելի փոքր ուժերի մեջ եղել են նաև կենսադանակերպ հիֆրիդներ: Սակայն Ռաս շամբայում հայտնաբերված տեքստերից մեկը թվարկում է Քանաանի աստվածներին և այստեղ նրանց բոլորի համար էլ ցույց է տալիս, որ իսկապես ու խոյ բառերը օգտագործված են որպես մակդիրներ²⁵⁰: Այլ կերպ ասած քանաանական միտքն իր աստվածներին պատկերելիս հենվում էր կյանքից վերցված զանազան իրողությունների վրա:

Քանաանի աստվածների պարագային պետք է նշել, որ որևէ հատուկ բարոյական չափանիշներով չէին առաջնորդվում: Այն, ինչը աստվածային էր, միշտ չէ, որ բարայական էր: Հնագույն օրենսգրական ժողովածուներից դատելով՝ մարդիկ ավելի բարոյական էին, քան աստվածները:

Աստվածների մասին պատմությունների հիմնական նպատակը կյանքի զանազան երևույթների ու կողմերի պարզաբանումն է²⁵¹: Եգիպտական առասպելներից մեկի համաձայն, ամեն օր արևի աստվածը՝ Ռան, գնում է հանդերձյալ աշխարհ, որպեսզի այնտեղ էլ լուսավորի, իսկ նրան այդ ընթացքում փոխարինում է Տոտը, որն ըստ էության լուսինն է, այս կերպ Հին Եգիպտոսում բացատրում էին օրվա գիշեր-ցերեկ հերթափոխը²⁵²: Քանաանում, որպեսզի բացատրեին տարածաշրջանի կլիմայական փոփոխությունները՝ անձրևի երկարատև բացակայությունը, բուսականության չորանալը, և հետո էլ մի քանի ամիս անընդմեջ անձրև գալը ու բնության վերազարթոնքը (հատկապես ապրիլ ամսին), քանաանացիները պատմում են հետևյալ առասպելը: Անձրևի և բնության զարթոնքի մարմնավորում Բաալը ամեն զարնան վերջին պարտություն է կրում Մահվանից (Մոտ կամ Մուտու, բոց.՝ մահ) կամ «ավերողներից» և մահանում: Իրենց հաղթանակից հետո Մահը կամ կործանարան ուժերը տիրում են աշխարհին, որի ժամանակ համատարած չորային եղանակ է լինում և բնությունը չորանում է: Սակայն երբ Բաալի ռազմատենչ

²⁵⁰Տե՛ս **N. Wyatt**, *Religious Texts from Ugarit*, 2nd edition, Bodmin, Cornwall, 2002, pg. 427.

²⁵¹ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 9:

²⁵² Տե՛ս **И. В. Пак**, *Мифы Древнего Египта*, Санкт-Петербург, 1993, стр. 80.

կինը՝ Անաթը հաղթում է Մոտին և Բաալը վերակենդանանում է,²⁵³ սկսվում է անձրևների շրջանը: Իսկ գարնանը բուսականությունը ծաղկում և կանաչում է, որովհետև Բաալը և իր կինը միասին հարաբերվում են: Նմանատիպ բացատրություն էին տալիս նաև, երբ երաշտ կամ սով էր լինում: Իհարկե այս առասպելն իր ընդհանուր գծերով կարելի է գտնել նաև Հին Աշխարհի բազմաստվածական այլ համակարգերում (Բաբելոնում՝ Թամմուզ և Իշտար, Եգիպտոսում՝ Օսիրիս և Իսիս, Հունաստանում՝ Ադոնիս և Աֆրոդիտե): Վստահաբար իսրայելացիները լավ ծանոթ էին իրենց հարևանների մեջ տարածված առասպելներին: Կարծիք կա, որ Օսիա մարգարեն օգտագործել է արտահայտություններ, որոնք նման էին այդ առասպելներում կիրառվածներին. «Երկու օրից Նա մեզ կվերակենդանցնի և երրորդ օրը կկանգնեցնի մեզ», «Նա կգա ինչպես հորդառատ անձրև, ինչպես գարնան անձրև, որը ոռոգում է երկիրը» (MT 2-3)²⁵⁴:

Չնայած հին մերձավորարևելյան առասպելաբանություններից բավականին օրինակներ կան, սակայն այդ ժամանակների կրոնական կյանքի մասին տեղեկությունները իրենց առատությամբ աչքի չեն ընկնում: Քանի որ, ըստ նրանց, բնությունը «կենդանի» է և նրանում բազում ուժեր գոյություն ունեն, մնում էր մշակել որոշակի միջոցներ, որպեսզի հարաբերությունների մեջ մտնեին այդ ուժերի հետ: Կարելի է ասել, որ իրենց կրոնական քայլերով մարդիկ փորձում էին գրավել աստվածների ուշադրությունը, որոնք կարող էին իրենց օգնել: Նրանց պաշտամունքը միտված չէր մարդկանց բարոյապես ազնվացնելու: Դրա համար հասարակությունն ուներ իր օրենքները²⁵⁵:

Ռաս-Շամրայում հայտնաբերված տեքստերի և Հին Կտակարանի հաղորդած տեղեկությունների համադրմամբ կարելի է որոշակի պատկերացում կազմել Քանաանում գործող ծիսական կյանքի մասին: Այն առաջին հերթին ներառում էր զոհաբերությունները: Հայտնի է, որ մեծ տարածում ունեն կենդանիների և թռչունների զոհաբերությունները: Բայց մարդկանց զոհաբերությունները (հատկապես երեխաներինը), անձանթ երևույթ չէր ոչ միայն Քանաանում, այլև Հին Աշխարհում ընդհանրապես: Դ Թագ. Գ 27-ում

²⁵³ Հմմտ. **N. Wyatt**, նշվ., աշխ., էջ 129, 134, 135-137, 165-166, այստեղ կարող եք կարդալ Բաալի պարտությունն ու մահը, ենթադրաբար «կործանարարներից», և թե ինչպես է բնությունը սկսում չորանալ, տե՛ս նաև **J. H. Walton**, *Ancient Near East Thought and the Old Testament: Introducing the Conceptual World of the Hebrew Bible*, Michigan, 2006, pg. 44.

²⁵⁴ Տե՛ս **G. E. Wright**, նշվ., աշխ., էջ 11:

²⁵⁵ Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 12:

ներկայացված է Մովսիսի արքա Մոսայի (Մեշայի) անդրանիկ որդու զոհաբերությունը, այստեղ երևում է նաև իսրայելացիների բացասական վերաբերմունքը երևույթի հանդեպ: Սուրբ գրքի այլ տեղիներում էլ է խոսվում մանուկների զոհաբերության մասին, ինչը վկայում է դրա տարածվածությունը, և որ գաղափարական պայքար էր տարվում այդ տեսակ զոհաբերությունների դեմ (Բ Օր. ԺԲ 30-31, ԺԸ 10, 12, Դ Թագ. ԻԷ 17, Սաղմ. ՃԵ 37, Երեմ. Է 31, ԼԲ 35 և այլն): Անդրադառնալով Դատվորաց գրքին՝ պետք փաստել, որ այստեղ նույնպես երևում են մարդկանց զոհաբերության հետքերը: Հեփթայեն իր հաղթանակի դիմաց խոստանում է զոհաբերել իր տնից իրեն առաջինը ընդառաջ եկողին, արդյունքում զոհաբերվում է նրա միակ դուստրը (Դատ. ԺԱ 31, 34-40)²⁵⁶: Այս դեպքից կարելի է եզրակացնել, որ մարդկանց զոհաբերությունը այն աստիճանի տարածված երևույթ էր, որ դրանից ազդվել էին անգամ իսրայելացիները, հակառակ այն բանին, որ Տիրոջից պատվեր ունեին խուսափելու դրանից:

Քանաանի տարածքում տարածված երևույթներ էին նաև կախարհությունները, զանազան գուշակությունները և դրանց տարատեսակները: Դարձյալ որպես վկայություն կարող ենք բերել սուրբգրային մի շարք տեղիներ (հմմտ. Ղև. ԺԹ 26, Ելք ԻԲ 18, Բ Օր. ԺԸ 10-12, Ա Թագ. ԻԸ 9-10, Դ Թագ. ԺԷ 17, ԻԱ 6, Միքիա Գ 7): Ընդ որում դրանք ոչ միայն վկայում են այն մասին, որ դրանց վրա արգելք կար, այլև այն, որ իսրայելացիների կողմից դրանք կիրառվում էին:

Հին Մերձավոր Արևելքում պանթեոնի գլխավոր աստվածությունը ընկալվում էր նաև որպես թագավոր²⁵⁷: Այդպիսի համարում ունեին Էլը կամ Բաալը քանաանացիների մոտ, Դագոնը՝ փղշտացիների մոտ, Մարդուկը՝ Բաբելոնում, Ռան՝ Եգիպտոսում, Քամուսը՝ Մովսիսում, Միլկոնը՝ Ամմոնում, Աշշուրը՝ Ասորեստանում և այլն: Նման ընկալում առկա է նաև Յահվեի նկատմամբ (հմմտ. Ա Թագ. Ը 7): Աստվածության մասին նման ընկալումը պայմանավորված էր այն գաղափարով, որ նա մասնակցում է պատերազմական գործողություններին և շինարարական ծրագրերին (հատկապես Տաճարների պարագային), հասարակության մեջ արդարություն ու կայունություն է պահպանում, ինչպես նաև ազդում բնության վրա և ապահովում պտղաբերությունը (հմմտ. Ելք ԻԷ, Բ Օր. Է 22-24, ԺԱ 10-15 և այլն): Հին Կտակարանը լեցուն է տեղիներով, որոնցում

²⁵⁶ Մարդկանց զոհաբերությունների մասին վկայող հատվածներ են նաև Հեսու Զ 26 և Գ Թագ. ԺԶ 34 համարները: Այս տեղիներում ընդգծված է հիմնարկեթի արարողության ժամանակ կատարվող զոհաբերության գաղափարը:

²⁵⁷ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 515.

պատերազմում հաղթանակը Տիրոջն է վերագրվում (Բ Օր. ԺԱ 23, Դատ. Դ 14, Է 15, 22, ԺԱ 32 և այլն): Փղշտացիներն էլ Սամսոնին հաղթելու համար Դագոնին էին փառաբանում (Դատ. ԺԶ 23-25): Այս նույն պատումը ներկայացնում է նաև Յահվեի ու Դագոնի հակամարտությունը և Սամսոնի կողմից փղշտացիների տաճարի ավերումը՝ Տիրոջից ստացված գործությամբ, ամրագրում է Վերջինիս բացարձակ առավելությունը²⁵⁸: Պատերազմում հաղթանակը նշանակում էր, որ տվյալ աստվածության իշխանությունը տարածվում էր նաև պարտված կողմի աստծո կամ աստվածությունների վրա²⁵⁹: Նման ընկալման պատճառով պատերազմներում շատ հաճախ ռազմավարի մեջ տեղ էր գտնում պարտված կողմի գլխավոր աստծու արձանը: Ուխտի տապանակի գերեվարումը այս համատեքստում է ընթերցվում Ա Թագ. Դ 11: Տեղին է հիշել նաև, երբ Ասորեստանի Սենեքերիմ արքան բանակցում էր Հուդայի Եզեկիա արքայի հետ, իր կողմից պարտության մատնված ազգերի ձախողումը նրանց աստվածներին էր համարում: Այսպես է նաև կյանքի այլ ոլորտներում, ինչպես օրինակ, եթե երաշտ էր լինում նշանակում է, որ աստծուն ինչ որ մի բան է պատահել²⁶⁰:

Քանաանում կրոնի մեջ առանցքային տեղ էր զբաղեցնում պտղաբերության խնդիրը: Մեծաթիվ ծիսական արարողությունների գլխավոր խնդիրը հողի բերրիության, հոտերի ծնելիության և մարդկանց սերնդատվության ապահովումն էր: Հավանական է, որ մի շարք կրոնական տոնախմբությունների ժամանակ «բեմականացվում» էին որոշ առասպելներ²⁶¹: Այս առում հատուկ նշանակություն ունեն գարնանային տոնախմբությունը, որի ժամանակ էլ, ըստ ընկալյալ սովորության, տեղի էր ունենում անձրևի ու բնության զարթոնքի աստծո (Բաալի) և պտղաբերության աստվածուհու (Անաթի) միավորումը: Հայտնի է, որ նման տոնակատարությունները հիմնականում կապվում էին ծիսական «անառակությունների» հետ²⁶²: Ի դեպ պտղաբերության աստվածուհին պատկերվում էր «սրբազան անառակի» արտաքինով և «սուրբ» էր հորջորջվում: Արդեն նշել ենք, որ Անաթ աստվածուհուն պատկերում էին որպես ձիու վրա նստած մերկ կին՝ վահանով և նիզակով զինված

²⁵⁸ Տե՛ս **M. Brettler**, նշվ. աշխ., էջ 57: Յահվեի ու Դագոնի հակամարտությանն է վերաբերում նաև Ա Թագ. Ե գլուխը:

²⁵⁹ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 515:

²⁶⁰ Հիշե՛ք Բաալի մասին վերը ներկայացված առասպելը:

²⁶¹ Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 12-13:

²⁶² Մա այն երևույթն էր, երբ համապատասխան աստվածությանը, ըստ առժանվույն, պաշտամունք մատուցելու համար, տղամարդիկ և կանայք գնում էին սրբատեղիներ, որտեղ և սեռական հարբերություններ էին ունենում հատուկ այդ բանի համար առանձնացված կանանց և տղամարդկանց հետ:

(որովհետև նաև պատերազմի աստվածությունն էր): Այս պատկերը հիմնական գծերով կրկնվում է նաև այլ բազմաստվածական համակարգերում: Օրինակ՝ Եգիպտոսում դա առյուծի վրա նստած մերկ կին է՝ ձեռքերին ծաղիկներ և օձ: Քանաանի տարածքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ կավե սալիկներ, որոնց վրա քանդակված են նմանատիպ կանանց պատկերներ: Ամենայն հավանականությամբ դրանք պատկերում են պտղաբերության աստվածուհուն՝ «սրբազան» անառակի դերում: Չի բացառվում նաև այն, որ ամեն տանը լինեին այսպիսի քանդակներ՝ տվյալ տան առատության և լիության համար²⁶³:

Իսրայելացիների համար հենց նմանատիպ կրոնական ընկալումներն էին, որ խորշելի էին համարվում և հիմք ստեղծում մարտնչելու նման պաշտամունքի դեմ:

Քանաանացիների պաշտամունքի հիմնական վայրերը, այսպես կոչված «բարձունքներն» էին, որտեղ և կանգնեցվում էին զոհասեղաններ (Ա Թագ. Թ 12, Գ Թագ. Գ 4): Պաղեստինի տարածքում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են զոհասեղաններ՝ անկյուններին եղջյուրներ: Դրանք բավականին փոքր են զոհի այրման, ուստի ամենայն հավանականությամբ նախատեսված են անարյուն զոհաբերման՝ ընծաների համար: Չոհասեղանների կողքին կանգնեցվում էին նաև սրբազան համարվող պուրակներ, ծառեր կամ սյուներ: Ծառերն, ամենայն հավանականությամբ, Աշերայի²⁶⁴ կամ մեկ ուրիշ իգական աստվածության պաշտամունքի խորհրդանիշներն էին: Ինչ վերաբերում է սյուներին, ապա դրանք արական աստվածության, օրինակ՝ Էլի կամ Բաալի խորհրդանիշներն են: Ուշ փյունիկյան տաճարներում նման սյուները զբաղեցնում էին գլխավոր աստվածության համար նախատեսված կենտրոնական տեղը²⁶⁵: Իսրայելի կրոնատած բնակիչներին հանձնարարված էր քանդել նմանատիպ կռապաշտական կառույցները:

Բարձունքները պաշտամունքի համար նախատեսված միակ վայրերը չէին: Քանաանեական քաղաքներում էլ առանձնացվել էին շինություններ նախատեսված աստվածությունների պաշտամունքի համար: Գոյություն ունեին հավատալիք, ըստ որի, աստվածներն էլ մարդկանց նման տան կարիք ունեն: Պաղեստինի և Սիրիայի տարածքում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են նմանատիպ բազմաթիվ

²⁶³ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 13:

²⁶⁴ Հունարենը փոխարենը կիրառում է *αλσος* բառը, որը կարելի թարգմանել ծառ և պուրակ, բայց ոչ անտառ: Մենք գտնում ենք, որ «Աշերան» «անտառ» թարգմանելը (որպիսին հայերենում է) սխալ է:

²⁶⁵ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 14:

պաշտամունքային կառույցներ: Բեթ-Շանում, անգամ, հայտնաբերվել են նմանատիպ մի քանի կառույցներ, որոնք վերաբերում են Ք. ա. 14-10-րդ դդ.: Լախիշում հայտնաբերվել է պաշտամունքային լավ պահպանված մի կառույց, որ կործանվել է շուրջ Ք. ա. 1220 թ.: Փլատակների տակ հայտնաբերվել են կենդանիների և թռչունների մեծ քանակությամբ ոսկորներ, ընդ որում դրանց աջ ոտքի կամ առջևի թաթի վերին մասը: Շատ քիչ թվով ոսկորներ են, որ իրենց վրա կրում են այրման հետքեր, սա ենթադրել է տալիս, որ միսը հիմնականում եփում էին (հմմտ. Ա Թագ. Բ 12-17)²⁶⁶:

Նշենք նաև, որ հայտնաբերվել են աստվածների պատկերներով հուշարձաններ և մեծ քանակությամբ արական աստավածության երկաթյա արձանիկներ. Հին Կտակարանում դրանց դեմ զգուշացում կա (Ամբ. Բ 19):

Քանաանացիների պատկերացմամբ գետնի տակ գտնվում է անդրաշխարհը, Հին Կտակարանը այն կոչում է «փոս» (շեոլ): Մահվանից հետո մարդ իջնում է այնտեղ և ապրում է իրենից առաջ մահացանների հետ միասին: Դա մի մռայլ և խավարչտին վայր է, որտեղ վաղ, թե ուշ հայտնվելու են բոլորը, անկախ իրենց անցկացրած երկրային կյանքից և որտեղ բոլորը հավասար են,²⁶⁷ այսինքն՝ երկնքի, վերականգնման և վարձատրման գաղափարներն այստեղ բացակայում են: Այս տեսանկյունից նմանություններ կան իսրայելացիների պատկերացումների հետ: Նման են նախ թաղման արարողությունները. սովորաբար ընտանիքի անդամներին միասին էին թաղում, ինչպես Աբարահամի և Սառայի պարագային: Մարմինների հետ միասին, դրվում էին առարկաներ, որոնք մահացածը հաճախ էր օգտագործում կենդանության օրոք: Ըստ երևույթին, քանաանացիներ մոտ պատկերացում կար, ըստ որի, այդ առարկաները անդրաշխարհում էլ կարող են օգտակար լինել: Սովորաբար դնում էին զարդեր, զենքեր և կամ սպասքներ: Խեցեգործության ի հայտ գալուն զուգընթաց, զանազան կաթսաներ, բաժակներ և պնակներ դառնում են թաղման արարողության անբաժանելի մասը²⁶⁸:

Հանրագումարի բերելով վեր ասվածները՝ նշենք, որ թեև ակնահայտ նմանություններ կան քանաանացիների և իսրայելացիների կրոնական ընկալումների միջև, սակայն զուգահեռաբար գոյություն ունեն նաև ծանրակշիռ տարբերություններ: Խոսքն առաջին հերթին աստավածության մասին պատկերացումներին է վերաբերում: Աստված Միակ է,

²⁶⁶ Հմմտ. **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 15:

²⁶⁷ Տե՛ս *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 215-218, **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 16, հմմտ. <http://eleven.co.il/judaism/theology/10076/> (25.04.2018, 22:41):

²⁶⁸ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 16:

Նրա կողքին ոչինչ և ոչ ոք չկա: Նա մի «նախանձոտ» Աստաված է, Որը պահանջում է, որ միայն Իրեն պաշտեն և երկպագեն: Նա չունի ընտանիք՝ կին և կամ երեխաներ: Հետաքրքրական է, որ Հին Կտակարանում, անգամ «աստավծուհի» բառն է բացակայում: Սա խոսում է այն մասին, որ կանացի սկիզբը, որպես աշխարհաստեղծման հիմք բացառված էր: Սակայն Քունթիլլեթ Աջրուդից և Քիրբեթ Էլ-Քումից հայտնաբերված Ք. ա. 9-րդ և 8-րդ դդ. թվագրվող մի քանի գրություններ Յահվեյի կողքին նշում են Աշերային, ինչն ամենայն հավանականությամբ ավելի վաղ արամասներ ունեցող Էլ/Յահվե սինկրետիզմի արդյունքն է, որով Էլի գուգրնկերը կապվում է Յահվեի հետ²⁶⁹: Հին Կտակարանում էլ կարելի տեսնել, որ չնայած որոշ քաղաքական և կրոնական առաջնորդներ ժողովրդին մղում էին դեպի միաստվածական պաշտամունքը, այնուամենայնիվ ժողովրդական լայն զանգվածները առավել հակված էին բազմաստվածությանը: Արդյունքում Իսրայելի կրոնական պատկերացումներում հայտնվում են մի շարք օտարամուտ տարրեր:

Աստծո անվանումների պարագային, նշենք, որ դրանք վերաբերում են հասարակությանը և ոչ բնության ուժերին, ինչպես օրինակ Աստված Տեր, Թագավոր, Դատավոր, Ամուսին և այլն: Քանաանական միջավայրում նույնպես դրանք կիրառվում էին աստվածների համար, սակայն բնության հետ կապված մակդիրները առավել տարածված էին (երկինք, փոթորիկ, երկնային մարմիններ և այլն)²⁷⁰: Իսրայելացիների կրոնական պատկերացումներում Աստծո ներակայությունը երբեմն դիտվում էր այս կամ այն տարրերային ուժի մեջ, բայց միայն այդքանը, որպես աստվածության անվանում դրանք չեն կիրառվում: Բնությունը Աստծո արարչությունն է և ոչ ավելին: Աստվածաշունչը Աստծուն մարդակերպորեն է պատկերում, այն էլ մարդու հետ շփման հնարավորության համար:

Կարևոր առանձնահատկություն է, նաև Աստծուն ոչ մի կերպ չպատկերելը: Պեղումների արդյունքում չի հայտնաբերվել որևէ պատկեր, որը Յահվեինը լինի: Այնինչ քանաանական արական աստվածությունների պատկերներ առատորեն էին ստեղծվում: Իսրայելական կացարանների պեղումներում հայտնաբերվել են ինչպես արական այնպես էլ, իգական աստվածություններին նվիրված արձանիկներ, որոնք փաստում են նրանց շրջանակներում բազմաստվածության տարածվածության մասին²⁷¹: Կռապաշտության

²⁶⁹ Տե՛ս **J. Barton**, *The Biblical World*, Vol. 2, New York, 2004, pg. 91.

²⁷⁰ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 18:

²⁷¹ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., նույն էջում:

տարածվածության բազմաթիվ հղումներ գտնում ենք նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում (Դատ. Բ, Գ, Զ, Ը, Ժ, ԺԷ, ԺԸ և այլն):

Այսպիսով, թեև իսրայելական կրոնական ընկալումներում հանդիպում ենք նմանություններ քանաանականի հետ համեմատած, բայց դրանք միայն արտաքին բնույթի են, ներքին՝ գաղափարական կողմը, լիովին տարբեր է: Քանաանում արյունոտ զոհաբերությունները սուկ փոխահատուցումներ էին, սեփական մեղքերի դիմաց, այնինչ դրանց հակառակ Իսրայելում ընդգծվում էին, անկեղծ քայլերն ու զոջումը, առանց որոնց զոհաբերություններն անիմաստ էին (Եսայի Ա 1-20, Օսե Զ 6): Մերժվում էր նաև քանաանական ոգեպաշտությունը, աստղագուշակությունը և կախարդանքը: Ինչ խոսք իսրայելական կրոնական պատկերը բավականին ինքնատիպ է:

Այժմ անցում կատարենք առանձին աստվածությունների քննությանը: Ինչպես արդեն նշել ենք հիմնականում անդրադառնալու ենք աստվածությունների այն անվանումներին, որոնք նշված են Դատավորաց գրքում: Այս առումով առանցքային է Դատ. Ժ 6 համարը, որտեղ ներկայացված են գրեթե բոլոր աստվածությունները, որոնք տեղ էին գտել իսրայելի կրոնական կյանքում: Բնարկե այս տեղիում առավելաբար նշված են այդ աստվածությունները պաշտող ազգերը և աստվածների անուններ չեն տրվում (բացառությամբ Բաալինը և Աստարտինը), սակայն աստվածաշնչյան այլ տեղիների և հնագիտական նվաճումների համադրմամբ հնարավոր է հաղթահարել Ժ 6 համարի ստեղծած անհստակությունը:

Մեր ուսումնասիրության առաջին հանգրվանը քանաանական աստվածություններ են: 1929 թ. հյուսիսային Սիրիայում պեղումներ կատարող ֆրանսիական արշավախումբը Ռաս-Շամրայի (հնագույն Ուգարիթի) գրադարանում հայտնաբերեց քանաանական կրոնական գրականությանն առնչվող մի շարք պատառիկներ²⁷², որոնք ավելի են որոշակիացնում մեր պատկերացումները այս տարածաշրջանի կրոնական հավատալիքների վերաբերյալ:

Քանաանացիները «աստված» կամ «աստվածություն» հասկացությունը արտահայտում էին «էլ» բառի միջոցով: Սեմիթական մտածողության մեջ գոյություն ունեցող «աստծո որդիներ» արտահայտությամբ հասկացվում էին «աստվածային ընտանիքի անդամներ»,

²⁷² Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 6:

բացի այդ աղոթքներից մեկում խոսվում է հենց աստվածային ընտանիքի մասին²⁷³: Աստվածների գլխավորը կամ աստվածային ընտանիքի հայրը նույնպես կրում էր «Էլ» («Իլ») անունը: Ուգարիթյան տեքստերում նա հաճախ է անվանվում «Իմաստուն», «Միրելի» և «Ցուլ» մակդիրներով²⁷⁴: Նա գրեթե չէր խառնվում մարդկանց գործերին, ապրում էր շատ հեռու «երկու գետերի ակունքին, երկու օվկիանոսների ակունքին»²⁷⁵: Դա անդրաշխարհային մի տարածք է, որտեղից սկիզբ են առնում ինչպես գետերի քաղցրահամ ջրերը, այնպես էլ օվկիանոսների աղի ջրերը:

Էլի կինը, ամենայն հավանականությամբ եղել է Աշերան (Ասիրաս)²⁷⁶: Նախապես եղել է մայր-աստվածուհի, հետո սկսել է հանդես գալ որպես պտղաբերության աստվածություն²⁷⁷: Հին Կտակարանում հանդիպում ենք այս աստվածության բազմաթիվ հիշատակությունների: Գ Թագ. ԺԸ 19 համարում հիշատակվում են Աշերայի 400 մարգարեները, որոնց հովանավորում էր Իսրայելի Հեզաբել թագուհին: Դ Թագ. ԻԱ 7-ում Մանասե թագավորը Տաճարում կանգնեցնում է Աշերայի պատկերը: Նրան նվիրված պաշտամունքի վայրերում ամենայն հավանականությամբ սրբազան համարվող ծառեր կամ սյուներ են եղել (Դատ Գ 7, 25, 26, 28, 30, հմմտ. Ելք ԼԴ 13, Օրենք ԺԲ 3, Ա Թագ Է 3, 4, Դ Թագ. ԻԱ 3 և այլն): Երբ Աստված հայտնվում է Գեդեոնին, նրան հրահանգում է նախ քանդել Բահաղի զոհասեղանը և կտրել մոտակայքի ծառերը (Դատ. Զ 25): Ծառերը կտրելու հրահանգներ, բացի վերոնշյալ տեղից կարելի է գտնել նաև այլ հատվածներում էլ (Բ Օրենք Է 5, ԺԲ 3, ԺԶ 21, Միք. Ե 13 և այլն): Այդ տեղիները վկայում են Աշերայի պաշտամունքի դեմ ծավալվող քայլերի մասին:

Հաջորդ աստվածությունը թերևս ամենից շատ հիշատակվածն է, ընդ որում ոչ միայն Դատավորաց գրքում, այլև ողջ Հին Կտակարանում: Խոսքը Բաալի մասին է, որը հայերեն թարգմանություններում հիմնականում հանդիպում է Բահաղ ձևով (Դատ. Բ 11, 13, Գ 7, Զ 25, Ժ 6 և այլն): Նա համարվում է Էլի և Աշերայի որդին կամ թոռը²⁷⁸: «Բաալ» բառն ինքնին նշանակում է «տեր» և կարող էր որպես տիտղոս տրվել նաև այլ աստվածներին էլ: Մակայն

²⁷³ Հմմտ. **M. H. Pope**, *El in the Ugaritic Texts*, Leiden, 1955, pg. 47 55, **N. Wyatt**, նշվ., աշխ., էջ 363, 414:

²⁷⁴ Տե՛ս **N. Wyatt**, նշվ., աշխ., էջ 41, 44, 49, 79, **M. H. Pope**, նշվ., աշխ., էջ 35, 43:

²⁷⁵ Տե՛ս **M. H. Pope**, նշվ. աշխ., էջ 61-62, հմմտ. **N. Wyatt**, նշվ. աշխ., էջ 131:

²⁷⁶ Տե՛ս **M. H. Pope**, նշվ. աշխ., էջ 47:

²⁷⁷ Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 7:

²⁷⁸ Բանն այն է, որ Ռաս-Շամրայում հայտնաբերված տեքստերում հստակ մոտեցում այս առիթով չեն գտնի, մի կողմից կարողում ենք, որ Բաալի հայրը Էլն է ինչպես և մյուսներինը, մյուս կողմից էլ վկայվում է, որ Բաալի հայրը Դագոնն է, հմմտ. **N. Wyatt**, նշվ. աշխ., էջ 61, 87:

առավել հաճախ այս անվան ներքո ընկալում էին անձրևի և որոտի աստծուն, որը նախապես կոչվել է Խադդադ, իսկ սկսյալ Ք. ա. 15-14-րդ դդ. մինչև 10-րդ դ.՝ Բաալ: Նրա տունը գտնվում էր ծայր հյուսիսում՝ աշխարհի ծայրին, որտեղ երկինքն ու երկիրը միանում են իրար: Բաալ աստծուն տրվում էր Չեբուլ՝ բարձրյալ, երկնավոր, տիտղոսը, ինչը կարելի է հասկանալ նաև որպես տան տեր²⁷⁹: Բաալին նաև անվանում էին «քաջարի», «երկրի տիրակալ» և «ամպերի վրայով գնացող»²⁸⁰: Վերջին մակդիրը կարելի է տեսնել նաև Հին Կտակարանում, բնականաբար Յահվեի վերաբերյալ կիրառված (Մ Սաղմ. ԿԸ 5):

Բաալն ակտիվորեն ներթափանցում էր կյանքի մի շարք ոլորտներ և հանդես գալիս տարբեր երևույթների մեջ, որոնք վերագրվում են նաև Յահվեին: Նա հայտնվում էր փոթորկի մեջ, ծխի, սև ամպերի, որոտի, կայծակների և երկրաշարժերի մեջ (հմմտ. Ելք ԺԳ 21-22, ԺԹ 16, 18, ԼԳ 10, Թվեր Թ 15, ԺՁ 35, Երեմ. ԻԳ 19)²⁸¹: Կայծակը նրա նետն է, որոտը՝ ձայնը (հմմտ. Սաղմ. ԺԷ 13-14): Նա է «եղնիկներին ծնել տալիս» (հմմտ. Մ Սաղմ. 29.9), երկնքից ու խորքերից օրհնություններ բաշխում՝ անձրևի, գետերի և աղբյուրների տեսքով (հմմտ. Ծննդ. ԽԹ 25, Բ Օր. ԼԳ 13 և այլն)²⁸²: Սակայն պետք է նշել, որ Իսրայելի Աստծո պարագային որպես հայտնության միջոց միայն տարրերային հզոր երևույթները չեն, որ հանդես են գալիս: Գ Թագ. ԺԹ 11-12-ում Աստված որպես հայտնության միջոց ընտրում է մեղմ քամին:

Բաալի կինը Անաթն էր, սիրո և պատերազմի աստվածուհին, որին եգիպտացիները պատկերում էին ձի հեծնող, վահանով և նիզակով զինված մերկ կնոջ տեսքով: Ուգարիթյան տեքստերում նա պատվվում է Կույս մակդիրով և ներկայանում է որպես Էլի դուստր ու Բաալի քույր²⁸³: Այդ տեքստերում պատմվում են նաև նրա արյունահեղությունները²⁸⁴ և չնայած նրա դաժանությանն ու ռազմատենչությանը, նա միաժամանակ հանդիսանում է սիրո և պտղաբերության աստվածուհին: Սակայն այս գործառնություններով, նա նմանվում է Աստարտ աստվածուհուն, որին Հին Կտակարանը քանիցս հիշտակում է (Ա Թագ. ԼԱ 10, Գ Թագ. ԺԱ 5, Դ Թագ. ԻԳ 13 և այլն): Հին Կտակարանը Անաթ աստվածուհուն, սակայն, չի

²⁷⁹ *The International Standard Bible Encyclopedia*, էջ 381:

²⁸⁰ Տե՛ս **N. Wyatt**, նշվ. աշխ., էջ 70, 76, 80:

²⁸¹ Հմմտ. նույն տեղում, էջ 81, 158, 388.

²⁸² Տե՛ս **G. E. Wright**, նշվ. աշխ., էջ 8:

²⁸³ Տե՛ս **N. Wyatt**, նշվ. աշխ., էջ 84, 85, 134:

²⁸⁴ Ուգարիթյան առասպելներից մեկում (Ք. ա. մոտ 1360 թ.) Անաթը, դարբին-աստծո կողմից պատրաստած աղեղին տիրանալու համար, Աքատ անունով մի տղայի՝ իր տոհմի միակ արու զավակի մահվան պատճառն է դառնում, տե՛ս **J. H. Walton**, նույն տեղում, էջ 49.

հիշատակում²⁸⁵: Երկու աստվածուհիներն էլ ի զորու են ազդելու մարդկանց և կենդանիների պտղաբերությանը: Ուգարիթյան տեքստերը Անաթին են համարում Բաալի կինը²⁸⁶, իսկ Հին Կատակարանում այդ դերում հանդես են գալիս մի կողմից Աստարտը (Դատ. Բ 13, Ժ 6, Ա Թագ. Է 4, ԺԲ 10), իսկ մյուս կողմից էլ Աշերան (Դատ. Գ 7, Զ 25, 26, Դ Թագ. ԺԸ 19 և այլն): Թերևս հենց քանաանացիների մեջ էլ միասնական գաղափար չկար, թե վերոնշյալներից որն էր Բաալի կինը: Հավանական է նաև այն, որ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ընկալումներ եղած լինեն:

Դատավորաց գրքում ակնարկվում են նաև **փղշտացիների աստվածները** (Ժ 6): Աստվածաշունչը հստակ մատնանշում է, որ փղշտացիների պանթեոնում գերագույն աստվածությունը Դագովնն (Դագոն) է (հմմտ. Դատ. ԺԶ 23 և Ա Թագ. Ե 2): Մարիից հայտնաբերված տեքստերի համաձայն, դեռևս Գ հազարամյակի սկզբներին Դագոնը սեմիթական պանթեոնի կարևոր աստվածներից էր համարվում²⁸⁷: Եփրատից մինչև Միջերկրական ծով ընկած տարածաշրջանում ապրող արևմտյան սեմիթական մի շարք ազգերի մոտ նա հանդես է գալիս, որպես գերագույն աստված²⁸⁸: Բ հազարամյակի առաջին կեսին Դագոնին պաշտում էին նաև աշուրցիների: Ուգարիթում Դագոնին նվիրված տաճարն ավելի մեծ էր քան Բաալինը: Նախապես Դագոնը համարվել է կերակրի մատակարար և հողագործության հովանավորը: Փղշտացիների մոտ նա հանդես է գալիս, որպես պատերազմի աստված, հնարավոր է, որ այս պատկերացումները փոխառնված լինեն քանաանական մշակույթից²⁸⁹: Եթե հաշվի առնենք , որ Դատ. ԺԶ 23, 24 համարներում փղշտացիները Դագոնին էին փառաբանում իրենց թշնամի Սամփսունին իրենց ձեռքը մատնելու համար, ապա կարող ենք ասել, որ Դատավորաց գրքում շեշտված է Դագոնի այս վերջին գործառույթը: Վաղ միջնադարում սկսվել և զարգացած միջնադարում արդեն տիրապետող էր դարձել այն տեսությունը (Դեյվիդ Կիմչի, 13-րդ դ. առաջին կես), ըստ որի այս աստվածության անունը ծագումնաբանորեն կապված է «ձուկ» (եբր.՝ **דג**՝ dag

²⁸⁵ Բեթ-Անաթ (Անաթի տուն) բնակավայրը, պետք է որ առնչվի նրա անվան հետ, սակայն Անաթ անունով աստվածուհու առանձին հիշատակումներ չկան:

²⁸⁶ Տե՛ս **N. Wyatt**, նույն տեղում, էջ 155, Անաթին նվիրված մի հիմնում (KTU 1.13 30-րդ տողում, էջ 172) Անաթը անվանվում է Բաալի կովը, ինչ կարելի է հասկանալ որպես Բաալի էգ գույգը, որովհետև նույն տեքստերում Բաալը ցույց է կոչվում (KTU 1.11, 1-ին տողը, էջ 161): Ի դեպ այս վերջին տեղիում նկարագրված է Բաալի և Անաթի սեռական ակտը պատկերող տեսարան:

²⁸⁷ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 270:

²⁸⁸ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 309:

²⁸⁹ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 270:

= ձուկ) բառի հետ²⁹⁰: Ըստ այսմ էլ Դագոնի կուռքը ներկայացվում էր ներքևից ձկան արտաքինով, իսկ վերևից մարդու: Ընդհուպ մինչև մեր ժամանակներն էլ նկատելի են այս տեսության հետքերը²⁹¹: Սակայն այս ամենին զուգահեռ գույություն ունի մեկ այլ տեսակետ, ըստ որի «Դագոն» անվան մեջ արմատը 𐤃𐤒𐤍՝ dagan-ն է, որը նշանակում է հասկ²⁹²: Այս տեսակետը նպաստավոր է այնքանով, որ համապատասխանում է Դագոնի՝ որպես հողագործության հովանավորի կերպարին: Այս տեսակետի միջոցով Մամսոնի փղշտացիների ցորենի արտերը այրելը կրոնական համատեքստ է ստանում: Այս վերջին տեսակետը հնարավորություն է տալիս խնդրին այլ մոտեցումներ էլ ցուցաբերել, քանի որ ուզարիթյան առասպելներում և Մարիի կրոնական տեքստերում հանդիպում է Դագան անունով աստվածություն²⁹³: Մասնավորապես ուզարիթյան գրականության մեջ նա ներկայանում է, որպես Բաալի հայրը²⁹⁴: Իսկ Մարիի տեքստերը պարունակում են նաև հատուկ անուններ, որոնցում Դագանը անվան բաղադրիչ է (Կիբրի-Դագան, Իշմե-Դագան, Դագան-Մալիկ)²⁹⁵: Դագան անունը առկա է նաև հինբաբելոնյան աստվածների անվանացանկում²⁹⁶: Ենթադրվում է, որ Նինմադա անունով աստվածուհին նրա զույգն է բաբելոնյան պանթեոնում²⁹⁷: Ցավոք սրտի բավական տեղեկություններ չկան Դագոն և Դագան աստվածությունների վերջնական նույնացման կամ այս տեսակետի հերքման համար: Այնուամենայնիվ, ըստ մեզ, առավել հավանական է, երկրորդ տեսակետը, քանի որ սա պարզաբանման համար ավելի լայն դռներ է բացում, իսկ առաջինը Դագոնի գործառույթները լավ չի պարզաբանում: Դագոնին նվիրված տաճարներ հայտնաբերել են նաև Գազայում (Ազա) և Ազոտում (Աշոտ), վերջինը վկայված է նաև Հին Կտակարանում (ԱԹագ. Ե 1-4, Ա Մակ. Ժ 84):

Փղշտացիները պաշտում էին նաև Բաալին, որի տաճարը գտնվում էր Էքրոնում (ԴԹագ. Ա 2) և Աստարտին, որին նվիրված պաշտամունքային կառույց կար Բեթ-Շանում

²⁹⁰ Տե՛ս **Rev. G. F. Moore, D.D.**, նշվ. աշխ., էջ 358, տե՛ս նաև Ellicott's Commentary for English Readers, <http://biblehub.com/judges/16-23.htm> (17.04.2018, 18:33):

²⁹¹ Տե՛ս **B. G. Webb**, նշվ. աշխ., էջ 255, տե՛ս նաև <http://biblehub.com/hebrew/1712.htm> (17.04.2018, 19:04):

²⁹² Տե՛ս **W. S. LaSor**, նշվ. աշխ., էջ 611, տե՛ս նաև Gill's Exposition of the Entire Bible, <http://biblehub.com/judges/16-23.htm> (17.04.2018, 21:18):

²⁹³ Տե՛ս *Ancient Israelite Literature in its Cultural Context*, էջ 204:

²⁹⁴ Տե՛ս **N. Wyatt**, նշվ. աշխ., էջ 59, 61, 188, 198:

²⁹⁵ Տե՛ս *Ancient Israelite Literature in its Cultural Context*, էջ 205-206:

²⁹⁶ Տե՛ս **J. Peterson**, *Godlists from Old Babylonian Nippur in the University Museum, Philadelphia*, Ugarit-Verlag, Münster, 2009, pg. 14.

²⁹⁷ Տե՛ս **J. Peterson**, նշվ. աշխ., էջ 50: Իհարկե սա լոկ վարկած է և ապացուցման կարիք է զգում:

(հմմտ. Ա Թագ. ԼԱ 10): Հարևանցիորեն նշենք, որ փղշտացիները ճարտարապետական և շինարարական ազդեցություններ ունեին Էգեյան ավազանի երկրներից: Ազոտում, Էքրոնում և Թել-Կասիլում (դեպի հյուսիս Յարկոն գետի ափին) հայտնաբերվել են Էգեյան մշակույթի ազդեցությունները կրող կանացի աստվածությունների պատկերներ²⁹⁸: Ընդհանուր առմամբ, ի մի բերելով վերոնշյալները, կարող ենք նշել, որ փղշտացիների պանթեոնը իրենից ներկայացնում է տեղական կրոնական ընակալումների և Էգեյան աշխարհից բերված գաղափարների մի յուրօրինակ սինթեզ:

Հեփթայեի պատումում խոսվում է **ամմոնացիների աստծու** Քամոսի մասին (ԺԱ 24): Սակայն Քամոսը **մովաբացիների ազգային աստվածությունն** է, ինչը հիշատակվում է նաև Մովաբի արքա Մեշայի արձանագրության մեջ, որտեղ նրան փառաբանում են պատերազմում հաղթություն շնորհելու համար²⁹⁹: Հին Կտակարանի այլ տեղիներում նույնպես, Քամոսը հիշատակվում է որպես մովաբացիների աստվածը (Թվեր ԻԱ 29, Գ Թագ. 11:7, 11:33, Դ Թագ. ԻԳ 13, Եր ԽԸ 7, 13): Այնինչ **ամմոնացիների ազգային աստվածությունը Միկոմն (Մեղքոմ)** է (հմմտ. Գ Թագ. ԺԱ 5, 7, 33, Դ Թագ. ԻԳ 13): Հարկ է նշել, որ թեև Քամոսը մովաբացիների աստվածն է, այնուամենայնիվ նրա անունը՝ «Քամիշ» ձևով հիշատակվում է Էբլայից հայտնաբերված աստվածությունների մի ցանկում, այնտեղ նրան նվիրված տաճար էլ կար³⁰⁰: Սրանից բխում է, որ դեռևս Գ հազարամյակում՝ նախքան մովաբացիների առաջանալը, Միրիայում տարածված էր Քամոսի պաշտամունքը: Այսքանով հանդերձ բավարար տեղեկություններ չկան, որպեսզի նկարագրենք Քամոսի գործառույթները և կամ հստակեցնենք, թե տարրերային ինչ ուժերի հետ էր նա առնչվում:

Ինչ վերաբերում է Միկոմին, ապա նրա անունը հանդիպում է ամմոնական գրություններում և անձնանունների ցանկում, ինչպես նաև ուգարիթյան տեքստերում³⁰¹: Հավելենք, որ եթե Գ Թագ. ԺԱ 7 համարը ընթերցենք եբրայերենով, ապա կտեսնենք, որ որպես Ամմոնի աստված ներկայացվում է Մոլեխը, որի մասին խոսվում է նաև Ղևտ. ԺԸ 21 համարում (դարձյալ ըստ եբր. բնագրի): Այստեղ հստակաբար նրա պաշտամունքի մեջ երևում է երխանների զոհաբերության տարածված սովորությունը: Ենթադրվում է, որ Մոլեխը առնչվում է անդրաշխարհի հետ, իսկ Ք. ա. 8-րդ դ. փյունիկյան մի

²⁹⁸ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 309:

²⁹⁹ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 262:

³⁰⁰ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 262:

³⁰¹ Տե՛ս N. Wyatt, նշվ. աշխ., էջ 362, J. H. Walton, նշվ. աշխ., էջ 365:

արձանագրություն վկայում է պատերազմից առաջ նրան արվող զոհաբերության մասին³⁰²: Կարծիք կա, ըստ որի, կա՛մ Մոլեխը և Միլկոմը նույն աստվածության տարբեր անուններն են կա՛մ Գ Թագ. ԺԱ 7-ում պարզապես վրիպակ է սպրդել³⁰³: Սակայն հազիվ թե այստեղ վրիպակ լինի, հաշվի առնելով, որ անվանումը հիշատակվում է ոչ միայն Ղևտականում, այլև արտաստվածաշնչյան աղբյուրներում: Անշուշտ հնարավոր է, որ նույն աստվածությանը տրվող տարբեր անվանումներ լինեն, սակայն չպետք է մոռանանք, որ մենք գործ ունենք բազմաստվածական համակարգի հետ, ուստի հնարավոր է նաև այն, որ Մոլեխը և Միլկոմը ամմոնական պանթեոնի տարբեր աստվածներ լինեն:

Դատ. Ժ 6-ը հիշատակում է նաև **սիդոնացիների աստվածներին**: Հին Կտակարանը նշում է դրանցից մեկին՝ Աստարտին (Աշտորետ) (հմմտ. Գ Թագ. ԺԱ 5, 7, 33, Դ Թագ ԻԳ 13): Այս տեղիներից կարելի է ենթադրել, որ ի դեմս Աստարտի, գործ ունենք փյունիկյան գլխավոր աստվածության հետ: Նրան պաշտում էին Փյունիկիայի Տյուրոս և Սիդոն քաղաքներում, որտեղից էլ նրա պաշտամունքը տարածվում է ողջ Միջերկրյայքով մեկ, արդյունքում Աստարտը նույնացվում է Աֆրոդիտեի հետ: Փյունիկեցիների միջոցով Աստարտի պաշտամունքը տարածվում է նաև Եգիպտոսում³⁰⁴: Բայց Աստարտը նաև քանաանական պանթեոնի աստվածուհիներից էր: Ուգարիթյան առասպելներում նա կոչվում է Աստարտե կամ Աթտար, անվան տարբերակներից է նաև Աթարը, իսկ միջագետքյան կրոնական տեքստերում նա նույնացվում է Իշտարի հետ³⁰⁵: Աստարտի պաշտամունքը մեծապես տարածված էր նաև իսրայելացիների մեջ, և վերջիններս հաճախակի էին շեղվում դեպի նա (հմմտ. Հեսու ԻԴ 24, Դատ. Բ 13, Ժ 6, Բ Մնաց. ԻԴ 18): Հուդայի Ասա թագավորի մայրն, անգամ, նրա պաշտոնյաներից էր, ինչի պատճառով էլ թագավորը նրան վտարում է (Բ Մնաց. ԺԵ 16): Հարկ է նշել, որ ինչպես Բաալի և Աշերայի պարագային, նրա անունը նույնպես շատ հաճախ հոգնակի թվով է կիրառվում: Արդյո՞ք սա նշանակում է, որ տարածաշրջանում նույն անունը կրող մի քանի աստվածներ կային: Նախ պետք է հաշվի առնել, որ աստվածների անունները կապվում էին իրենց պաշտամունքի վայրերին, ուստի անվան հոգնակի կիրառությունը կարող է վկայել նույն աստծուն նվիրված պաշտամունքի մի քանի վայրեր մասին: Բաալի պարագային պետք է նշել, որ շատ հաճախ այդ անունը կիրառվում է որպես տիտղոս և որոշ համատեքստերում «բաալը»

³⁰² Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 132-133:

³⁰³ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 365:

³⁰⁴ Տե՛ս Rev. G. F. Moore, D. D., նշվ. աշխ., էջ 70:

³⁰⁵ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 365, N. Wyatt, նշվ. աշխ., էջ 56, 339, Rev. G. F. Moore, D. D., նշվ. աշխ., էջ 70:

ոչ թե հատուկ անուն է, այլ արտահայտում է որևէ վայրի «տիրոջ» կամ «սեփականատիրոջ» իմաստը (հմմտ. Բաալ-Հերմոն, Բաալ-Ցոր, Բաալ-Սիդոն, Բաալ-Լիփանան և այլ անվանումները)³⁰⁶: Մյուս մոտեցման համաձայն անունների հոգնակի կիրառությունը վկայում է նույն աստվածության տարբեր գործառույթների մասին³⁰⁷: Աստարտի անվանումը կապվում էր պտղաբերության ու պատերազմի հետ, իսկ օրինակ Բաալը փոթորկի և մեռնող ու հարություն առնող բնության աստվածն էր և այլն:

Ասորեստանցիների աստվածներ (Ժ 6) արտահայտությունը վերաբերում է Առամ Նահառայմի և ոչ Ասորեստանի հսկայական կայսրության պանթեոնին: Առամում առանձին աստվածություններից բացի, գյություն ուներ նաև հին աշխարհում հայտնի անձի և դինաստայի պաշտամունք: Թերևս Ժ 6 հաղորդումը այս երկուսին վստահաբար չի վերաբերում: Առամեական պանթեոնի գլխավոր աստվածությունը փոթորկի աստված Հադադն է, գործառույթներով շատ նման Բաալին: Վերջինս Հադադի համար կիրառվել է որպես մակդիր, այդ իսկ պատճառով Բաալի և Հադադի նույնացումներ հաճախ են լինում: Հադադը Դամասկոսում տաճար է ունեցել (MT Բ Թագ. Ե 18): Նրա կողակիցը կրում էր Սուլ անունը: Առամի աստվածություններից էր նաև Բելշամայնը (Երկնքի տիրակալ), որը իհարկե կարող է նաև մակդիր լինել³⁰⁸:

Դատավորաց Ի 13-ում Գաբաայի բնակիչներն անվանվում են **Բելիարի որդիներ**: Ո՞վ է այս Բելիարը, արդյո՞ք այստեղ առանձին աստվածության մասին է խոսք գնում: Քրիստոնեական ընկալման մեջ Բելիարը ասոցացվում է Սատանայի հետ (հմմտ. Բ Կորնթ. Զ 15)³⁰⁹ և առաջին հայացքից, կարելի է կարծել, թե խոսքը հենց Սատանայի մասին է:

³⁰⁶ Տե՛ս **Rev. G. F. Moore, D. D.**, նշվ. աշխ., էջ 69:

³⁰⁷ Տե՛ս **J. H. Walton**, նշվ. աշխ., էջ 246:

³⁰⁸ Տե՛ս *Dictionary of the Old Testament Historical Books*, pg. 48-49.

³⁰⁹ Բելիարի ասոցացումը սատանայի հետ կիրառվել է բաբելոնական գրականության, ինչպես նաև քուրանյան ձեռագրային ավանդության մեջ, և ըստ էության, քրիստոնեական ընկալումը ծագում է սրանցից, հմմտ. **Կ. Քիններ**, *Աստվածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան*, Երևան, 2004 թ., էջ 246, 583: Հարկ է նշել, որ Բելիարը կամ Բելիալը, քուրանյան բազմաշերտ գրական ավանդության մեջ հաճախ չի ներկայացվում, որպես Աստծուն հանդիման և հավասար դրվող հակառակորդ ուժ, ավելի շուտ նա ներկայանում է որպես անկյալ հրեշտակների առաջնորդ (Խավարի իշխան): Նրան սովորաբար հակադրվում է Միքայել հրեշտակապետը (Լույսի իշխան), որը և պարտության պետք է մատնի նրան, հմմտ. **C. A. Evans, S. E. Porter (ed.)**, *Dictionary of New Testament Background: a compendium of contemporary biblical scholarship*, Downers Grove, Illinois/Leicester, England 2000, pg. 156: «Կտակ երկոտասան նահապետացն» պարականոն երկում Բելիարը իսավարի մարմնացումն է, որին Աստված վերջում պետք է ետ մղի, տե՛ս **G. Kittel and G. Friedrich (ed.)**, *Theological Dictionary of the New Testament*, Abridged in one volume, Wm. B. Eerdmans Publishing Company, 1985, pg. 950. Հավանական տեսակետ կա, ըստ որի, Քուրանյան համայնքը սատանային տրվող Բելիալ հատուկ անունը վերցրել է հենց Դատ. Ի 13-ի veliyaal բառից, տե՛ս *Dictionary of New Testament Background*, էջ 156: Բելիարի կերպար ավելի մանրամասն վերլուծումը, տե՛ս նույն տեղում, էջ 153-156:

Սակայն տվյալ համարի երբայերեն և հունարեն բնագրերի ընթերցումը այլ պատկեր է վեր հանում: Մասորական բնագրում «Բելիար» անվան փոխարեն կիրառված է **לְעֵלְיָאֵל**՝ veliyaal բառը, որը այստեղ հատուկ անուն չէ և թարգմանվում է անպետք, անարժան մարդիկ³¹⁰: Հունարեն տեքստի ալեքսանդրյան տարբերակում «Բելիալ» հատուկ անունն ենք կարդում³¹¹, իսկ վատիկանյան տարբերակում փոխարենը «օրինախախտներ» բառն է կիրառված³¹²: Համարի ընդհանուր բովանդակությամբ առավել մոտ են մասորականը և վատիկանյանը, որոնց համահունչ է «Արարատ»-ի հրատաարկությունը՝ նախապատվությունը «չար» բառին տալով: Մեր կիրառած գրաբար և արևելահայերեն մյուս Աստվածաշնչերում առկա *Բելիարը*, ամենայն հավանականությամբ, ալեքսանդրյան ձեռագրական ընտանիքի ազդեցությունն է կրում, որի արմատները Ք. ա. Գ դարից այն կողմ չեն անցնում³¹³: Այսպիսով վերոբերյալից կարող ենք եզրակացնել, որ Դատավորաց շրջանում Բելիար անվանումով առանձին աստվածություն գոյություն չունեի և Դատ. Ի 13-ում գործ ունենք հունարենից թարգմանության արդյունքում առաջացած տարընթերցման հետ:

Դատավորաց գրքի աստվածությունների թեմայի շրջանուկում վերջինը, որին պետք է անդրադառնանք **Բաալ Բերիթը (Ուխտի Տեր)** կամ **Էլ Բերիթն (Ուխտի Աստված)** է (Ը 33, Թ 4՝ Բահաղ (Բաալ) Բերիթ, MT Թ 46՝ Էլ Բերիթ): Նմանատիպ անուն առկա է նաև ուգարիթյան տեքստերի մեջ հայտնաբերված խուռիական մի հիմնում³¹⁴: Սա աստվածություն էր, որի պաշտամունքը տարածված էր Շիւեմում, որտեղ և նրան նվիրված տաճար էլ կար (հմմտ. MT Թ 4, 46): Իհարկե տեքստից միանշանակ կերպով չի բխում, որ խոսքը միևնույն տաճարի մասին է, բայց պետք է հաշվի առնել, որ վաղ ժամանակներում Էլը և Բաալը սուբստանցիոնալ առումով իրար համարժեք էին: Եվ բացի այդ, հազիվ թե նույն տարածության վրա գտնվեին նույն աստծուն նվիրված երկու տաճար, հատկապես որ

³¹⁰ «Իսկ այժմ մեզ տվեք այդ մարդկանց՝ *անպիտանների* որդիներին, որոնք Գաբաայից են, որպեսզի մենք կարողանանք մահվան մատնել նրանց և վերացնել չարը Իսրայելի միջից...» (MT Դատ. Ի 13 ա):

³¹¹ «Իսկ այժմ տվեք այդ անաստված մարդկանց, որոնք Գաբաայում են՝ *Բելիալի* որդիներին, որպեսզի մահվան մատնենք նրանց և չարիքը Իսրայելից դուրս հանենք...» (LXX A Դատ. Ի 13 ա):

³¹² «Իսկ այժմ տվեք այդ մարդկանց՝ *օրինախախտների* որդիներին, որոնք Գաբաայից են, որպեսզի մահվան մատնենք նրանց և հեռացնենք չարը Իսրայելից...» (LXX B Դատ. Ի 13 ա):

³¹³ Իհարկե գրաբար քննական բնագրի բացակայությունը դժվարություններ է ստեղծում Դատ. Ի 13 համարի վերերեքյալ վերջնական խոսք ասելու համար, չենք բացառում, որ հայտնվեն ձեռագրեր, որոնք այս դեպքում չեն հետևում ալեքսանդրյան տարբերակին:

³¹⁴ St 'u J. H. Walton, նշվ. աշխ., էջ 260:

Շխեմը առանձնապես մեծ քաղաք էլ չէր³¹⁵: Շխեմի քանաանեախարայեյան խառը բնակչությունը համադրելով Յահվեի՝ Իսրայելի Ուխտի Աստծո և Էլի՝ քանաանական աստվածության պաշտամունքները ստեղծել էին Բաալ Բերիթի կամ Էլ Բերիթի միաձույլ պաշտամունքը³¹⁶:

Դատավորաց գրքի աստվածությունների թեման ավարտենք քահանայապետի զգեստի մաս հանդիսացող «**եփուդի**» վերաբերյալ բացատրողական ակնարկ կատարելով, քանի որ իսրայելացիները վերջինս ներգրավել էին կռապաշտության մեջ: Եփուդը (עֲפֹדִים ` êpōd) քահանայական զգեստի կարևոր մասերից մեկն էր, որը գույնզգույն կտավից (քաթանից) էր և ամենայն հավանականությամբ, ծածկում էր մարմնի վերին մասը դիմացի կողմից՝ կապվելով պարանոցի և իրանի վրայից (հմմտ. Ելք ԻԸ 6-14): Բացի կտավից օգտագործվում էր նաև ոսկյա ֆիլիգրամ (ոսկյա թելերից հյուսվածք) և մեկ գույգ թանկագին քարեր (ուսերին), վերջինների վրա վեց-վեց պետք է քանդակվեին Իսրայելի 12 ցեղերի անունները, ինչը խորհրդանշում էր, որ քահանայապետը Աստծո առաջ ներկայացնում էր ողջ ազգը: Նմանատիպ զգեստ օգտագործվում էր նաև Միջագետքում՝ որպես քրմերի հագուստի մի մաս կամ կուռքերը զարդարելու միջոց³¹⁷: Եփուդը, լանջապանակը և Ուրիմն ու Թումիմը³¹⁸ քահանայապետի կոմից կիրառվել են գուշակությունների համար, և Տրիոնն ուղղված հարցումների պատասխանը տրվում էր սրանց միջոցով (հմմտ. MT Ա Սամ. ԻԳ 9-11, ԻԸ 6)³¹⁹: Այլ կերպ ասած քահանայապետի զգեստները նպաստում էին Տիրոջ կամքի բացահայտմանը և իրագործմանը: Հարկավ Գեդեոնի պատրաստած եփուդը ոչ թե միաձույլ ոսկուց էր, այլ ոսկեթել հյուսվածքից (հմմտ. Ելք ԼԹ 3): Ամենայն հավանականությամբ Գեդեոնը և իր տան անդամները եփուդը օգտագործում էին իրենց մոտ եկող իսրայելացիների համար գուշակություններ անելու համար, ինչն էլ և գայթակղություն եղավ նրանց համար (հմմտ. Դատ. Ը 27): Եվ թերևս նման կիրառության պատճառով էլ եփուդը պաշտամունքի առարկա էր դարձել, իսկ Դատ. ԺԷ 5 համարում այն թվարկվում է ի շարս

³¹⁵ Հմմտ. Rev. G. F. Moore, D. D., նշվ. աշխ., էջ 265:

³¹⁶ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 260, հմմտ. *The International Standard Bible Encyclopedia*, Vol. 1, էջ 380:

³¹⁷ Տե՛ս J. H. Walton, նշվ. աշխ., էջ 110:

³¹⁸ Լանջապանակը կաղազարդ է, որի վրա նույնպես գրված էին իսրայելի 12 ցեղերի անունները (որպես հիշեցում) (Ելք ԻԸ 15): Ուրիմի ու Թումիմի (Ելք ԻԸ 30) պատրաստման մասին ոչինչ չի ավանդվում: Հավանաբար Ուրիմ նշանակում է առատ լույս, հմմտ. <http://biblehub.com/hebrew/224.htm> (26.04.2018, 20:27) և <http://biblehub.com/hebrew/217.htm> (26.04.2018, 20:27), իսկ Թումիմը՝ լիակատար ճշմարտություն, ամբողջականություն, ուղղամտություն, շիտակություն, հմմտ. <http://biblehub.com/hebrew/8550.htm> (26.04.2018, 20:32) և <http://biblehub.com/hebrew/8537.htm> (26.04.2018, 20:32):

³¹⁹ Ըստ Ա. Թագ. ԻԸ 6-ի Տիրոջ կամքի արտահայտման մյուս միջոցներն էին մարգարեները և երագները:

այլ կուռքերի: Տասնաբանյում կուռքերն ու պատկերներն արգելվում են ընդհանրապես (Ելք Ի 4-6), սակայն Հին Իսրայելում միշտ էլ կիրառվել են փայտից, քարից կամ մետաղից պատրաստած կուռքեր (Ես. Խ 19, 20, Օսե Ը 4-6, Միք. Ե 12), ըստ այս Միքայի քայլերը անսպասելի չէին, իսկ ղևտացուն իր մոտ հրավիրելով, նա փորձում էր հեղինակություն տալ իր պատրաստած կուռքերին, ինչը և ստացվեց³²⁰:

Ամփոփում

Այսպիսով, ի մի բերելով Դատավորաց գրքի տեղագրական, մշակութային և կրոնական պատկերը՝ նշենք, որ Դատավորաց ժամանակաշրջանում (ուշ բրոնզի ավարտին և վաղ երկաթի շրջանում) Քանաանում և հարակից շրջաններում նկատվում է գոյություն ունեցող քաղաքական ուժերի ազդեցության վերացում (Եգիպտոս, իւթեր, որոշ քանաանական քաղաք պետություններ) և նորերի հաստատում (փղշտացիներ, իսրայելացիներ): Այս շրջանում բնակավայրերն հիմնականում ավերվում են և նորերն են կառուցվում, չպարսպապատված բնակավայրերը ամրացվում են, փոխվում է ճարտարապետությունը: Նկատվում են քաղաքների և կացարանների հստակ հատակագծեր, սկսվում է կիրառվել ջրահեռացման համակարգ: Խեցեղենի մեջ իրար են խառնվում տեղական, էգեյան աշխարհի, կիպրական և փյունիկյան մշակույթները: Փղշտացիներով բնակեցված բնակավայրերում փոփոխվում է նաև կերակրատեսակը (խոզեր, շներ և այլն): Լևանտում ապրող բնակիչների ակտիվ փոխհարաբերությունների արդյունքում կրոնական սինկրետիզմը տարածված երևույթ է դառնում, դրա մեջ են ներքաշվում անգամ նորահաստատ փղշտացիները: Աստվածություններից մի քանիսը հանդիպում են մի քանի ժողովուրդների պանթեոններում, այնքան որ որոշ աստվածությունների պարագային խճճվել կարելի է, թե դրանք նախապես որ ժողովրդի պանթեոնին են պատկանել:

³²⁰ Հմմտ. J. H. Walton, նշվ. աշխ., էջ 271:

ԳԼՈՒԽ Գ. ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔԸ ԵՎ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ

Նախորդ գլխում ներկայացրեցինք Պաղեստինի տարածքում տեղի ունեցած քաղաքական և մշակութային անկումն ու վերելքը, որը օրինաչափ կերպով նույն ժամանակաշրջանում կրկնվում է նաև Հին Արևելքի այլ անկյուններում: Անատոլիայի բոլոր հայտնի կարևոր վայրերը իրենց ուշ բրոնզեդարյա շերտերում ունեն ավերումների հետքեր: Խաթուսասը, Ալախա Հույուկը, Ալիշարը և ուրիշ իտեթական քաղաքներ Ք. ա. 12-րդ դ. սկզբներին ավերվել են սարասափելի հրդեհից: Գերմանացի հնագետ Քուրթ Բիթթելը այս ավերվածությունները բնորոշել է իբրև՝ «Brandkatastrophe» (գերմ․՝ հրի աղետ)³²¹: Անատոլիայում, թերևս ամենից շատը տուժել են Խեթական տերության կենտրոնում գտնվող տարածքները:

Կիպրոսում ուշ բրոնզի ավարտը և վաղ երկաթի սկիզբը նշանավորվեց երեք խոշոր քաղաքների՝ Էնկոմի, Կինտիոն և Սինդայի այրմամբ: Մյուս համեմատաբար փոքր քաղաքները, թեև չեն հրդեհվել, սակայն լքվել են: Կիպրոսի արմ ափին պահպանվել են նաև բռնի (պատերազմից) ավերման հետքեր:

Լևանտի շրջանում ավերումների մասին բացի հնագիտական տվյալներից վկայում է նաև Մեդինեթ Հաբույի արձանագրությունը: Ուգարիթը այս շրջանում ավերվում և այլևս չի բնակեցվում: Ուգարիթում հայտնաբերված նամակներից մեկը պատմում է ինչ-որ «թշնամիների» գալստյան, քաղաքը հիմնահատակ ավերելու և հեռանալու մասին: Սիրիայի ներքին շրջաններում Ալալախը, Խամատը և Քադեսը ավերվածությունների համաժամանակյա շերտեր ունեն: Իսկ Հարավային Լևանտում վաղ երկաթի սկզբին այրվել և ավերվել են Մուքքոտը, Լախիշը, Բեթ-Էլը, Բեթ-Շեմեշը, Խացոռը, «Ծովի ճանապարհի» վրա գտնվող քաղաքները և ուրիշ քաղաքներ³²²:

Հունաստանում և Էգեյան աշխարհում նույնպես Ք. ա. 12-րդ դ. պահպանված շերտում մի շարք քաղաքներ (Իոլկոս, Թեբա և Լևկանտի) և կառույցներ հրդեհից այրվել են, իսկ Պարոս կղզուց մոխիրներից բացի սպանված մարդանց կմախքներ են հայտնաբերվել:

Այսպիսով Էգեյան աշխարհով, Անատոլիայով, Կիպրոսով և Լևանտով մեկ ուշ բրոնզի ավարտին և վաղ երկաթի սկզբին մի քանի տասնյակ խոշոր բնակավայրեր այրվելով ավերվել են: Փոքր բնակավայրերը սակայն խուսափել են ավերվածություններից, բայց

³²¹ Տե՛ս **R. Drews**, նշվ. աշխ., էջ 8:

³²² Տե՛ս **R. Drews**, նշվ. աշխ., էջ 15-16:

փոխարենը լքվել են: Հետագայում բազմաթիվ կենտրոններ, ինչպիսին են Տրոյան, Տարսուսը, Աշդոդը, Աշկելոնը և մի շարք այլ հայնոսի կենտրոններ, վերակառուցվել են, իսկ մի շարք այլ կենտրոններ էլ տեղափոխվել են այլ տարածքներ:

Այս ժամանակաշրջանում Եգիպտոսը զարմանալիորեն խուսափել է վերոնշյալ ավերվածություններից, փարավոնի իշխանությունը սակայն զգալիորեն սասանվում է: Միջագետքում նույնպես ավերվածությունների հետքերը չնչին են:

Հին Աշխարհում օրինաչափորեն համաժամանակ (Ք. ա. շուրջ 12-րդ դ.) ընթացած այս գործընթացը, որի ընթացքում տեղի են ունեցել այդ լայնամասշտաբ վայրէջքներն ու վերելքները, մասնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել «Ճգնաժամ» կամ «Աղետ»: Սակայն այդ «ճգնաժամի» պատճառների մասին, որոնք ի վիճակի էին նման փոփոխություններ առաջացնել, միասնական մոտեցում չկա: Ուսումնասիրողները տարբեր վարկածներ են առաջարկում, ինչպես օրինակ բնական տարրերային աղետներ, ժողովուրդների լայնամասշտաբ գաղթեր (միգրացիաներ), ռազմական բախումներ և քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի անկում³²³: Շատ հաճախ վերոնշյալ պատճառներից որևէ մեկը ընտրելու փոխարեն նախապատվությունը տրվում է միաժամանակ մի քանիսին: Այս գլխում մենք դատավորաց ժամանակաշրջանի ճգնաժամի ընթացքը համեմատելու ենք հարևան տարածաշրջաններում ընթացած աղետային պրոցեսների հետ: Մասնավորաբար անդրադարձ են կատարելու նաև աղետի բացատրման համար առաջարկվող վարկածներին, նպատակ հետապնդելով գտնելու Լևանտի տարածաշրջանի ճգնաժամի պատճառները:

Վերջին տարիներին որոշ ուսումնասիրողներ Ք. ա. 12-րդ դ. ճգնաժամի պատճառները որոնում են սոցիալտնտեսական գործոնով պայմանավորված քաղաքական և տնտեսական համակարգերի փլուզման մեջ: Սա կարելի է անվանել նաև ճգնաժամի ներքին գործոն, որի քայքայիչ ազդեցության հետևանքով գալիս է մի պահ, երբ գոյություն ունեցող խոշոր տերություններում, ինչպես օրինակ Եգիպտոսում Խեթական կայսրությունում և նրանց ազդեցության ներքո գտնվող քաղաքական փոքր միավորներում (օրինակ սիրիոպաղեստինյան շրջանում) սկսվում է ճգնաժամային իրավիճակ, որի ընթացքում մասնավորաբար նկատվում է գյուղական բնակչության փախուստ անեկամտաբեր հողերից դեպի կյանքի համար բարենպաստ ծովափնյա և գետահովտային շրջաններ:

³²³ Տե՛ս **Ա. Քոսյան**, *Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը*, Երևան, 1999, էջ 87:

Լքված տարածքները բնակեցվում են քոչվոր և կիսաքոչվոր բնակչությամբ: Արդյունքում թուլանում է պալատական և վարչական կենտրոնների սոցիալ-տնտեսական հիմքը, ինչպես նաև «արքաների» իշխանությունը, վտանգվում է միջտարածաշրջանային առևտուրը, բնակչության անկանոն տեղաշարժերի պատճառով ի հաշիվ խոշոր կենտրոնների, կուտակումներ են առաջանում ավելի փոքր քաղաքային կենտրոններում, ինչն էլ հանգեցնում է վարչատնտեսական համակարգի փլուզում³²⁴: Ճգնաժամային այս մոդելը, բացի վերոնշյալ տարածաշրջաններից մասամբ նկատելի է նաև Հունաստանում, Փոքր Ասիայում, Կիպրոսում և այլուր: Սակայն այս մոտեցումը չի բացատրում ուշբրոնզեդարյան պալատական և այլ կենտրոնների ավերումը: Որոշ կենտրոններ էլ լքվում են (Խաթթուսասը Փոքր Ասիայում, Ուզարիթը Սիրիայում և այլն), և դրանց փոխարեն նորերն են առաջանում, բայց համեմատաբար ավելի փոքր և աչքի չնկնող: Այս մոտեցումը չի հստակեցնում նաև այն, թե ինչու պետք է տնտեսական պատճառներով տեղափոխվող բնակչությունը կենտրոնանար ծովափնյա և գետահովտային առանց այն էլ գերհագեցած շրջաններում, որտեղ բարեկեցիկ կյանքը երաշխավորված չէր: Ճգնաժամի բացատրման այս ներքին գործոնը արդարցիորեն մեկնաբանվել է որպես ճգնաժամի ընթացքի ներկայացում և ոչ պատճառների վեր հանում³²⁵:

Ճգնաժամը բացատրելու համար բավարար չէ նաև «արտաքին» համարվող գործոնը, որի տակ հասկացվում են լայնածավալ էթնիկ տեղաշարժերը: Այս գործոնի նկատմամբ թերահավատությունը պայմանավորված է մի քանի դիտարկումներով. նախ անկմանը անմիջապես հաջորդած շրջանում եկվոր բնակչության հետքերն աննշան են մեծ միգրացիա ենթադրելու համար: Հնագիտորեն և գրավոր սկզբնաղբյուրներով վկայված միգրացիաները ընթացել են ոչ թե անկում ապրող պետությունների կենտրոնական շրջաններով այլ ծայրամասային հատվածներով, օրինակ՝ «ծովի ժողովուրդներն» հաստատվում են Փոքր Ասիայի հարավային մասում և Լևանտում: «Ծովի ժողովուրդներ» բնորոշումը գալիս է եգիպտական սկզբնաղբյուրներից: Այն հավաքական տերմին է, որի տակ ներառվող ժողովուրդների նախնական բնակավայրի և էթնիկ պատկանելիության հարցը դեռևս քննարկվում է: Նրանց մեջ ներառվում են շարդանաները (եգիպտ.՝ šrdn), դանունաները (եգիպտ.՝ dnjn՝ դանայացիներ), պելեշետները (եգիպտ.՝ pršt/plšt՝

³²⁴ Տե՛ս **M. Liverani**, *The Collapse of the Near East Regional System at the End of Bronze Age: the Case of Syria*, in "Center and Periphery in the Ancient World", Cambridge, 1987, pg. 66-70 հղումն ըստ **Ս. Քոսյան**, նշվ. աշխ., էջ 206:

³²⁵ Տե՛ս **Ս. Քոսյան**, նշվ. աշխ., էջ 89:

փղշտացիների), էքվոշները կամ աքավաշաները (եգիպտ.՝ 'kwš՝ աքայացիներ), տղեքրուները (եգիպտ.՝ tkr՝ Տրոյական պատերազմի հույն հերոս Տեկոնի սերունդներ) և այլ ժողովուրդներ³²⁶: Առաջին անգամ նրանք հիշատակվել են Ամենհոտեպ Գ (Ք. ա. 14-րդ դ.) փարավոնի արձանագրության մեջ՝ Նեղոսի դելտայի առափնյա բնակավայրերը ասպատակելու համար: Սկսած Ք. ա. 13-րդ դ. վերջերից նրանք ակտիվորեն ազդեցություն են թողնում Միջերկրականի արլ ափերին: Նրանց հարձակաման թիրախները առափնյա շրջաններն էին: Նրանց ելակետի և տեղաշարժերի մասին վկայություններ են տալիս Պելեպոնեսում, Տրոյայում, Կիպրոսում, Կիլիկիայում և Պաղեստինում հայտնաբերված Ք. ա. 12-րդ դ. թվագրվող նույն տիպի ուշհելադյան խեցեղենը³²⁷: «Ծովի ժողովուրդների» միգրացիաների համար առաջարկվող պատճառներից մեզ համար ավելի հավանականը նրանց նախնական բնակության վայրում կենսապայմանների վատացման վարկածն է: Վերջինս հնարավոր է պայմանավորված էր բնական տարրերային աղետներով, օրինակ՝ երկարաշարժերով³²⁸: Մյուս մոտեցումը, ըստ որի «ծովի ժողովուրդները» գաղթում էին հարևանների ռազմական սպառնալիքի ներքո³²⁹, անահավանական է այնքանով, որ այդ ժողովուրդները հայտնվելով միջերկրանանի արլ ափերին գորեղ թշնամիների համբավ են ձեռք բերում, եթե այդքան մեծ ռազմական ուժ ունեին ապա կմնային և կպաշտպանեին իրենց երկիրը:

«Ծովի ժողովուրդներից» բացի տեղաշարժեր արել էին նաև հս Բալկաններից թրակացիները և բրիգները, վերջիններս տեղաշարժից հետո վերանվանվում են փռույզացիներ: Նրանք հաստատվում են հիմնականում Փոքր Ասիայում: Տեղաշարժը դարձյալ թվագրվում է Ք. ա. 1200-ական թթ.:

Ք. ա. 13-րդ դ. վերջին Հայկական լեռնաշխարհի հվ և հվ-արմ շրջաններում էլ նկատվում է կասկ-ապիշլուների, ուրումունների և մուշկերի տեղաշարժերը³³⁰: Հատկապես վերջիններինը առանձնահատուկ լայն շրջանակներ է ներառել:

³²⁶ Տե՛ս **D. O'Connor, S. Quirke (ed.)**, *Mysterious Lands: Encounters with Ancient Egypt*, London, 2003, pg. 112, 114-116, **E. H. Cline**, *1177 B.C.: The Year Civilization Collapsed*, USA, 2014, pg. 4, 7.

³²⁷ Տե՛ս **Ա. Քոսյան**, նշվ. աշխ., էջ 93-96:

³²⁸ Տե՛ս **R. Drews**, նշվ. աշխ., էջ 33:

³²⁹ Տե՛ս **Բ. Եղիայեան**, *Քննական Պատմություն Սուրբգրական Ժամանակներու*, Գիրք Ա, Անթիլիաս, Լիբանան, 1972, էջ 227: Այս և նախորդ վարկածը տե՛ս նաև **Ա. Քոսյան**, նշվ. աշխ., էջ 96:

³³⁰ Հայ իրականության մեջ քննարկվել է վերջին երկուսի հայկական ծագումը, տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, *Հայերի գեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում*, «Պատմաբանասիրական-հանդես», հ. 3, Երևան, 1958, էջ 61-62: Պետք է նշել, վերջին ժամանակներում քննարկվում է մուշկերի քարթվելական ծագում ունենալը:

Եվ վերջապես էթնիկ շարժերի մեջ ներառված ժողովուրդները կազմել են աղետից տուժած երկրների բնակչությունը և այլ տեղերից եկած քոչվոր կամ կիսաքոչվոր բարբարոս ցեղեր: Միգրացիաներն ավելի շուտ աղետի հետևանքն էին, քան պատճառը: Այս դիտարկումները ժողովուրդների գաղթին առնչվող վարկածը անբավարար է համարում բացատրելու համար մերձավոր արևելյան կարևորագույն կենտրոնների գրեթե միաժամանակյա անկումը:

Բավականին կարևոր մոտեցում է բնակլիմայական պայմանների վատթարացման տեսությունը, ըստ որի Ք. ա. 13-12-րդ դդ. մերձավորարևելյան տարբեր շրջաններում նկատվող բնակլիմայական փոփոխություններն անդրադարձել են ժողովուրդների կենսագործունեության վրա:

Այսպես Ուգարիթի անկման շրջանում (Ք. ա. 12-րդ դ.) ավերված կառույցները գտնվում էին մանր, փոշենման, բաց դեղնավուն միատարր մասնիկներից բաղկացած հողաշերտի մեջ, ինչը վկայում է խիստ տաք և չորային կլիմայի մասին, որը կարող էր երաշտ և սով առաջացրած լինել: Ի դեպ նախորդ և հաջորդ շերտերի մուգ շագանակագույն, ոչ փոշետիպ հողն էլ վկայում է խոնավ կլիմայի մասին: Նմանատիպ մոտեցում կա Միջագետքի վերաբերյալ: Ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակահատվածում Եփրատ և Տիգրիս գետերը մոտ Ք. ա. 1450 թ. շուրջ ունեցել են մակարդակի կտրուկ աճ, որը 1350-1250 թթ. հասել է բարձրակետին և ապա 1150 թ. շուրջ մակարդակի կտրուկ անկում է գրանցվել և հասել նվազագույնի: Ջրի մակարդակը կայունացել է մոտ 950 թ.: Այս փաստը կարևոր է այնքանով, որ Առաջավոր Ասիայի երկու կարևոր գետերի մակարդակի տատանումները դրանցից սնվող վիթխարի տարածաշրջանի բնակչության կենսագործունեության վրա չէր կարող բացասական չանդրադարձնալ: Միջագետքյան սեպագիր աղբյուրներն զգալի թվով տեղեկություններ են պահպանել նույն ժամանակաշրջանում տիրող սովի մասին: Իսկ Եգիպտական աղբյուրները վկայում են Փոքր Ասիայի տնտեսական ծանր կացության և այնտեղ հացահատիկի առաքումներ մասին³³¹:

Բացի այդ ուշ բրոնզի ավարտին և վաղ երկաթում արևի ակտիվության աճ էլ է գրանցվել, որը, միանգամայն սպասելի, ջերմաստիճանի խիստ բարձրացում և սով կարող էր առաջ բերել:

³³¹ Տե՛ս **Ս. Քոպան**, նշվ. աշխ., էջ 90-91:

Կլիմայական փոփոխությունները և հիմնականում կլիմայի չորացումը բխեցնում է այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են սով, բերքի կորուստ, անասունների գլխաքանակի անկում, բնակչության տեղաշարժերի աճ: Այս ամենը կարող էին ուշ բրոնզի դարի Մերձավոր Արևելքում և Էգեյան աշխարհում նպաստել հասարակական զարգացումների անկմանը: Այս մոտեցման հետ կապված միակ խնդիրն այն է, որ խնդրահարույց ժամանակաշրջանը տևել է մոտ 3 դար, սակայն այդքան երկարատև կլիմայական փոփոխության հիմանվորում դժվար է տալը³³²:

Գալով Դատավորաց գրքին Ճգնաժամն այստեղ գրեթե նույն պատկերն ունի, ինչ քննարկված մյուս շրջաններում: Նախորդ գլխի ամփոփման մեջ պարփակ ներկայացված քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքի վարընթաց և վերընթաց փոփոխությունները լիիրավ կարող են վերը նկարագրված կլիմայական, միգրացիոն, ռազմական և սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված լինեն: Մեր կարծիքով այդ գործոնները միասնաբար են ազդել, հատկապես ռազմականը և միգրացիոնը:

Այսպիսով Դատավորաց գրքում նկարագրված ընդհանուր պատմամշակութային զարգացումները ընդհանուր առմամբ դիտարկելի են վերը նկարագրված հին մերձավորարևելյան զարգացումների համատեքստում, ինչը, մեթոդական առումով, մի կողմից հնարավորություն է ընձեռում ճշտումներ մտցնել Գրքում արտացոլված իրադարձությունների թվագրության, մյուս կողմից էլ՝ դարաշրջանի առանձնահատկությունները հասկանալու տեսանկյունից:

³³² Տե՛ս **Ս. Քոչյան**, նշվ. աշխ., էջ 92:

ՎԵՐՁԱԲԱՆ

Իրականացված աշխատանքը ցույց է տալիս, որ Դատավորաց ժամանակաշրջանը, այն է ուշ բրոնզի դարի ավարտական փուլը և վաղ երկաթի դարը, առանձնանում է իբրև սոցիալ-տնտեսական, մշակութային ու քաղաքական կյանքի անկման և վերելքի յուրահատուկ մի դարաշրջան:

Մշակութային զարգացումների հետազոտությունը մասնավորաբար ցույց է տալիս, որ նյութական մշակույթում, շինարվեստում և այլ ոլորտներում նկատվող վերելքը պայմանավորվում է նաև նոր էթնիկ տարրերի տարածաշրջան ներթափացմամբ: Իսկ ահա քաղաքական կյանքի փոփոխությունները պայմանավորվում են ոչ միայն էթնիկ տարրերի ներթափանցմամբ, այլև սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործոններով:

Վերոնշյալ վայրիվերումները մենք ներկայացրեցիք որպես Ք. ա. 12-րդ դարում սկիզբ առած մերձավորարևելյան ճգնաժամի հետևանք՝ փորձելով աստվածաշնչյան իրադարձությունները ընթերցել դրա լույսի ներքո: Կրոնական կյանքում տեղի ունեցող սինկրետիզմն էլ, թերևս, բխում է միգրացիաների արդյունքում տարբեր ազգերի միմյանց հետ փոխհարաբերությունների աշխուժացման հանգամանքից:

Այս աշխատանքի արդյունքում ներկայացրեցինք անունների նոր տառադարձումներ՝ հիմնված մասորական քննական տեքստի վրա: Ի տարբերություն շատ այլ լեզուների (այդ թվում հունարենի, անգլերենի, ռուսերենի) հայերենն ի գորու է առավել ճշգրիտ տառադարձելու եբրայերեն անվանումները: Այս տեսանկյունից ակնակալում ենք, որ մեր ուսումնասիրության այդ հատվածը հաշվի կառնվի հայերեն Աստվածաշնչի նոր խմբագրություններում:

Նաև լիահույս ենք, որ մեր աշխատանքը ազդակ կծառայի Սուրբ Գրքի մյուս գրքերի համատեքստային ուսումնասիրության համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված Ա. Դատավորաց գրքում հիշատակվող քաղաքներն ու երկրները

1. Աբելմաուլա (Աբել Մեհուլահ) – Է 22
2. Ազգերի Արիսոթ (Հառուեթ (հա)Գոյիմ) – Դ 2, 13
3. Ազովտոս (Աշոդո) – Ա 18
4. Ակկարոն (Էքրոն) – Ա 18
5. Ակքով (Ակկո) – Ա 31
6. Ամովն (Ամմոն) – Գ 13
7. Ասկադոն (Աշկելոն) – Ա 18, ԺԴ 19
8. Ասովր (Խացոռ) – Դ 2, 17
9. Արադ (Առադ) – Ա 16
10. Արիմ (Առումա) – Թ 41
11. Արմավենիների քաղաք (Յերիխո) – Ա 16, Գ 13
12. Արոյեր (Առոեռ) – ԺԱ 26, 33
13. Ափեկ (Աֆիք) – Ա 31
14. Աքազիփ (Ախդիֆ) – Ա 31
15. Բաալթամար (Բաալ Տամար) – Ի 33
16. Բադակ (պետք է լինի Մեզիդոռ) – Ա 28
17. Բեզեկ (Վեզեկ) – Ա 4, 5
18. Բեթել (Բեթ-Էլ) – Ա 22, 23, Բ 1, Դ 5, Ի 18, 26, 31, ԻԱ 2, 19²
19. Բեթանաթ (Բեթ-Անաթ) – Ա 33²
20. Բեթասետա (Բեթ Շիտտա) – Է 22
21. Բեթդեհեմ (Բեթ Լեխեմ) – ԺԲ 10, ԺԷ 7, 8, 9, ԺԹ 1, 2, 18²,
22. Բեթսամյուս (Բեթ-Շեմեշ) – Ա 33²
23. Բեթսան՝ Սկյուրուպոլիս (Բեթ-Շան) – Ա 27
24. Բեթփարա (Բեթ Բառա) – Է 24²
25. Բերա (Բեեռա) – Թ 21
26. Բերսաբեե (Բեեռ Շեվա) – Ի 1
27. Գաբաա (Գիվրա) – ԺԹ 12, 13, 14, 15, 16, Ի 4, 5, 9, 10, 13, 14, 15, 19, 20, 29, 30, 31, 33, 34, 36, 37, 43

28. Գագա (Ագա) – Ա 18, Ջ 4, ԺՁ 1, 21
29. Գագեր (Գագեր) – Ա 29²
30. Գաղասաղ (Գիլղաղ)– Ժ 4, 8, 17, 18², ԺԱ 5, 7, 8², 9, 10, 11, 29², ԺԲ 4², 5, 7, Ի 1, 45, ԻԱ 8, 9, 10, 12, 14
31. Գաղգաղա (Գիլգալ)– Բ 1, Գ 19
32. Դաբիր՝ Նամակաց քաղաք (Դեվին՝ Քիոյաթ-Սեֆեր) – Ա 11², 12
33. Դալափ (Ախլավ) – Ա 31
34. Դան – ԺԸ 29, Ի 1
35. Դիտանոց (Միզպա) – Ժ 17, ԺԱ 29²
36. Դովր (Դոռ) – Ա 27, 31
37. Եգիպտոս (Միցրայիմ) – Ջ 8, 13, ԺԱ 13, 15, ԺԹ 30, Բ 12՝ եգիպտացիների երկիր
38. Եդովմ (Էդոմ) – ԺԱ 17², 18
39. Ելեբոնա (Լեվոնա) – ԻԱ 19
40. Ելփայ (Խելբա) – Ա 31
41. Եղքի (Լեխի) – ԺԵ 9
42. Եղիմ (Այալոն) – ԺԲ 12
43. Եսեբոն (Խեշբոն) – ԺԱ 19, 26
44. Եսթավոլո (Էշտավոլ) – ԺԳ 25, ԺՁ 31, ԺԸ 2, 8, 11
45. Երուսաղեմ (Յիռուշալայմ) – Ա 7, 8, 21, ԺԹ 10, ԺԹ 11՝ Հերուսացիների քաղաք
46. Եփրա (Օֆրա) – Ջ 11, 24, Ը 32, Թ 5
47. Թամնաթարես (Տիմնատ-Խեռես) – Բ 9
48. Թամնաթա (Տիմնա) – ԺԴ 1², 2, 5²,
49. Թանաք (Թանըախ) – Ա 27, Ե 19
50. Թեբես (Տեվեց) – Թ 50
51. Լայիսա (Լայիշ) – ԺԸ 7, 9, 14, 27, 29
52. Լիբանան (Լեվանոն) – Գ 3, Թ 15, ԻԱ 19
53. Լուգա՝ Բեթել (Լուգ) – Ա 23, 26
54. Ծնոտ (Լեխի) – ԺԵ 14, 19
55. Ծնոտի կոտորած (Ռամատ Լեխի) – ԺԵ 17
56. Կաղես (Քեղեշ) – Դ 9, 10, 11 ԺԱ 16, 17

57. Կամովն (Քամոն) – Ժ 5
58. Կարկար (Քարքոր)– Ը 10
59. Կարիաթ-Յարիմ (Քիռյաստ Յըառիմ) – ԺԸ 12²
60. Կեդրոն (Կիտոռն) – Ա 30
61. Հաբելի այգեստաններ (Ավել Քերամիմ՝ Խաղողի այգիների հարթավայր) – ԺԱ 33
62. Հաբիս (Յավեշ) – ԻԱ 8, 9, 10, 12, 14
63. Հայիրի ավաններ (Խավվոտ Յաիր) – Ժ 4 (32 քաղաք)
64. Հեբղամ (Յիվլեամ) – Ա 27
65. Հեբուս՝ Երուսաղեմ (Յեվուս) – ԺԹ 10, 11
66. Հոամա (Ռամա) – ԺԹ 13
67. Մակեդով (Մեգիդդո) – Ե 19
68. Մասեփա (Միցպա) – ԺԱ 11, 34, Ի 1, 3, ԻԱ 1, 2, 5², 8
69. Մարովզ քաղաք (Մեռոզ) – Ե 23
70. Միջագետք (Առամ Նահառայմ) – Գ 8
71. Մովաբ (Մոավ) – Գ 12, 14, 15, 17, 28, Ժ 6, ԺԱ 15, 17, 18⁴, 26
72. Մուրտաստան (Այալոն) – Ա 35
73. Յասսա (Յահցա) – ԺԱ 20
74. Նաբան (Նովախ) – Ը 11
75. Նաբե (Յոգբահա) – Ը 11
76. Նաալոլ (Նահալոլ) – Ա 30
77. Ռամա (Ռամա) – Դ 5
78. Ռոբ (Ռեխով) – Ա 31, ԺԸ 27 (այստեղ պետք է լինի Բեթ-Ռեխով)
79. Ռոբի հովիտ (Բեթ-Ռեխովի հովիտ) – ԺԸ 28
80. Սաղապին (Շաավլիմ) – Ա 35
81. Սամարիա (Շամիր) – Ժ 1, 2
82. Սարասա (Յոռա) – ԺԳ 25, ԺԶ 31, ԺԸ 2, 8, 11
83. Սեիր (Սեիր) – Ե 4
84. Սելով (Շիլո) – ԺԸ 31, ԻԱ 12, 19, 21²
85. Սեմենիթ (Միննիթ) – ԺԱ 33
86. Սեփաթ՝ Սատակում (Յֆաթ՝ Խոռմա) – Ա 17

87. Սեփենա (Ցաֆոն) – ԺԲ 1
88. Սիդովն (Ցիդոն) – Ա 31, ԺԸ 7, 9, 28
89. Սյուքեն (Շիսեն) – Ը 31, Թ 1, 3, 6², 20², 23², 24, 25, 26², 31, 34, 39, 41, 46, 47, 49, 57, ԻԱ 19
90. Սիրոթա (Սեիռատա) – Գ 26²
91. Սոքքոթ (Սուքքոտ) – Ը 5, 6, 8, 14², 15, 16
92. Տաբեթ (Տաբբաթ) – Է 22
93. Տովբ երկիրը (Տով) – ԺԱ 3, 5
94. Վեն (Սելա՝ վեն, Ժայո) – Ա 36
95. Փանունել (Պենունել) – Ը 8², 9, 17
96. Փարաթոն (Ֆիռատոն) – ԺԲ 15
97. Քեբրոն՝ Կարիաթարբոկ Սեփեր (Խեվոնն՝ Քիռյաթ-Առբա) – Ա 10³, 20, ԺՁ 3
98. Քեսիմ երկիր (Խիտիմ) – Ա 26

Հավելված Բ. Դատավորաց գրքում հիշատակվող գետերը, լեռները և աշխարհագրական այլ վայրերը

1. Անապատ – ԺԱ 22, Ի 42, 45, 47
2. Ազգերի անտառ (Հարոսեթ Հագոյիմ) – Դ 16
3. Ակերգեբա (Յեքեվգեեվ) – Է 25
4. Ակրաբիմի գառիվայր (Աքրաբիմ՝ կարիճներ) – Ա 36
5. Ամադեկի (Ամալեք) լեռ – ԺԲ 15
6. Աոնովն (Աոնոն) – ԺԱ 13, 18², 22
7. Արեդի (Խառոդ) աղբյուր – Է 1
8. Արեսի (Խեռես) գառիվայր – Ը 13
9. Բադիերմոն սար (Բաալ Հերմոն՝ Անտիլիբանանում) – Գ 3
10. Գաբաաթամ (Գիվըատ (հա)Մորե՝ Մորեի բլուր) – Է 1
11. Գադասադ սար (Գիլըադ լեռ) – Է 3
12. Գայաս (Գայաշ) լեռ – Բ 9
13. Գարիզին (Գերիզիմ) լեռ – Թ 7
14. Դանի բանակ (Մախանե-Դան) – ԺԳ 25, ԺԸ 12՝ Դանի բանակատեղի
15. Դիտանոցների կադնի (Էլոն Մեոնընիմ) – Թ 37
16. Եդովմի (Էդոմ) դաշտ – Ե 4

17. Ետեմի հեղեղատ (Էտամի ժայռ) – ԺԵ 8
18. Ետեմի քարայր (Էտամի ժայռ) – ԺԵ 11
19. Եփրեմի լեռ – Բ 9, Գ 27, Դ 5, Ժ 1, ԺԷ 1, 8, ԺԸ 2, 13, ԺԹ 1, 16, 18
20. Թաբոբ (Տավոն) լեռ– Դ 6, 12, 14, Ը 18
21. Թամանաթայի այգեստան (Տիմնայի խաղողի այգիներ) – ԺԴ 5
22. Լացատեղ (Բոխիս) – Բ 1, 5
23. Լաբոեմաթ (Լեվո Խամատ) – Գ 3
24. Լեռ, որը Քեբրոնի դիմաց է – ԺԶ 3
25. Ծնոտի աղբյուր (Էն (հա)Քրոնե) – ԺԵ 19
26. Կարմիր (Սուֆ) ծով – ԺԱ 16
27. Կիսոնի հեղեղատ (Քիշոն գետ) – Դ 7, 13, Ե 21²
28. Կովի կաղնի (Շիսեմում էր) – Թ 6
29. Հաբոկ գետ (Յաբբոք) – ԺԱ 13, 22
30. Հանգստացողների (Յաաննայա) կաղնի– Դ 11
31. Հեզրայելի հովիտներ (Յիեզրեելի հովիտ) – Զ 33
32. Հովասի (Յոաշ) կաղնի – Զ 11
33. Հորդանան (Յառդան) գետ – Գ 28, Ե 17, Է 24², 25, Ը 4, Ժ 8, 9, ԺԱ 13, 22, 26, ԺԲ 5, 6
34. Հուդայի անապատ (Նեզևի հս մասը) – Ա 16
35. Մադգարոթ (միդգահառոտ՝ քառատրոփ) – Ե 22
36. Մակեդոնի (Մեգիդոն) ջրեր – Ե 19
37. Մանովզ լեռ (Մաոզ) – Զ 26
38. Մուրտաստանի լեռ (Հառ Խեռես՝ Արևի լեռ) – Ա 35
39. Նու (Նուխա) – Ի 43
40. Ռեմոնի (Ռիմոն) քարայր – Ի 45, 47², ԻԱ 13
41. Սելմոն լեռ (Յելմոն) – Թ 48
42. Սյուբեմի (Շիսեմ) աշտարակ – Թ 46, 47, 49
43. Սինա (Սինայ) – Ե 5
44. Ովրեկի հեղեղատ (Սոռեքի հովիտ) – ԺԶ 4
45. Սորոբեբա (Յուրոբեվ) – Է 25
46. Վրանաբնակների ճանապարհ – Ը 11

47. Փանուելի (Պենուելի) աշտարակը – Ը 9, 17

Հավելված Գ. Դատավորաց գրքում հիշատակվող էթնիկ խմբերը

1. Այլազգիներ (փղշտացիներ) – Գ 3, 31, Ժ 6, 7, 11, ԺԳ 1, 5, ԺԴ 1, 2, 3, 4², ԺԵ 3, 4, 5, 6², 9, 10, 11, 12, 14, 20, ԺԶ 5, 8, 9, 12, 14, 18², 20, 21, 23, 27, 28, 30
2. Նաալուլ (Նահալուլի) բնակիչներ (քանաանացիներ) – Ա 30
3. Ամադեկ (Ամալեք) – Գ 13, Է 1
4. Ամադեկացիներ – Գ 13 (Ամադեկի որդիներ), Զ 3, 33, Է 12, Ժ 12
5. Ամովնացիներ կամ Ամովնի որդիներ – Գ 13, Ժ 7, 9, 11, 17, 18, ԺԱ 4, 5, 6, 8, 9, 12, 13, 14, 15, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 36, ԺԲ 1, 2, 3
6. Ամորիացիներ – Ա 34, 35, 36, Գ 5, Զ 10, Ժ 8, 11, ԺԱ 19², 22², 23
7. Ակքովի բնակիչներ (քանաանացիներ, իսկ Բ. ա. 8-7-րդ դդ. հետո նաև փյունիկեցիներ) – Ա 31
8. Ասորեստանցիներ (Առամի բնակիչներ՝ հավանաբար խուռիներ) – Գ 8, Ժ 6, ԺԸ 7, 9
9. Արևելքի որդիներ (Մովաբից արլ. բնակվող քոչվորները) – Զ 3, 33, Է 12, Ը 10
10. Ափեկի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 31
11. Աքազիփի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 31
12. Բադակի, Հերդամի բնակիչներ ու նրանց շուրջը բնակվողներ (քանաանացիներ) – Ա 27
13. Բեթանաթի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 33
14. Բեթղեհեմացիներ – ԺԲ 8
15. Բեթսամյուսի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 33²
16. Գազերի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 29
17. Գազացիներ (փղշտացիներ) – ԺԶ 2
18. Գաղաադացիներ (իսրայելացիներ Մանասեի ցեղից) – Ժ 18 (Գաղաադի ժողովուրդ), ԺԱ 1, 8, 11, ԺԲ 4 (Գաղաադի մարդիկ), 4, 5, 5 (Գաղաադի մարդիկ), 7
19. Գերգեսացիներ – Գ 5
20. Դաբիրի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 11
21. Դալափի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 31
22. Դովրի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 27, 31
23. Եզիպտացիներ – Բ 12, Զ 9, Ժ 11

24. Եդրովմայեցիներ – Ա 36
25. Ելփայի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 31
26. Ենակի զավակներ (քանաանացիներ) – Ա 10
27. Եփրայի բնակիչներ (քանաանացիներ կամ կռապաշտ հրեաներ) – Ձ 28
28. Թամնացիներ (փղշտացիներ) – ԺԵ 6
29. Իսրայելացիներ – Ա 1, 23 (Իսրայելի տոհմ), Բ 4 (Իսրայելի որդիներ), 6, 11, 14, 20, 22, Գ 1, 2, 4, 5, 7, 8, 9, 12, 14, 15, 27, Դ 1, 3, 5, 23, 24, Ձ 1, 2, 3, 6, 7, 8, Է 15, 23, Ը 28, 33, 34, Ժ 6, 7, 8², 9, 11, 15, 17, ԺԱ 4, 21, 25, 27, 33, ԺԳ 1, ԺԹ 12, 29 (Իսրայելի բոլոր ցեղերը), 30, Ի 1, 2 (Իսրայելի բոլոր ցեղերը), 3², 7, 10 (Իսրայելի բոլոր ցեղերը), 11, 12 (Իսրայելի ցեղերը), 13, 17, 18, 19, 20, 21, 22 (Իսրայելի մարդիկ), 23, 24, 26, 28, 29, 30, 31, 32, 33², 35², 36², 38, 39², 41, 42², 48 (Իսրայելի մարդիկ), ԻԱ 1, 5, 5 (Իսրայելի բոլոր ցեղերը), 6, 8 (Իսրայելի ցեղերը), 14², 15 (Իսրայելի ցեղերը), 18, 24
30. Խնացիներ – Գ 3, 5
31. Կեդրոնի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 30
32. Կինեցիներ – Ա 16 (Կինեցի Հոբաբայի որդիներ), Դ 11, 17, 24
33. Հեբուսացիներ – Ա 21², Գ 5, ԺԹ 11
34. Հովբաբի որդի Կինեի որդիները (մադիանացիներ կամ կինեցիներ) – Դ 11
35. Հովիտների բնակիչներ (փղշտացիներ) – Ա 19
36. Մադիանացիներ – Ձ 1, 2², 3, 6, 7, 11, 13, 14, 16, 33, Է 2, 7, 12, 14, 15, 22, 24, 25², Ը 1, 3, 5, 12, 22, 26, 28, Թ 17
37. Մարոզի բնակիչներ (իսրայելացիներ) – Ե 23
38. Մովաբացիներ (մոավացիներ)– Գ 28, 29,30, Ժ 11
39. Ռոբի բնակիչներ (քանաանացիներ) – Ա 31
40. Սարաացիներ (ընդհանրապես փղշտացիներ են, բայց այստեղ խոսվում է Դանի ցեղից մարդու մասին) – ԺԳ 2
41. Սիդովմացիներ – Գ 3, Ա 31 (Սիդոնի բնակիչներ), Ժ 12, ԺԸ 7, 9
42. Սյուբեմացիներ – Թ 2, 3 (Սյուբեմի մարդիկ), 7, 18, 20², 23², 24, 25, 26, 39, 57
43. Սքքոթի մարդիկ (Մանասեի արլ ցեղից) – Ը 5, 8, 14, 16
44. Փանուելի մարդիկ (Մանասեի արլ ցեղից) – Ը 8, 9
45. Փարաթոնացիներ (Եփրեմի ցեղից) – ԺԲ 13, 15

- 46. Փերեզացիներ – Ա 4, 5, Գ 5
- 47. Քանաանացիներ – Ա 1, 3, 4, 5, 9, 10, 17, 28, 29², 30, 32, Գ 1, 3, 5, Դ 2, 23, 24, Ժ 12
(հարավում և դաշտավայրում բնակվող քանաանացիներ – Ա 9, Գազերում բնակվող քանաանացիներ – Ա 29), ԻԱ 12
- 48. Քեոացիներ (Նոր իսթական կայսրության բնակիչ իսթերը) – Գ

Հավելված Դ. Դատավորաց գրքում հիշատակվող աստվածությունները

- 1. Ամնոնացիների աստվածներ – Ժ 6 (*Միլկոմ* կամ *Մեդքոմ*)
- 2. Այլազգիների աստվածներ – Ժ 6 (եբր.՝ *Տելիշտիմի՛*՝ *փղշտացիների* աստվածներ՝ Դագոնը, Բաալը, Աստարտը և ուրիշներ)
- 3. Աստարտներ – Բ 13 (եբր.՝ *աշտարոտ*)
- 4. Աստարոթ – Ժ 6 (եբր.՝ *աշտարոտ*)
- 5. Ասորեստանցիների աստվածներ – Ժ 6 (*Արամի* (Միջագետքի հյուսիսում) աստվածներ)
- 6. Անտաններ – Գ 7 (եբր.՝ *աշերոտ*՝ ծառեր), Զ 25 (եբր.՝ *աշերա*՝ ծառ), 26 (եբր.՝ *աշերա*), 28 (եբր.՝ *աշերա*), 30 (եբր.՝ *աշերա*)
- 7. Բահադ – (եբր.՝ Բաալ կամ դրա հոլովված ձևերով) Բ 11, 13, Գ 7, Զ 25, 28, 30, 31, 32, Ը 33, Ժ 6, 10
- 8. Բահադ Բերիթ – Ը 33, Թ 4, 46 (Բաալ Բերիթ՝ *Ուխտի Տեր*)
- 9. Բելիար – Ի 13 (եբր.՝ *veliyaal՝ անպետք, անարժան մարդիկ*, հուն. LXX A՝ *Բելիալ* (*հատուկ անուն*), LXX B՝ *παρανομων՝ օրինախախտներ*)
- 10. Դագովն – ԺԶ 23 (Այլազգիների՝ *փղշտացիների* գլխավոր աստվածությունը)
- 11. Ելովա – Ե 5 MT-ի մեջ *տետրագրամատոնն* է, LXX A-ում *կյուրիոս* է, իսկ LXX B-ում *էլոի* (տրական հոլովով դրված), մեր կիրառած հրատարակության Ելովա տարբերակը ամենայն հավանականությամբ կրում է այս վերջինի ազդեցությունը:
- 12. Մովաբի աստվածներ – Ժ 6 (*Քամոսը* և ուրիշները)
- 13. Միդոնի աստվածներ – Ժ 6 (*Աստարտը* և ուրիշները)
- 14. Քամոս – ԺԱ 24 (*Մովաբացիների* գլխավոր աստվածը)

Հավելված Ե. Դասավորաց գրքում հիշատակվող Իսրայելի ցեղերը

1. Իսրայել (Յիսուաել) – Ա 23, 28, Բ 1 (Իսրայելի սուն), 4, 7, 10, Գ 10, 12, 27, 30, 31, Դ 4, 6, Ե 2, 3, 5, 7², 8, 9, 11, Ջ 2, 4, 5, 6, 8, 14, 15, 36, 37, Է 2, 8, Ը 34, Թ 22, Ժ 1, 2, 3, 16, ԺԱ 5, 13, 15, 16, 17², 19, 20², 21, 22, 25², 26, 39, 40, ԺԲ 7, 8, 9, 11, 13, 14, ԺԳ 13, ԺԴ 4, ԺԵ 20, ԺԶ 31, ԺԷ 6, 13, ԺԸ 1, 19, ԺԹ 1, 30, Ի 2, 6², 10², 12, 13, 22, 34, 48, ԻԱ 3³, 5, 6, 8, 15, 17, 24
1. Ռուբեն (Ռբուվեն) – Ե 15, 16
2. Շմալոն (Շիմրոն) – Ա 3², 17
3. Ղևի (Լեվի) – ԺԷ 7, 9, 11, 12, 13, ԺԸ 3, 15, ԺԹ 1, Ի 4
4. Հուդա (Յրհուդա) – Ա 2, 3, 4, 8, 9, 10, 16, 17, 18, 19², Ժ 9, ԺԵ 9, 10, 11, ԺԷ 7², 8, 9, ԺԸ 12, ԺԹ 1, 2, 18², 19
5. Դան (Դան) – Ա 34, Ե 17, ԺԳ 2, 25, ԺԸ 1, 2, 11, 12, 16, 22, 23, 26, 30, Ի 1
6. Նեփթալիմ (Նաֆտալի) – Ա 33², Դ 6, 10, Ե 18, Ջ 35, Է 23
7. Գադ (Գադ) – Ե 17
8. Ասեր (Աշեր) – Ա 31, 32, Ե 17, Ջ 35, Է 23
9. Իսաքար (Յիսասալսա) – Ե 15, Ժ 1
10. Զաբուլոն (Զեվուլոն) – Ա 30, Դ 6, 10, Ե 14, 18, Ջ 35, ԺԲ 11, 12²
11. Հովսեփ (Յոսեֆ) – Ա 22, 35
 - 1) Մանասե (Մընասսե) – Ա 27, Ջ 15, 35, , Է 23, Ը 2, ԺԲ 4
 - Մաքիթ (Մախիթ) – Ե 14
 - Արիեզերի (Հաեզրի) սոհմ – Ջ 11
 - 2) Եփրեմ (Էֆրայիմ) – Ա 29², Բ 9, Գ 27, Դ 5, Ե 14, Է 24², Ը 1, 2, Ժ 1, 9, ԺԲ 1, 4⁵, 5³, 6, 15
ԺԷ 1, 8, ԺԸ 2, 13, ԺԹ 1, 16, 18
12. Բենիամին (Բինյամին) – Ա 21², Ե 14, Ժ 9, ԺԹ 14, 16, Ի 2, 4, 10, 12, 13, 14, 15, 17, 18, 20, 21, 23, 24, 25, 28, 30, 31, 32, 34, 35², 36, 39, 40, 41, 43, 44, 45, 46, 48, ԻԱ 1, 6, 13,14, 15, 16, 17, 18, 20, 21, 23

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սուրբ Գրքեր

1. *Աստվածաշունչ Մատյան Հին և Նոր Կտակարանների*, Արևելահայերեն նոր խմբագրություն, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017 :
2. *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց*, ըստ Ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւաստարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ, համեմատութեամբ այլևայլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբք բնաբանին, Յաշխատասիրութենէ տեառն **Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի**, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ րաբունապետի և առաջին աբբայի, ի Վենետիկ, 1805:
3. *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց*, Հայաստանի Աստուածաշնչային Ընկերություն, 1997:
4. *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների*, եբրայական եւ յունական բնագրերից թարգմանուած, վերատպում 1896 թվականի արեւելահայերէն «Արարատ» հրատարակութիւնից, BibleLeague International, Երևան, 2016:
5. *Գիրք Աստուածաշունչը Հին եւ Նոր Կտակարանաց*, ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց եւ յոյն բնագրաց, **Հ. Արսէն Բագրատունի**, ի Վենետիկ, 1860:
6. *Biblia Hebraica Stuttgartensia*, **Elliger K. et Rudolph W. (ed.)**, Deutsche Biblestiftung Stuttgart, 1996.
7. *Nova Vulgata*, *Biblorum sacrorum editio*, Libreria Editrice Vaticana, Vaticano, 1998.
8. *Septuaginta*, **Rahlfs A. (ed.)**, *Id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes*, Editio minor, Duo volumina in uno, Deutche Bibelgesellschaft Stuttgart, 1979.

Ուսումնասիրություններ

9. **Ազնաուրեան Զ. արք.**, *Աստվածաշունչին վերաբերեալ ուսումնասիրութիւններ*, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2007:
10. **Եղիայեան Բ.**, *Քննական Պատմութիւն Սուրբգրական Ժամանակներու*, Գիրք Ա, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1972:

11. Երեմյան Ս. Տ., *Հայերի ցեղային միությունը Արևե-Շուպրիա երկրում*, «Պատմաբանասիրական-հանդես», հ. 3, Երևան, 1958:
12. Տեր-Միքելեան Ա., *Ուսումն Սուրբ Գրոց*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Էջմիածին, 2016:
13. Քիններ Շ., *Սասիածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան*, Հայաստանի Ավետարանչական Ընկերակցություն, Երևան, 2004:
14. Քոսյան Ա., *Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը*, «Զանգակ-97», Երևան, 1999:
15. Александрова Н. В., Ладынин И. А., Немировский А. А., Яковлев В. М., *Древний Восток*, Астрель, Москва, 2008.
16. Апати Э., *Палестина до древних евреев*, «Центрполиграф», Москва, 2007.
17. Власова Т. В., *Физическая география материков (с прилегающими частями океанов)*, в 2 частях, ч. 1. Евразия, Северная Америка, «Просвещение», Москва, 1986.
18. Кузицин В. И. (ред.), *История Древнего Востока*, «Высшая школа», Москва, 2003.
19. Мангано М., *Введение в Ветхий Завет*, «Духовная Академия Апостола Павла», Москва, 2007.
20. Рак И. В., *Мифы Древнего Египта*, «Петро-РИФ», Санкт-Петербург, 1993.
21. Сорокин А. (Протоиерей), *Введение в Священное Писание Ветхого Завета*, «Церковь и Культура», Санкт-Петербург, 2002.
22. Ценгер Э., *Введение в Ветхий Завет*, Библиейско-богословский институт св. апостола Андрея, Москва, 2008.
23. Янг Э., *Введение в Ветхий Завет*, Заокская духовная академия, Издательский отдел, Заокский, 1998.
24. Abegg M., Jr., Flint P., Ulrich E., *The Dead Sea Scrolls Bible, The Oldest Known Bible Translated for the First Time into English*, HarperSanFrancisco, New York, 1999.
25. Arnold B. T., Strawn B. A., *The World Around the Old Testament*, Baker Academic, Grand Rapids, Michigan, 2016.
26. Bandstra B. L., *Reading the Old Testament. Introduction to the Hebrew Bible*, 4th edition, Wadsworth, Cengage Learning, Belmont, USA, 2009.
27. Barton J., *The Biblical World*, Vol. 2, Routledge, Taylor & Francis Group, London, New York, 2004.

28. **Brettler M. Z.**, *The Book of Judges*, Routledge, Taylor & Francis Group, London, New York, 2005.
29. **Brueggemann W., Linafelt T.**, *An Introduction to the Old Testament*, 2nd edition, Westminster John Knox Press, Louisville, Kentucky, 2012.
30. **Carr D. M.**, *An introduction to the Old Testament: sacred texts and imperial contexts of the Hebrew Bible*, Wiley-Blackwell, John Wiley & Sons Ltd, The Atrium, Southern Gate, Chichester, West Sussex, UK, 2010.
31. **Cline E. H.**, *1177 B.C.: The Year Civilization Collapsed*, Princeton University Press, USA, 2014.
32. **Cline E. H., Leonard, A., Jr.**, *The Aegean Pottery at Megiddo: An Appraisal and Reanalysis*, in "Bulletin of the American Schools of Oriental Research", No. 309, Feb., 1998.
33. **Drews R.**, *The End of the Bronze Age: Changes in Warfare and the Catastrophe Ca. 1200 B. C.*, Princeton University Press, New Jersey, 1995.
34. **Kenyon K. M.**, *Amorites and Canaanites*, The Schweich Lectures, OUP/British Academy, New York, 1966.
35. **LaSor W. S., Hubbard D. A., Bush F. W.**, *Old Testament Survey. The Message, Form and Background of the Old Testament*, 2nd edition, Wm. B. Eerdmans Publishing Co., Grand Rapids, Michigan, Cambridge, 1996.
36. **Longman T. III, Dillard R. B.**, *An Introduction to the Old Testament*, Zondervan, Grand Rapids, Michigan, 2009.
37. **Merrill E. H., Rooker M. F., Grisanti M. A.**, *The World and the Word: An Introduction to the Old Testament*, B&H Academic, Nashville, Tennessee, 2011.
38. **Moore Rev. G. F., D. D.**, *A Critical and Exegetical Commentary on Judges*, 2nd edition, T & T Clark, Edinburgh, 1908.
39. **O'Connell R. H.**, *The Rhetoric of the Book of Judges*, E.J. Brill, Leiden, New York, Köln, 1996.
40. **O'Connor D., Quirke S. (ed.)**, *Mysterious Lands: Encounters with Ancient Egypt*, UCL Press, London, 2003.
41. **Paget J. C. and Schaper J. (ed.)**, *The New Cambridge History of The Bible, Vol. 1, From the Beginings to 600*, Cambridge University Press, New York, 2013.
42. **Peterson J.**, *Godlists from Old Babilonian Nippur in the University Museum, Philadelphia*, Ugarit-Verlag, Münster, 2009.

43. **Pope M. H.**, *El in the Ugaritic Texts*, E.J. Brill, Leiden, 1955.
44. **Raphael S. K.**, *Climate and Political Climate: Environmental Disasters in the Medieval Levant*, Brill, Leiden, Boston, 2013.
45. **Rogerson J., Davies P. R.**, *The Old Testament World*, T&T Clark International, London, New York, 2007.
46. **Walton J. H.**, *Ancient Near East Thought and the Old Testament: Introducing the Conceptual World of the Hebrew Bible*, Baker Academic, Grand Rapids, Michigan, 2006.
47. **Walton J. H., Matthews V. H. and Chavalas M. W.**, *The IVP Bible Background Commentary, Old Testament*, InterVarsity Press, Downers Grove, Illinois, 2000.
48. **Webb B. G.**, *Book of the Judges: An integrated reading*, JSOT Press, Sheffield, 1987.
49. **Wright G. E.**, *Biblical Archaeology*, 8th printing, The Westminster Press, Philadelphia, 1976.

Բարարաններ և հանրագիտարաններ

50. **Arnold B. T. and Williamson H. G. M. (ed.)**, *Dictionary of the Old Testament Historical Books*, InterVarsity Press, Downers Grove, Illinois, 2005.
51. **Bromiley G. W. (ed.)**, *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, vol. 1, Wm. B. Eerdmans Publishing Co., Grand Rapids, Michigan, 1979.
52. **Bromiley G. W. (ed.)**, *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, vol. 2, Wm. B. Eerdmans Publishing Co., Grand Rapids, Michigan, 1982.
53. **Bromiley G. W. (ed.)**, *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, vol. 3, Wm. B. Eerdmans Publishing Co., Grand Rapids, Michigan, 1986.
54. **Bromiley G. W. (ed.)**, *The International Standard Bible Encyclopedia*, In four volumes, vol. 4, Wm. B. Eerdmans Publishing Co., Grand Rapids, Michigan, 1988.
55. **Buttrick G. A. (ed.)**, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 1, 22nd printing, Abingdon Press, Nashville, 1996.
56. **Buttrick G. A. (ed.)**, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 2, 20th printing, Abingdon Press, Nashville, 1993.
57. **Buttrick G. A. (ed.)**, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 3, 19th printing, Abingdon Press, Nashville, 1992.

58. **Buttrick G. A. (ed.)**, *The interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, 20th printing, Abingdon Press, Nashville, 1993.
59. **Evans C. A., Porter S. E. (ed.)**, *Dictionary of New Testament Background: a compendium of contemporary biblical scholarship*, InterVarsity Press, Downers Grove, Illinois/Leicester, England, 2000.
60. **Freedman D. N. (ed.)**, *The Anchor Bible Dictionary*, Vol. 1, Doubleday, New York, 1992.
61. **Freedman D. N. (ed.)**, *The Anchor Bible Dictionary*, Vol. 2, Doubleday, New York, 1992.
62. **Freedman D. N. (ed.)**, *The Anchor Bible Dictionary*, Vol. 3, Doubleday, New York, 1992.
63. **Freedman D. N. (ed.)**, *The Anchor Bible Dictionary*, Vol. 4, Doubleday, New York, 1992.
64. **Freedman D. N. (ed.)**, *The Anchor Bible Dictionary*, Vol. 5, Doubleday, New York, 1992.
65. **Kittel G. and Friedrich G. (ed.)**, *Theological Dictionary of the New Testament*, Abridged in one volume, Wm. B. Eerdmans Publishing Company, Grand Rapids, Michigan, 2000.

Համացանցային աղբյուրներ

66. «Азбука Веры» <https://azbyka.ru>
67. Электронная еврейская энциклопедия - <http://eleven.co.il>
68. BibleGateway - <https://biblegateway.com>
69. Bible Hub - <http://biblehub.com>